«ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՈՎՎԿ

ԵՐԵՎԱՆԻ Մ. ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

Երևան – 2019

ՆԱԽԱԲԱՆ

Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանի (այսուհետ՝ ԵՊԲՀ կամ համալսարան) ինստիտուցիոնալ հավատարմագրումն իրականացվել է ԵՊԲՀ-ի ներկայացրած դիմումի համաձայն:

Հավատարմագրման գործընթացը կազմակերպել և համակարգել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամը (այսուհետ՝ ՈԱԱԿ)՝ առաջնորդվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով և 2011 թվականի հունիսի 30-ին հաստատված «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» N 959–Ն որոշմամբ:

Փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգի» պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը, որը բաղկացած էր 3 տեղացի և երկու միջազգային (1 Հնդկաստանից և 1 Ղազախստանից ժամանած) փորձագետներից:

Ինստիտուցիոնալ հավատարմագրումը միտված է ոչ միայն որակի ապահովման արտաքին գնահատմանը, այլև հաստատության կառավարման և կրթական ծրագրերի որակի շարունակական բարելավմանը: Հետևաբար, տեղացի և միջազգային փորձագետների առջև դրված էր երկու խնդիր.

1) իրականացնել ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննություն՝ ՀՀ պետական հավատարմագրման չափանիշներին համապատասխան,

2) որակի բարելավման նպատակով՝ իրականացնել փորձագիտական գնահատում՝ միջազգային զարգացումներին և Բժշկական կրթության համաշխարհային ֆեդերացիայի չափանիշներին (WFME) համապատասխանելու տեսանկյունից:

Սույն զեկույցը պարունակում է ԵՊԲՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների փորձագիտական գնահատման արդյունքները՝ ըստ ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշների և բժշկական կրթության միջազգային չափանիշներին համապատասխանելու տեսանկյունից:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ 4
ԳՈՐԾԸՆԿԵՐԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻՆ ՄՈՒՀ-Ի ԻՆՏԵԳՐՎԵԼՈՒ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ 10
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 15
ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ 15
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ 15
ԳՆԱՀԱՏՈՒՄ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 19
ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 19
I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐ 21
III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ 32
IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐ 40
V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄ 45
VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ 50
VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ 55
VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ 61
IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ 64
ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 75
ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ 76
ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ 77
ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ 80
ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ 83
ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ 84
ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ 85

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀՀ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

ԵՊԲՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգի» պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը[1]: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Գնահատում իրականացնելիս փորձագիտական խումբը հաշվի է առել, որ «Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանը կրթական, գիտական և կլինիկական ուղղվածության բարձրագույն ուսումնական հաստատություն է, որի հիմնական առաքելությունն առողջապահության ոլորտի որակյալ կադրերի պատրաստումն է՝ միտված հանրության առողջության պահպանմանը, ամրապնդմանը և բարելավմանը»:

ԵՊԲՀ-ն 2015 թվականին անցել է ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթաց, որի արդյունքում համալսարանին շնորհվել է հավատարմագրում 4 տարի ժամկետով: ԵՊԲՀ-ն կազմել է թերությունների վերացման ծրագիր փորձագիտական զեկույցում առկա խորհրդատվությունների հիման վրա: 2017 թվականին ԵՊԲՀ-ն ՈԱԱԿ-ին է ներկայացրել վերհանված խնդիրների լուծմանն ու գործընթացների բարելավմանն ուղղված գործողությունների ծրագրի կատարողականի միջնաժամկետ վերլուծություն: ՈԱԱԿ-ի կողմից իրականացվել է թերությունների վերացման ծրագրի միջնաժամկետ մշտադիտարկումներ 2017 և 2019 թվականներին:

ԵՊԲՀ-ն նախորդ հավատարմագրման փորձագիտական զեկույցի հիման վրա բարեփոխել է ռազմավարական ծրագիրը /ՌԾ/: Համալսարանի գործող 2015-2020թթ. ռազմավարական ծրագիրը հստակեցնում է ԵՊԲՀ-ի տեսլականը, նրա գործունեության ռազմավարական նպատակները և դրանց հասնելու կոնկրետ գործողությունները: Համալսարանի ներքին շահակիցների կարիքները արտացոլված են ռազմավարական ծրագրում, իսկ արտաքին շահակիցների մասնակցությունը ակտիվ չի եղել, չնայած որ նախորդ հավատարմագրման փորձագիտական խմբի կողմից նույնպես շեշտադրվել էր արտաքին շահակիցների հետ համագործակցության ակտիվացման անհրաժեշտությունը: Նոր ՌԾ-ով ԵՊԲՀ-ի կողմից միջազգայնացումը սահմանված է որպես գործունեության առաջնահերթություն, սակայն արտերկրի գործատուների և միջազգային այլ շահակիցների հետ համագործակցությունը և նրանց հետ փոխհարաբերությունների կառավարումը կանոնակարգված չէ և իրականացվում է բժշկական ասոցիացիաների միջոցով:

Ռազմավարական ծրագրի իրականացման գործողությունների պլանում ակնկալվող վերջնարդյունքները հստակ և չափելի ձևակերպված չեն, դրանց հասնելու ժամկետներ և գնահատման հստակ մեխանիզմներ սահմանված չեն: Որպես հետևանք՝ համալսարանի առաքելության ու ռազմավարական նպատակների իրականացման քանակական և որակական գնահատում չի կատարվում, ինչը նվազեցնում է ՌԾ-ի իրականացման արդյունավետությունը: Հարկ է նշել, որ նախորդ հավատարմագրման գործընթացի փորձագիտական խմբի կողմից ևս շեշտադրվել էր որակի ցուցիչների կարևորությունը ըստ ՌԾ նպատակների, ինչը ԵՊԲՀ-ն պետք է հաշվի առնի առաջիկա տարիներին:

---

[1] ՀԱՎԵԼՎԱԾ 1: ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐԸ

Միևնույն ժամանակ ԵՊԲՀ-ի ֆինանսական պլանավորումը դեռևս չի կատարվում ռազմավարական առաջնահերթություններից ելնելով, և ըստ կոնկրետ ռազմավարական նպատակների ռեսուրսներ չեն հատկացվում:

Դրական է, որ 2015-ից սկսած, հաշվի առնելով նաև հավատարմագրման նախորդ գործընթացում ստացված խորհրդատվությունները, կատարվել են աշխատանքներ կառավարման համակարգի բարեփոխման ուղղությամբ (ռազմավարական ծրագրի վերանայում, կառուցվածքային փոփոխություններ՝ կարիերայի բաժնի ստեղծում և այլն): ԵՊԲՀ-ում ընթացքի մեջ են նաև ստորաբաժանումների գործունեության կանոնակարգերի մշակումը, ամբիոնների վերամիավորումները և պաշտոնների անձնագրերի հաստատման գործընթացները: Համալսարանում աշխատանքներ են տարվել գործող կառուցվածքային ստորաբաժանումների ֆունկցիոնալ նշանակության և ռազմավարական ծրագրի նպատակներին համահունչության ապահովման տեսանկյունից:

Փորձագիտական խումբը կարևորում է ԵՊԲՀ-ում տվյալների հավաքագրման մեխանիզմների բարելավումը: Ներկայում, հավաքագրված տեղեկատվությունը չի ծառայում կառավարչական որոշումների կայացման համար և չի ծածկում համալսարանի բոլոր ոլորտները: Հստակ չեն նաև հավաքագրված տեղեկատվության հետագա կիրառման ուղիները, քանի որ դրանք իրականացվում են հիմնականում ըստ անհրաժեշտության՝ առանց շահակիցների հետ հետադարձ կապի ապահովման: Դեռևս առկա չեն հստակ ցուցիչներ, որոնք թույլ կտան ախտորոշել արտաքին գործոնների ազդեցությունը համալսարանի գործունեության բոլոր ոլորտների վրա, ինչը նույնպես շեշտադրվել էր նախորդ հավատարմագրման գործընթացի փորձագիտական խմբի կողմից, ինչը ԵՊԲՀ-ն պետք է կարևորի առաջիկա տարիներին:

ԵՊԲՀ-ում իրականացվում են «Բուժական գործ» մասնագիտության, «Ստոմատոլոգիա» մասնագիտության անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրերը, «Ֆարմացիա» մասնագիտության բակալավրական և մագիստրոսական կրթական ծրագրերը: ԵՊԲՀ-ում գործում է Հանրային առողջության ֆակուլտետը, որում իրականացվող մագիստրոսական ծրագրերի /Առողջապահության կազմակերպում և կառավարում, Բիզնես վարչարարություն, Բուժհաստատությունների կառավարում/ շրջանավարտներին շնորհվում են երկու տարբեր որակավորում՝ հանրային առողջապահության մագիստրոս և բիզնես վարչարարության մագիստրոս: ԵՊԲՀ-ում գործում է նաև Ռազմաբժշկության ֆակուլտետ, որտեղ «Բուժական գործ զինված ուժերում» կրթական ծրագրի շրջանակներում պատրաստում են բժիշկներ ՀՀ զինված ուժերի համար: ԵՊԲՀ-ի ՄԿԾ-ները համահունչ են համալսարանի առաքելությանը այն առումով, որ համալսարանը պատրաստում է մասնագետներ, որոնք բավարարում են առողջապահության ոլորտի աշխատաշուկայի պահանջներին:

Շնորհվող որակավորումների արժանահավատության ցուցադրման նպատակով նոր մասնագիտության կրթական ծրագրերի մշակման ժամանակ ԵՊԲՀ-ն կիրառել է միջազգային փորձից հայտնի հատուկ գործիք՝ համապատասխանության մատրիցա, որի միջոցով վերլուծվել է ծրագրերի ակնկալվող վերջնարդյունքների համապատասխանությունը ՈԱՇ-ի 6-րդ և 7-րդ մակարդակների բնութագրիչներին:

Նախորդ հավատարմագրման արդյունքում տրված խորհրդատվությունների հիման վրա իրականացվել է համեմատական վերլուծություն. համեմատվել են ավելի քան 25 երկրի առաջավոր փորձը, ինչպես նաև համեմատվել են WFME և եվրոդիրեկտիվի չափորոշիչները, կատարվել են փոփոխություններ ուսումնական պլաններում և վերանայվել են կրթական ծրագրերը: Սակայն հարկ է նշել, որ վերը նշված չափորոշիչների պահանջներում կան բազմաթիվ այլ ոլորտներ, մասնավորապես. առողջապահության ոլորտի շահակիցների կարիքների առավել թիրախային հաշվի առնում ՄԿԾ վերջնարդյունքներում, ուսանողների մոտ պատասխանատվություն,

վերլուծական և հետազոտական կարողություններ ձևավորող հանձնարարականների կիրառում, տվյալների վրա հիմնված կրթության իրականացում, գնահատման համակարգի բարելավում MiniCEX և OSCE տարբերակված քննությունների, անհատական պորտֆոլիոյի կիրառմամբ և այլն, որոնց համալսարանը չի անդրադարձել համեմատական վերլուծության ժամանակ:

Դրական է, որ նախորդ հավատարմագրման փորձագիտական խորհրդատվությունների հիման վրա ԵՊԲՀ-ն իրականացրել է գնահատման ձևերի բազմազանեցում և կարևորում է գործնական հմտությունների գնահատումը, սակայն բազմաբաղադրիչ գնահատման քաղաքականությունը դեռևս մի քանի ամբիոններում է կիրառվում: Գնահատման բազմաբաղադրիչ համակարգի լիարժեք ներդրումը կնպաստի ուսանողների մոտ վերլուծական և հետազոտական հմտությունների և գործնական կարողությունների ամրապնդմանը: Հարկ է նաև նշել, որ միջազգային չափանիշներում առավել կարևորվում է ուսանողների ընթացիկ ու ամփոփիչ գնահատման մեթոդների կիրառումը. տեղում անցկացվող աշխատանքի հիման վրա գնահատում, ուսանողի պորտֆոլիո, ինչպես նաև տարբեր ցիկլերի ժամանակ ուսանողների կողմից ձեռքբերված հմտությունների վերահսկում և մշտադիտարկումներ, որոնք համալսարանում դեռևս ամբողջական չեն իրականացվում, ինչն էլ խոչընդոտում է ուսանողների մոտ պրակտիկ հմտությունների լիարժեք ձեռքբերմանը:

Դրական է, որ ԵՊԲՀ-ում նախորդ հավատարմագրման արդյունքներից ելնելով՝ մշակվել են մասնագիտական կրթական ծրագրերն իրականացնելու համար անհրաժեշտ որակավորում ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ անձնակազմի ընտրության քաղաքականություն և ընթացակարգեր: ԵՊԲՀ-ն ունի բարձր որակավորում ունեցող դասախոսական և վարչական անձնակազմ, որն ունակ է հաջողությամբ կյանքի կոչել սահմանված առաքելությունը և ռազմավարական նպատակները: Դրական է նաև, որ ԵՊԲՀ-ի դասախոսական կազմում իրենց գործունեությունն են ծավալում ՀՀ առողջապահության ոլորտի խնդիրներին քաջածանոթ մասնագետներ: Պրոֆեսորադասախոսական անձնակազմի ընտրության քաղաքականությունը, այնուամենայնիվ, չի ապահովում բավարար քանակությամբ բարձր որակավորում ունեցող կենսաբժշկական գիտաշխատողների ներգրավում, ինչը կարևորվում է բժշկական կրթության միջազգային չափանիշներում (WFME): Թեև ԵՊԲՀ-ում իրականացվում են միջոցառումներ դասավանդողների կարողությունների կատարելագործման ուղղությամբ, այդուհանդերձ դրանք հիմնված են անհատական նախաձեռնությունների վրա, ինչպես նաև չկան դասախոսների կատարելագործման հստակ ցուցանիշներ, ինչն էլ խոչընդոտում է դասավանդողների շարունակական զարգացմանը և միջազգային շարժունությանը: Հարկ է նշել նաև, որ դասախոսների մասնագիտական զարգացման հստակ քաղաքականության իրականացումը նույնպես շեշտադրվել է նախորդ հավատարմագրման գործընթացի փորձագիտական խմբի կողմից, ինչին համալսարանը պետք է ուշադրություն դարձնի առաջիկա տարիներին:

Ընդհանուր առմամբ, ԵՊԲՀ-ում առկա նյութական, ֆինանսական և մարդկային ռեսուրսները, դրանց կառավարումը, համալսարանի շենքերի, համալսարանական հիվանդանոցների տեղակայումը, բավարար և նպաստավոր պայմաններ են ստեղծում ԵՊԲՀ-ի առաքելության, ռազմավարական նպատակների իրականացման համար: Դրական է, որ համալսարանն աշխատանքներ է տարել նախորդ հավատարմագրման խորհրդատվությունների ուղղությամբ: Մասնավորապես, համալսարանը մշակել է ընթացակարգեր և սկսել է իրականացնել ռեսուրսային բազայով բավարարվածության վերաբերյալ պարբերական հարցումներ, այնուամենայնիվ, վերլուծությունները, բարելավումների պլանավորումը և հետագա վերահսկողությունը կանոնակարգման կարիք ունեն: Դրական է այն փաստը, որ համալսարանը կարևորում է ուսանողների պրակտիկ հմտությունների բարելավման նպատակով Միքայելյան վիրաբուժական

կենտրոնի ձեռքբերումը, Ստոմատալոգիական ուսուցման գերազանցության կենտրոնի ստեղծումը և սիմուլյացիոն կենտրոնների թվաքանակի ավելացումը: Սակայն, վերանայման կարիք ունի նաև սիմուլյացիոն կենտրոնների ծանրաբեռնվածության պլանավորման համակարգը և դրանցում կազմակերպվող դասընթացներին 1 ուսանողին բաժին ընկնող ՊԴ անձնակազմի թվաքանակը: Հարկ է նշել, որ չի կատարվել ստորաբաժանումների կարիքների գնահատում՝ ֆինանսական ռեսուրսների բաշխման համար, ինչը շեշտադրվել է նաև նախորդ հավատարմագրման գործընթացի փորձագիտական խմբի կողմից:

ԵՊԲՀ-ում գործում են ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության իրականացման մեխանիզմներ. ՀՀ քաղաքացիների համար գործընթացները կանոնակարգվում են ՀՀ օրենսդրությամբ և համալսարանի ներքին իրավական ակտերով, իսկ օտարերկրացի ուսանողների ընդունելության դեպքում՝ միայն համալսարանի ներքին իրավական ակտերով: Կիրառվող մեխանիզմները նպաստում են տեղեկատվության տարածմանը, տարբեր երկրներից դիմորդների ներգրավվմանը և ընդունելության արդյունավետ կազմակերպմանը: Փորձագիտական խումբը դրական է համարում ԵՊԲՀ-ի կողմից ուսանողների կրթական կարիքների վերհանման որդեգրած քաղաքականությունը: Ուսանողները հնարավորություն ունեն իրենց կրթական կարիքների մասին բարձրաձայնել ինչպես ռեկտորի, այնպես էլ պրոռեկտորների, դեկանների, ամբիոնների վարիչների հետ պարբերական հանդիպումների ժամանակ: Այս հանդիպումները նպաստում են ուսանողների կարիքների և առկա խնդիրների դուրսբերմանը և լուծումների պլանավորմանը: Փորձագիտական խումբը լավ փորձ է դիտարկում ԵՊԲՀ-ում գործող Իրավաբանական կլինիկայի առկայությունը, որը զբաղվում է ուսանողների բողոքների քննմամբ, ինչն էլ նպաստում է ուսանողների մոտ առաջացած խնդիրների հիմնավոր և անաչառ ուսումնասիրությանը և օրենքի սահմաններում դրանց լուծմանը: Համալսարանի կառավարման կառուցվածքում Իրավաբանական կլինիկայի ներառումը և գործունեության կանոնակարգումը կնպաստեն ենթակառուցվածքի առավել համակարգված աշխատանքին: Թեև ԵՊԲՀ-ն որդեգրել է քաղաքականություն ուսանողներին հետազոտական աշխատանքներում ներգրավելու համար, սակայն ներկայում ուսանողների ներգրավվածությունը հետազոտական աշխատանքներում հիմնված է անհատական նախաձեռնությունների և ուսանողների մոտիվացիայի վրա, որը խոչընդոտ է հանդիսանում առավել մեծ թվով ուսանողների մասնակցությանը հետազոտական աշխատանքներում և ուսանողների մոտ վերլուծական կարողությունների ձևավորմանը: Հարկ է նշել, որ հետազոտական աշխատանքներում ուսանողների ներգրավվածության խնդիրը կարևորվել է նախորդ հավատարմագրման գործընթացի ժամանակ, և ԵՊԲՀ-ն պետք է ուշադրություն դարձնի տվյալ հարցի լուծմանը առաջիկա տարիներին:

Չնայած, որ ԵՊԲՀ-ում իրականացվում են դասախոսն ուսանողների աչքերով հարցումներ, որոնց արդյունքնում բացահայտվում են խնդիրներ ուսումնառության հետ կապված, այնումենայնիվ դեռևս համակարգված բնույթ չի կրում հարցումների արդյունքների տարածումը և բացահայտված խնդիրների լուծումը, ինչն էլ խոչընդոտում է կրթական և խորհրդատվական ծառայությունների որակի շարունակական բարելավմանը:

Դրական է, որ ԵՊԲՀ-ն աշխատանքներ է իրականացրել նախորդ հավատարմագրման փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման ուղղությամբ և սահմանել է գիտահետազոտական ոլորտում իր հետաքրքրություններն ու հավակնությունները, որը կնպաստի առավել թիրախային հետազոտությունների իրականացմանը: Ողջունելի է, որ ԵՊԲՀ-ն հայտարարում է հետազոտական գործունեության զարգացման բարձր հավակնությունների մասին, սակայն միևնույն ժամանակ սահմանված նշաձողին հասնելու համար նախատեսված մարդկային և

ֆինանսական ռեսուրսների առավել հստակ պլանավորումը և որակի ցուցիչների սահմանումը կնպաստի հետազոտությունների ոլորտում ԵՊԲՀ հաջողություններն ամրագրելուն: Ողջունելի է, որ ԵՊԲՀ-ն որդեգրել է դասախոսներին և ուսանողներին հետազոտական աշխատանքներում ներգրավվելու և խրախուսելու քաղաքականություն: Սակայն, ներկայում քիչ դասախոսներ և ուսանողներ են փաստացի ներգրավված հետազոտական աշխատանքներում, ինչի պատճառները համալսարանը չի ուսումնասիրել:

Թեև ԵՊԲՀ որոշ ամբիոններում ներդրվել է ուսանողների գնահատման բազմաբաղադիչ համակարգ, որը ներառում է նաև նրանց կողմից հետազոտական աշխատանքի իրականացման գնահատում, դեռևս առկա են ուսումնական գործընթացի և հետազոտական գործունեության կապի ամրապնդման խնդիրներ: Հստակ չէ, թե ուսումնական ծրագրերի որ բաղադրիչներն են ապահովում գիտական մեթոդների, բժշկական հետազոտության մեթոդների, վերլուծական և քննադատական մտածողության և ապացույցների վրա հիմնված բժշկության սկզբունքների յուրացումը, որոնք մեծապես կարևոր են ապագա նորարար բժշիշկներ համար: Հարկ է նշել, որ նախորդ հավատարմագրման գործընթացի փորձագիտական խմբի կողմից հետազոտության և ուսումնական գործընթացի փոխկապակցման խնդիրը նույնպես կարևորվել է, և համալսարանը պետք է ուշադրություն դարձնի այդ խնդրի ուսումնասիրության և լուծման համար:

ԵՊԲՀ-ում կնքել է պայմանագրեր մի շարք արտասահմանյան ուսումնական հաստատությունների հետ և մեծացել է փոխանակման ծրագրերով ուսանողների և դասախոսների շարժունությունը, սակայն ուսումնական պլաններում «շարժունության պատուհանի» բացակայությունը խոչընդոտում է առավել մեծ թվով ուսանողների մասնակցությունը փոխանակման ծրագրերի: Դրական է, որ նախորդ հավատարմագրման գործընթացի փորձագետների խորհրդատվությունները հաշվի առնելով, իրականացվել են քայլեր դասախոսների և ուսանողների օտար լեզվի մակարդակի բարձրացման ուղղությամբ: Սակայն, ներկայում անհրաժեշտություն կա խորացնելու անգլերեն լեզվի իմացությունը ուսանողների շրջանում, ինչը կնպաստի շարժունությանը, առավել մեծ թվով ուսանողների մասնակցությանը փոխանակման ծրագրերին, ինչպես նաև կմեծացնի օտարալեզու գրականությունից օգտվելու նրանց հնարավորությունները:

Դրական է, որ համալսարանը, հետևելով նախորդ հավատարմագրման գործընթացի խորհրդատվություններին, որպես նպատակ 2015-2020թթ. ՌԾ-ում սահմանել է «որակի ապահովման մշակույթի ձևավորման գործընթացի արդյունավետության բարձրացման ապահովումը» և 2018 թվականին մշակել է Կրթության որակի գնահատման և ապահովման կենտրոնի կանոնակարգը, որտեղ նկարագրված են կենտրոնի գործառույթները, խնդիրները, կենտրոնի ղեկավարի և աշխատակիցների գործառույթները: Կարևոր է շեշտադրել, որ մինչև այժմ մշակված որակի ապահովման ոլորտի փաստաթղթային հենքի կիրառման (ինքնագնահատում, տարբեր գործընթացների արդյունավետության գնահատում, ԳԱՑ-երի հիման վրա վերլուծություններ, ԵՊԲՀ բոլոր ՄԿԾ-ների որակի գնահատում և վերլուծություն) հիմքերը բացակայում են, ինչպես նաև առկա չէ համալսարանի գործունեության բոլոր ոլորտները ընդգրկող և ՌԾ նպատակներից բխող որակի ապահովման գործուն քաղաքականություն, որն էլ խոչընդոտում է առկա խնդիրների բացահայտմանը և շարունակական բարելավմանը: Նախորդ հավատարմագրման փորձագիտական զեկույցում շեշտադրվել է ՈԱ գործընթացներում առավել շատ շահակիցների ներգրավվածության ապահովման կարևորությունը, ԵՊԲՀ-ի տարբեր ոլորտներն ընդգրկող ինքնագնահատումների իրականացումը, շահակիցների հետ պարբերական

իրականացվող հետադարձ կապը և այլն, որոնք դեռևս ամբողջապես չեն իրականացվում, ինչին ԵՊԲՀ-ն պետք է ուշադրություն դարձնի առաջիկա տարիներին:

Հաստատության ուժեղ կողմերն են.

1. Նպատակների բարձր նշաձողը՝ միջազգային աշխատաշուկայում մրցունակ շրջանավարտ պատրաստելու և համալսարանի բրենդը միջազգային շուկայում ճանաչելի դարձնելու նպատակով,
2. ուսանողակենտրոն գործունեությունը,
3. վարչական և ՊԴ անձնակազմի հասանելիության բարձր մակարդակը ուսանողության համար,
4. անհրաժեշտ մարդկային (հատկապես պրակտիկ ոլորտի) և ֆինանսական ռեսուրսներով ապահովվածությունը,
5. նյութատեխնիկական ապահովվածության շարունակական բարելավումը՝ այն առաջնահերթություն համարելով,
6. եռալեզու կրթական ծրագրերի իրականացումը, որը ծածկում է բժշկական կրթության բոլոր ոլորտները,
7. սոցիալական և կորպորատիվ պատասխանատվության բարձր մակարդակը,
8. գիտական գործունեության ուղղությունների թիրախավորումը,
9. միջազգայնացման ուղղությամբ տարվող հսկայածավալ աշխատանքների իրականացումը, արտերկրի շրջանավարտների և հայ համայնքի ներուժի նպատակային օգտագործումը, ցանցային համագործակցության մեխանիզմի ներդրումը, միջազգային ուսանողների համար FMGE քննություններին անվճար պատրաստվելու հնարավորությունը,
10. հաշվետվողականության համակարգի և կառավարման հորիզոնական կապերի առկայությունը:

Հաստատության թույլ կողմերն են.

1. Որակի կառավարման գործընթացներում ոչ բոլոր շահակիցների պրոակտիվ ներգրավվածությունը,
2. ԵՊԲՀ-ի գործունեության բոլոր ոլոտները ծածկող արդյունավետության գնահատման ցուցիչների և դրանց հիման վրա բարելավումների բացակայությունը,
3. ԵՊԲՀ-ում լավագույն փորձի բացահայտման և տարածման մեխանիզմների բացակայությունը,
4. երկարաժամկետ նպատակային ֆինանսական պլանավորման բացակայությունը,
5. հիվանդամետ ուսուցման ցածր մակարդակը (1 ուսանողին բաժին ընկնող հիվանդների քանակի և արդյունքում պրակտիկ հմտությունների կիրառման ցածր մակարդակ),
6. ուսանողների մասնագիտական առաջընթաց գնահատող համակարգի անկատարությունը,
7. ուսանողների և դասախոսների շարժունության ցածր մակարդակը,
8. ուսանողների և դասախոսների ցածր ներգրավվածությունը հետազոտական աշխատանքներում,
9. արտաքին շահակիցների հետ համագործակցության սահմանափակությունը,
10. կրթություն-կլինիկական հետազոտություն-գիտություն կապի թույլ լինելը:

Հիմնական խորհրդատվություններ.

1. Ընդլայնել արտաքին շահակիցների ներգրավվածության և ազդեցության հնարավորությունները ԵՊԲՀ-ի տարբեր գործընթացներում,

2. սահմանել համալսարանի առաքելության և ՌԾ նպատակների իրականացման գնահատման որակական և քանակական ցուցիչներ և պարբերաբար հավաքագրել տվյալներ բարելավման նպատակով,
3. վերանայել ֆինանսական պլանավորման համակարգը՝ այն համապատասխանեցնելով համալսարանի ռազմավարական խնդիրների իրականացմանը,
4. հստակեցնել հետազոտությունն ու ուսումնական գործընթացը կապող մեխանիզմները՝ գնահատելով դրանց արդյունավետությունը,
5. խրախուսել պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների ակտիվ մասնակցությունը հետազոտական աշխատանքներում,
6. վերհանված հատուկ կարիքների հիման վրա մշակել հստակ քաղաքականություն և ընթացակարգեր պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական զարգացման ապահովման համար,
7. ակտիվացնել փոխանակային ծրագրերը և խրախուսել ուսանողներին և դասախոսներին մասնակցելու այդ ծրագրերին՝ հստակ մեխանիզմների և ֆինանսական հատկացումների միջոցով,
8. պարբերաբար իրականացնել ինքնագնահատումներ և ստեղծել շահակիցների հետ հետադարձ կապի կայուն մեխանիզմներ,
9. ուսանողների մոտ գործնական հմտությունների զարգացման նպատակով՝ ներդնել կոնկրետ դեպքերի ուսումնասիրության պրակտիկան, սիմուլիցիաների վրա հիմնված ուսուցում և գնահատում, ինչպես նաև ուսանողական պորտֆոլիո,
10. մշակել որակի ապահովման համալիր քաղաքականություն և կանոնակարգել գործընթացները, բազմազանեցնել որակի ապահովման մեխանիզմներն ու գործիքները՝ ծածկելով համալսարանի գործունեության բոլոր ոլորտները,
11. մշակել և կիրառել համալսրանի բոլոր գործընթացների որակի գնահատման ցուցիչներ և պարբերաբար վերլուծել գործընթացների արդյունավետությունը՝ նպաստելով լավագույն փորձի դուսրբերմանը և տարածմանը:

ԳՈՐԾԸՆԿԵՐԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻՆ ՄՈՒՀ-Ի ԻՆՏԵԳՐՎԵԼՈՒ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

1. Առաքելությունը և նպատակները

ԵՊԲՀ-ն հստակ սահմանել և վերջերս վերանայել է իր առաքելությունը, որն ավելի մեծ ուշադրություն է դարձնում կրթական ծառայությունների մատուցմանը և սոցիալական պատասխանատվությանը և բարձրագույն կրթության միջազգայնացմանը: ԵՊԲՀ-ն հաջողությամբ ցույց է տվել, որ համալսարանի ղեկավարությունը, վարչական անձնակազմը, դասախոսներն ու ուսանողներն ընդունում և ի կատար են ածում համալսարանի առաքելությունն ու ռազմավարական նպատակները: Համալսարանը, սակայն, պետք է խորհրդակցի տարբեր շահակիցների հետ՝ համոզվելու, որ մատուցվող ծառայությունները բավարարում են վերջիններիս կարիքներն և ակնկալիքները:

Առաջարկվում է հստակորեն սահմանել ներքին շահակիցների դերը և պարտականությունները, արտաքին շահակիցներին, ինչպես նաև ապահովել նրանց մասնակցությունը առաքելության սահմանմանը և որակի ապահովման գործընթացներին:

Բացի այդ, հիմնական բժշկական կրթության ոլորտում WFME-ի համընդհանուր չափանիշները «Առաքելություն և վերջնարդյունքներ» բաժնում սահմանվում են որպես առանձին երթաբաժիններ՝ ինստիտուցիոնալ ինքնավարություն և ակադեմիական ազատություն, ինչպես նաև կրթական արդյունքներ, որոնք ակնկալում են,

որ ուսանողներն իրենց ուսման ավարտին պետք է ցուցադրեն հիմնական բժշկական կրթության և հետբուհական կրթության արդյունքում ստացված արդյունքները, ինչպես նաև բժշկական հետազոտություններում ուսանողների ներգրավվածության նպատակային արդյունքները:

2. Կառավարումը և վարչարարությունը

ԵՊԲՀ-ի ղեկավարման և կառավարման համակարգը համապատասխանում է իր առաքելության և ռազմավարական նպատակների իրականացմանը, նպաստում է ինստիտուցիոնալ արդյունավետությանն ու ամբողջականությանը, ստեղծում և ապահովում է միջավայր ուսումնառության, դասավանդման, հետազոտության և ծառայությունների մատուցման համար:

Այնուամենայնիվ նպատակահարմար կլիներ սահմանել ռազմավարական պլանավորման կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ պլանները և վերանայել ԵՊԲՀ-ի ներկայիս՝ 2020 ռազմավարական պլանը, ինչպես նաև իրականացնել դրանում սահմանված նպատակներին հասնելու արդյունավետության գնահատում՝ ներառյալ ֆինանսական կառավարման և բյուջետավորման գնահատումը:

Համալսարանի ռազմավարության և ինստիտուցիոնալ գործընթացների բարելավման համար օգտագործվող ՊԻԳԲ-ի սկզբունքը պետք է հաշվի առնվի որակի կառավարման և որակի ապահովման համակարգերի համատեքստում՝ նախապես սահմանված առաջընթացի ցուցիչների կիրառմամբ, տարեկան վերանայումների և բարելավման պլանների մշակման համար:

Այս չափանիշի հետ կապված. WFME-ի «Կառավարման և վարչարարության» գլոբալ ստանդարտների փաթեթը ներառում է լրացուցիչ ենթաոլորտ. ակադեմիական ղեկավարում, կրթական բյուջե և ռեսուրսների հատկացում, առողջապահության ոլորտի հետ փոխգործակցություն:

3. Մասնագիտության կրթական ծրագրերը

ԵՊԲՀ-ն ապահովում է կրթական ծրագրերի և գիտական աստիճանների շնորհման պլանավորումը, մատուցումը, մշտադիտարկումը, գնահատումն ու բարելավումը:

ԵՊԲՀ-ի կրթական ծրագրերն ի ցույց է դնում ուսումնական վերջնարդյունքների և նպատակների հերթականությունը, ծրագրերի կառուցվածքը և բովանդակությունը, ուսանողների ընդունելության քաղաքականությունը և ընթացակարգերը, ուսումնառության և ուսուցման մեթոդները, ուսումնառության և ուսանողների ձեռքբերումների ակադեմիական մակարդակը, ինչպես նաև կրթական ծրագիրը բարելավելու համար անհրաժեշտ ռեսուրսները:

Ուսանողների հիմնական մտահոգությունները կապված էին կլինիկական պրակտիկայի քիչ լինելու և տարբեր կլինիկական իրավիճակներում իրական հիվանդների հետ անհատական շփման պակասի հետ:

Ուսանողների ներգրավվածության խթանման և ուսուցման հետագա բարելավման համար ներկայացվող առաջարկություններ.

- Կիրառել նորարարական մեթոդներ և տարբեր տեխնոլոգիաներով ընդլայնված ուսուցում, որը ներառում է փոքր խմբային դասավանդման, PBL, TBL, ինչպես նաև կոնկրետ դեպքերի վրա հիմնված ուսուցման, մահճակալի շուրջ դասավանդման և «շրջված դասասենյակի» մեթոդները.
- Գնահատման քաղաքականության և ընթացիկ ու ամփոփիչ գնահատման մեթոդների կիրառում. OSCE, Տեղում անցկացվող աշխատանքի հիման վրա գնահատում և գնահատման մեթոդների հուսալիության և վավերության գնահատում:

Կապված 3-րդ չափանիշի հետ. Կրթական ծրագիր հիմնական բժշկական կրթության ոլորտում որակի բարելավման WFME- ի համընդհանուր չափանիշները Չափորոշիչ 2. Կրթական ծրագիր; 3. Ուսանողների գնահատում; 6, Կրթական ռեսուրսներ: 6.5 Կրթական փոխանակման ծրագրեր; 7. Ծրագրի գնահատումը պետք է հաշվի առնվի ԵՊԲՀ-ի ինտեգրված կրթական ծրագրի իրականացման և կատարելագործման համար:

4. Ուսանողները

ԵՊԲՀ-ն, իր առաքելությանը համապատասխան, սահմանում է ընդունելության քաղաքականությունը:

ԵՊԲՀ-ն ուսանողներին ներգրավում է համալսարանի խորհրդատվական մարմինների գործունեության մեջ և նպաստում է ուսանողական ինքնուրույն կառավարմանը, ուսանողական խորհրդին՝ պաշտպանելու ուսանողների իրավունքները: Համալսարանն ուսանողներին տրամադրում է ակադեմիական աջակցություն, կարիերայի վերաբերյալ խորհրդատվություն, առողջապահություն և բարեկեցություն, ֆինանսական աջակցություն և հնարավորություններ անձնական զարգացման համար:

Օրերկրյա ուսանողները հատուկ կրթական աջակցություն են ստանում Հնդկաստանի քննությունների ազգային խորհրդի կողմից անցկացվող FMGE քննությանը պատրաստվելու և այն հաջողությամբ հանձնելու համար:

Հիմնական բժշկական կրթության որակի բարձրացման WFME գլոբալ ստանդարտներ 4. Ուսանողներ բաժինը ներառում է. ընդունելության քաղաքականություն և ընտրություն; ուսանողների ընդունման ծավալները և բնույթը, ուսանողական խորհրդատվություն և աջակցության ծառայություններ; ուսանողական ներկայացուցչություն:

5. Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմը

ԵՊԲՀ-ն ունի քաղաքականություն, գործընթացներ և չափանիշներ անձնակազմի ընտրության և նշանակման համար և երաշխավորում է զբաղվածության հավասար հնարավորություններ՝ իրավական պահանջներին համապատասխան:

Պրոֆեսորադասախոսական անձնակազմի ընտրության քաղաքականությունը պետք է ապահովի բավարար քանակությամբ բարձր որակավորում ունեցող կենսաբժշկական գիտաշխատողներ, ինչպես նաեւ խրախուսի և օժանդակի ուսանողներին համապատասխան կլինիկական գիտությունների ասպարեզում մասնակցելու բժշկական հետազոտությունների:

Հիմնական բժշկական կրթության ոլորտում WFME համընդհանուր ստանդարտների պահանջների համաձայն՝ առաջարկվում ենք ստեղծել և իրականացնել 1) անձնակազմի զարգացման ծրագիր և 2) անձնակազմի /դասախոսների առաջխաղացման քաղաքականություն և ակադեմիական գործունեության ճանաչում:

6. Հետազոտությունը և զարգացումը

ԵՊԲՀ-ն ունի հստակ սահմանված գիտական գերակայություններով գիտահետազոտական աշխատանքների իրականացման քաղաքականություն, որը հաշվի է առնում նաև հետազոտողների հետաքրքրությունը: Սակայն պարզ չէ, թե ինչպես են հետազոտական առաջնահերթություններն արտացոլում և բավարարում երկրի առողջապահական կարիքները:

Համալսարանը մշակել է գիտության զարգացման 2018-2028/38 թթ.-ի ռազմավարությունը, որը հաստատվել է գիտությունը համակարգող խորհրդի կողմից: Այս քաղաքականությունը կարելի է իրականացնել միայն Գիտակորդինացիոն խորհրդի, Գիտության բաժնի, համապատասխան ակադեմիական բաժանմունքների և

հետազոտողների ինտեգրված աշխատանքի շնորհիվ՝ ներգրավելով նաև, իհարկե, Ուսանողների գիտական ընկերությանը:

Ինչ վերաբերում է հիմնական բժշկական կրթության ոլորտում WFME-ի որակի բարելավման գլոբալ ստանդարտների պահանջներին՝ խորհուրդ է տրվում վերանայել համալսարանի ինտեգրված բժշկական կրթական ծրագրերը և սահմանել, թե որ ուսումնական ծրագրերի բաղադրիչներն են ներառում գիտական մեթոդի, բժշկական հետազոտության մեթոդների, վերլուծական և քննադատական մտածողության, թղթային գնահատման և ապացույցների վրա հիմնված բժշկության սկզբունքները հասկանալ, թե որքանով են ուսանողները ներգրավված հետազոտական ծրագրերում և փորձարարական հետազոտություններում:

7. Ենթակառուցվածքը և ռեսուրսները

ԵՊԲՀ-ն ունի բավարար և համապատասխան ռեսուրսներ, տեղեկատվական ռեսուրսներ, կրթական և տեղեկատվական տեխնոլոգիաներ, կլինիկական վերապատրաստման և հետազոտության համար անհրաժեշտ ռեսուրսներ և հաջողությամբ օգտագործում է իր առաքելությունն ու ռազմավարական նպատակները կյանքի կոչելու գործում:

«Էլեկտրոնային համալսարանը», որը դեռևս ստեղծման փուլում է, համակարգելու է կրթական ողջ գործընթացը, օգտագործելու է տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաները արդյունավետ պլանավորման, կառավարման, կրթական ծրագրերի և ծառայությունների գնահատման համար:

Համալսարանը տարեկան հաշվարկում է իր սեփական և պետական միջոցներով հատկացված բյուջեն՝ համաձայն իր ընթացիկ կարիքների:

ԵՊԲՀ-ն պետք է համապատասխանաբար պլանավորի և միջոցներ հատկացնի գրադարանների և դրանց ենթակառուցվածքների, տեղեկատվական ռեսուրսների և տեխնոլոգիաների զարգացման համար:

8. Հասարակական պատասխանատվությունը

ԵՊԲՀ-ն ունի հաշվետվողականության հստակ քաղաքականություն հասարակության կարիքներին արձագանքելու համար և հաջողությամբ ի ցույց է դրել իր ունակությունը ներքին և արտաքին շահակիցների հետ արդյունավետ հաղորդակցություն ապահովելու գործում:

9. Արտաքին կապերը և միջազգայանացումը

ԵՊԲՀ-ն ունի միջազգային համագործակցության, ակադեմիական փոխանակման և միջազգայնացման քաղաքականություն: Համալսարանը լայնածավալ համագործակցություն է հաստատել միջազգային և տեղական բարձրագույն ուսումնական հաստատությունների, առողջապահական և հետազոտական կազմակերպությունների, ուսանողական միությունների և առողջապահական ասոցիացիաների հետ:

Միջազգային ուսանողների, այցելող պրոֆեսորների և պատվավոր բժիշկների աճող թիվը, ինչպես նաև տարածաշրջանային և միջազգային համագործակցությունը՝ ներառյալ ուսանողների և դասախոսների փոխանակումը և գործընկեր կազմակերպությունների հետ հետազոտական ծրագրերը պահանջում են համապատասխան ռեսուրսներ և հաշվարկված տարեկան բյուջե:

10. Որակի ներքին ապահովումը

Կառավարման և վարչարարության համար կենսաբժշկական կրթության ոլորտում WFME-ի գլոբալ չափորոշիչները (8.4 Վարչարարություն և կառավարում)

պահանջում են, որ բժշկական կրթական հաստատությունները ձևավորեն և կիրարկեն որակի ապահովման ներքին կայուն մեխանիզմներ և ապահովեն դրա պարբերական վերանայումը:

ԵՊԲՀ-ն ցուցադրել է որակի ապահովման համակարգի որոշ տարրեր: ԵՊԲՀ-ն պետք է վերանայի իր որակի ապահովման առկա համակարգը և ինստիտուցիոնալ գործընթացները (կրթություն, հետազոտություն, ծառայությունների մատուցում, կառավարում և վարչարարություն՝ ներառյալ որոշումների ընդունման և հաստատման ներկայիս վիճակը), ֆինանսավորման աղբյուրները, բյուջետավորումը և ռեսուրսների հատկացումը, որը հիմնված է հստակ սահմանված կարիքների, անձնակազմի զարգացման և առաջխաղացման վրա), ապահովի ներքին և արտաքին շահակիցների ակտիվ դերակատարումն ու ներգրավվածությունը՝ կիրառելով համակարգային մոտեցում, և օգտագործի համապատասխան չափանիշներ ներքին մշտադիտարկումների իրականացման համար:

04 հոկտեմբեր 2019

Մարիամ Մոմջյան
Փորձագիտական խմբի ղեկավար

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ

ԵՊԲՀ ինստիտուցիոնալ կարողությունների արտաքին գնահատումն իրականացվել է փորձագիտական խմբի հետևյալ անդամների կողմից.

1. **Մարիամ Մոմջյան՝** Հայ-ռուսական համալսարանի դասախոս, դոցենտ, տնտեսագիտության թեկնածու,
2. **Կարեն Թոչունյան՝** Երևանի պետական համալսարանի Կենսաբանության ֆակուլտետի կենսաբանության գիտահետազոտական ինստիտուտի փոխտնօրեն, կենսաբանության ԳՀ ինստիտուտի մանրէաբանության, կենսաէներգետիկայի և կենսատեխնոլոգիայի լաբորատորիայի գիտաշխատող, Կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի դոցենտ, Կենսաբանական գիտությունների դոկտոր,
3. **Արչիտ Պանդիտ՝** Հնդկաստանի Քաղցկեղի բուժման Մաքս ինստիտուտի կլինիկական ղեկավար և գլխավոր խորհրդական, օնկոլոգ-վիրաբույժ,
4. **Ֆարիդա Նուրմանբետովա՝** Բժշկական կրթության համաշխարհային ֆեդերացիայի (WFME) խորհրդական, Ղազախ-ռուսական բժշկական համալսարանի խորհրդատու, բժշկական գիտությունների դոկտոր,
5. **Իվետա Արզումանյան՝** Հայաստանի ազգային ագրարային համալսարանի Պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետի Կաթի, կաթնամթերքի, մանկական և ֆունկցիոնալ սննդի տեխնոլոգիայի բաժնի, բակալավրիատի 3-րդ կուրսի ուսանողուհի:

Փորձագիտական խմբի կազմը համաձայնեցվել է ուսումնական հաստատության հետ:

Փորձագիտական խմբի աշխատանքները համակարգել է ՈԱԱԿ Ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման բաժնի ավագ մասնագետ Վարդուհի Գյուլազյանը:

Թարգմանությունը կատարել է ԵՊԼՀ դասախոս Գուրգեն Կարապետյանը:

Փորձագիտական խմբի անդամները, թարգմանիչը, համակարգողը ստորագրել են գաղտնիության և շահերի բախման բացառման հայտարարագրեր:

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Դիմում պետական հավատարմագրման համար

Պետական ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելու համար ԵՊԲՀ-ն դիմել է ՈԱԱԿ՝ լրացնելով սահմանված ձևաչափի դիմում-հայտը և ներկայացնելով լիցենզիայի և դրա հավելվածների կրկնօրինակները:

ՈԱԱԿ-ի քարտուղարությունն ուսումնասիրել է դիմում-հայտում ներկայացված տվյալները, կից փաստաթղթերը

Դիմում-հայտի ընդունման մասին որոշում կայացնելուց հետո ՈԱԱԿ-ի և ԵՊԲՀ-ի միջև կնքվել է երկկողմ պայմանագիր: Կազմվել և հաստատվել է աշխատանքների իրականացման ժամանակացույց:

Ժամանակացույցով նախատեսված ժամկետներում հաստատությունը, ըստ ՈԱԱԿ-ի կողմից սահմանած ձևաչափի, ներկայացրել է ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը հայերեն և անգլերեն լեզուներով և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը:

ԵՊԲՀ-ի ինքնավերլուծությունն իրականացրել է հատուկ այդ նպատակով ԵՊԲՀ ռեկտորի հրամանով ձևավորված խումբը:

Նախապատրաստական փուլ

ՈԱԱԿ-ի համակարգողն ուսումնասիրել է զեկույցը՝ տեխնիկական և բովանդակային առումով ՈԱԱԿ-ի պահանջներին համապատասխանությունը ստուգելու նպատակով: Այնուհետև համակարգողն ինքնավերլուծությունն ուղարկել է փորձագիտական խմբին, որի կազմը նախօրոք համաձայնեցվել է ԵՊԲՀ-ի հետ:

Փորձագիտական խմբին աշխատանքներին նախապատրաստելու և գործընթացների արդյունավետությունն ապահովելու նպատակով՝ ՈԱԱԿ-ի վերապատրաստման պատասխանատուների կողմից իրականացվել են չորս վերապատրաստումներ հետևյալ թեմաներով.

1. Հավատարմագրման գործընթաց, փորձագիտական աշխատանքի առանձնահատկություններ, փորձագետի էթիկայի և վարքագծի կանոններ:
2. Ինստիտուցիոնալ ինքնավերլուծության նախնական գնահատում պրակտիկայից վերցված օրինակների միջոցով:
3. Փորձագիտական այց դերային խաղերի միջոցով:
4. Փորձագիտական զեկույցի պատրաստում:

Վերապատրաստումների ընթացքում քննարկվել են բժշկական կրթության որակի ապահովման միջազգային չափանիշները և ոլորտի առանձնահատկությունները:

Փորձագիտական խումբը, ուսումնասիրելով համալսարանի ինքնավերլուծությունը և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը, իրականացրել է նախնական գնահատում ըստ ձևաչափի՝ պատրաստելով լրացուցիչ ուսումնասիրման ենթակա անհրաժեշտ փաստաթղթերի, ինչպես նաև խնդիրների և հարցերի ցանկը՝ նշելով նաև համապատասխան ստորաբաժանումները կամ թիրախային խմբերը:

Նախնական գնահատման ընթացքում փորձագիտական խումբը դիտարկել է գործնական պարապմունքներ և քննություններ: Այսպես, փորձագիտական խումբը այցելել է ԵՊԲՀ Ստամոտալոգիական գերազանցության կենտրոն և դիտարկել գործնական պարապմունք, այց է կատարվել Արմենիա Հանարապետական հիվանդանոցի գինեկոլոգիական բաժանունք և դիտարկել է բանավոր քննություն, այց է եղել Միքայելյան վիրաբուժական ինստիտուտ և դիտարկվել է Սիմուլիացիոն կենտրոնի աշխատանքը և ուսանողների մասնակցությունը վիրահատություններին:

Նախատեսված ժամկետներում փորձագիտական խումբն ամփոփել է նախնական գնահատման արդյունքները և կազմել փորձագիտական այցի պլան-ժամանակացույցը: Առաջնորդվելով ՈԱԱԿ-ի Փորձաքննության անցկացման ձեռնարկով՝ ժամանակացույցում ներառվել են հանդիպումներ փորձագետների կողմից նախատեսվող բոլոր խմբերի հետ, բաց և փակ հանդիպումներ, փաստաթղթերի և ռեսուրսների ուսումնասիրություն, այցելություններ հաստատության ստորաբաժանումներ և այլն:

Հիմնական խնդիրների և ուսումնասիրման ենթակա փաստաթղթերի առանձնացումից հետո փորձագիտական խումբը հստակեցրել է հանդիպումների ժամանակ քննարկվող խնդիրները: Պարբերաբար կրկնվող հանդիպումների ընթացքում քննարկվել են յուրաքանչյուր չափորոշչի վերաբերյալ հարցադրումները և կազմվել փորձագիտական խմբի նախնական այցի փաթեթը: Փաթեթը պարունակում էր հանդիպումների պլան-ժամանակացույցը[2] ուսումնասիրման և պարզաբանման ենթակա հարցերը՝ ըստ թիրախային խմբերի և այն լրացուցիչ փաստաթղթերի ցանկը, որոնք անհրաժեշտ էր ուսումնասիրել փորձագիտական այցի ընթացքում: Համալսարանի

[2] ՀԱՎԵԼՎԱԾ 2: ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

կողմից ներկայացրած ցանկերից ընտրվել են դասախոսական և ուսանողական կազմի ներկայացուցիչները, շրջանավարտները, գործատուները, որոնք պետք է մասնակցեին հանդիպումներին:

ԵՊԲՀ-ի ինքնավերլուծությունը

ԵՊԲՀ-ն, ըստ ՈԱԱԿ-ի կողմից սահմանած ձևաչափի, 2019 թվականի մարտի 1-ին ներկայացրել է ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը հայերեն և անգլերեն լեզուներով և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը: Ինքնավերլուծության զեկույցը հիմնականում ընդհանրական և նկարագրական տեղեկատվություն էր և չէր արտահայտում նախորդ հավատարմագրման արդյունքում իրականացված ամբողջական բարեփոխումները:

Նախապատրաստական այց

2019 թվականի մայիսի 6-ին տեղի է ունեցել նախապատրաստական այց ԵՊԲՀ: Համալսարանի հետ համաձայնեցվել է փորձագիտական այցի պլան-ժամանակացույցը, ներկայացվել է ուսումնասիրության ենթակա լրացուցիչ փաստաթղթերի ցանկը, քննարկվել և փոխհամաձայնեցված որոշումներ են կայացվել փորձագիտական այցի կազմակերպչական, տեխնիկական, տեղեկատվական հարցերի, հանդիպումների մասնակիցների վարքագծի և էթիկայի նորմերի վերաբերյալ: Դիտարկվել են ֆոկուս խմբային հանդիպումների և փորձագիտական խմբի աշխատանքի համար նախատեսված սենյակները, հստակեցվել են դրանց կահավորման ու տեխնիկական միջոցներով հագեցման խնդիրները:

Փորձագիտական այց

Փորձագիտական այցը տեղի է ունեցել 2019թ. մայիսի 20-ից 23-ը ընկած ժամանակահատվածում: Ժամանակացույցի համաձայն փորձագիտական այցի աշխատանքները մեկնարկել են փակ հանդիպմամբ, որի նպատակն էր միջազգային փորձագետներ Արչիտ Պանդիտի և Ֆարիդա Նուրմանբետովայի հետ քննարկել և համաձայնեցնել փորձագիտական գնահատման շրջանակը, այցի ընթացքում ուսումնասիրման ենթակա խնդիրները, ԵՊԲՀ-ի ուժեղ և թույլ կողմերը՝ ըստ չափանիշների, ֆոկուս խմբային հանդիպումների ընթացակարգը, հստակեցնել հետագա քայլերը:

Այցին մասնակցել է փորձագիտական խումբն ամբողջությամբ, ՈԱԱԿ-ի համակարգողը, թարգմանիչը և արձանագրողը:

Փորձագիտական այցը սկսվել և ավարտվել է ԵՊԲՀ ռեկտորի հետ հանդիպումներով: Իրականացվել են ըստ ժամանակացույցի նախատեսված բոլոր հանդիպումները, այդ թվում բաց հանդիպումը, որին մասնակցել են ԵՊԲՀ դասախոսական և ուսանողական կազմի ներկայացուցիչներ: Այցի ընթացքում փորձագիտական խումբը փաստաթղթերի ուսումնասիրություն[3], ռեսուրսների դիտարկում[4] և ֆոկուս խմբային հանդիպումներ է իրականացրել համալսարանի տարբեր ստորաբաժանումներում: Փորձագիտական խումբը այցելել է Միքայելյան վիրաբուժության ինստիտուտ և տեղում դիտարկել սիմուլյացիոն կենտրոնի աշխատանքը:

---

[3] ՀԱՎԵԼՎԱԾ 3: ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

[4] ՀԱՎԵԼՎԱԾ 4: ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Այցի յուրաքանչյուր աշխատանքային օրվա վերջում տեղի ունեցած փորձագիտական խմբի փակ հանդիպման ժամանակ դուրս են բերվել փորձագիտական գնահատման միջանկյալ արդյունքները, իսկ այցի ավարտին փակ քննարկմամբ ամփոփվել են այցի հիմնական արդյունքները:

Փորձագիտական գնահատումը կատարվել է Հավատարմագրման պետական չափանիշների և չափորոշիչների և ՈԱԱԿ-ի ընթացակարգերի շրջանակներում, որով նախատեսվում է գնահատման երկաստիճան սանդղակ՝ **բավարար և անբավարար:**

Փորձագիտական զեկույց

Փորձագիտական խմբի ներկայացուցիչները և ՈԱԱԿ-ի համակարգողը պատրաստել են փորձագիտական զեկույցի նախնական տարբերակը: Միջազգային փորձագետները պատրաստել են գործընկերային գնահատման վերաբերյալ առանձին կարծիք, որը ներառվել է զեկույցի տեքստում: Նախնական զեկույցը ներկայացվել է համալսարանի 09.07.2019-ին:Զեկույցի վերաբերյալ իր դիտողություններն ու մեկնաբանություններն ԵՊԲՀ-ն ուղարկել է ՈԱԱԿ 19.07.2018թ.: Բուհն իր դիտողություններն ու մեկնաբանությունները ներկայացրել է հայերեն լեզով, որոնք տրամադրվել են տեղացի փորձագետներին: Դիտողությունների վերաբերյալ 2019թ. սեպտեմբերի 12-ին ՈԱԱԿ-ը կազմակերպել է բուհի և փորձագիտական խմբի ներկայացուցիչների հանդիպում, որի ժամանակ էլ ներկայացվել է խմբի պատասխանը: Հաշվի առնելով բուհի մեկնաբանությունները՝ փորձագիտական խումբը կազմել է զեկույցի վերջնական տարբերակը, որը խմբի կողմից հաստատվել է 04.10.2019թ.:

Վարդուհի Գյուլազյան
Համակարգողի ստորագրություն

04 հոկտեմբեր 2019

ԳՆԱՀԱՏՈՒՄ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Պատմություն. Երևանի պետական համալսարանի բժշկական ֆակուլտետը հիմնադրվել է 1919թ: 1930թ. այն վերակազմավորվել է որպես Երևանի պետական բժշկական ինստիտուտ՝ իր կառուցվածքում ունենալով շուրջ 30 ամբիոն և 270 ուսանող: 1989թ. ՀՀ նախարարների խորհրդի N 234 որոշմամբ Երևանի պետական բժշկական ինստիտուտն անվանակոչվել է միջնադարի մեծ բժշկապետ և մտածող Մխիթար Հերացու անվամբ: 1995թ. ինստիտուտին շնորհվել է Համալսարանի կարգավիճակ: Հայաստանի Հանրապետության կառավարության 2002թ. ապրիլի 23-ի N 450 որոշմամբ Համալսարանը վերակազմավորվել է պետական ոչ առևտրային կազմակերպության, իսկ 2014թ. նոյեմբերին ստացել է հիմնադրամի կարգավիճակ:
Համալսարանն իր գոյության 95 տարիների ընթացքում պատրաստել է շուրջ 34.000 բարձրորակ մասնագետ, որոնցից 3200-ը արտասահմանյան երկրների քաղաքացիներ են: Շրջանավարտներից շատերը դարձել են անվանի գիտնականներ, առողջապահության հմուտ կազմակերպիչներ, պետական և հասարակական գործիչներ՝ իրենց ծանրակշիռ ավանդը ներդնելով հանրապետությունում առողջապահության կազմակերպման, հիվանդությունների կանխարգելման և բուժման հիմնախնդիրների լուծման, ինչպես նաև բժշկագիտության զարգացման բնագավառներում:
Համալսարանը, հավատարիմ մնալով իր ակունքներին, միջնադարյան հայ բժշկական դպրոցների ավանդույթներին ու գաղափարներին, այսօր առաջնորդվում է ՀՀ բարձրագույն կրթական համակարգի պահանջներով և ապահովելով որակավորումների ու եվրոպական տարածքում մասնագիտացումների համընդհանուր համեմատելի աստիճաններ, ինչպես նաև դասախոսների և հետազոտողների համար ստեղծելով տեղաշարժման պայմաններ՝ քայլ առ քայլ ինտեգրվում է եվրոպական գիտակրթական տարածք:

Կրթություն. Համալսարանը ձգտում է ապահովել կրթական միջավայր, որտեղ հնարավոր է, ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակի պահանջներից ելնելով, կազմակերպել համապատասխան բժշկական բարձրագույն և հետբուհական կրթություն, կատարելագործել ուսուցման մեթոդաբանությունը և բարելավել ուսումնա-գիտական և ուսումնաարտադրական համալիրների գործունեությունը, ապահովել կրթական և հետազոտական գործընթացների ժամանակակից տեխնոլոգիաների ինտեգրումը: Այսօր համալսարանն առաջնորդվում է բարձրագույն կրթության ինչպես դասական, այնպես էլ եռաստիճան՝ բակալավրիատի, մագիստրատուրայի և հետազոտողի կրթական ծրագրերով: Համալսարանն ունի ընդհանուր բժշկության, ստոմատոլոգիական, դեղագիտական, ռազմաբժշկական, հանրային առողջության և հետդիպլոմային կրթության ֆակուլտետներ, ինչպես նաև բժշկական քոլեջ և նախապատրաստական ուսուցման բաժին: Համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումներն են ֆակուլտետները, ամբիոնները, գիտական կենտրոնները, կլինիկական համալիրները, քոլեջը, բաժինները, գիտական գրադարանը, ուսանողական հանրակացարանը, հրատարակչությունը, ուսումնաարտադրական բազաները և այլն: Համալսարանում գործում են նաև մի շարք ծառայություններ՝ համակարգչային կենտրոններ, մշակութային և սպորտային ակումբներ, սննդի և հանգստի կազմակերպման, ինչպես նաև ուսումնամարզաառողջարարական կենտրոններ: Համալսարանի կառավարման մարմիններն են համալսարանի հոգաբարձուների խորհուրդը և գործադիր տնօրեն–ռեկտորը: Ուսանողների ինքնակառավարման մարմինը ուսանողական խորհրդարանն է:

Հետազոտություն. Հետազոտության և գիտության զարգացման համար ԵՊԲՀ-ը հավակնում է դառնալ միջազգային ակադեմիական հեղինակություն ունեցող համալսարան, ապահովել ԵՊԲՀ մրցակցային դիրքը և դրա կայուն առաջընթացը համաշխարհային գիտակրթական շուկայում հիմնարար և կիրառական հետազոտությունների գերազանցության ծրագրերի միջոցով: Հայեցակարգում առանձնացված նպատակադրումների արդյունավետ իրականացումը կապահովի համալսարանի դիրքի բարելավումը համաշխարհային համալսարանների վարկանիշավորման ցանկում՝ ներառելով այն լավագույն հազարյակում: Մրցունակ դիրքերից հանդես գալու նպատակով ԵՊԲՀ-ն առաջիկա 10-20 տարիների ընթացքում պետք է ապահովի իր գործունեության ուղղվածության սահուն անցումը գերիշխող կրթական դաշտից դեպի գիտակրթական դաշտ:

Միջազգայնացում. ԵՊԲՀ-ն հավակնում է բարձրացնելու իր միջազգային վարկանիշը՝ իրականացնելով միջազգային կապերը խթանող քաղաքականություն: Համալսարանը միջազգային կապերի ամրապնդման և ընդլայման բնագավառում համագործակցում է Ռուսաստանի, Ֆրանսիայի, ԱՄՆ-ի, Իրանի, Գերմանիայի, Վրաստանի և այլ բժշկական բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ: Համալսարանն անդամակցում է հետևյալ կազմակերպություններին՝ Համալսարանների միջազգային ասոցացիա, Բժշկական կրթության միջազգային ֆեդերացիա, Ամերիկյան միջազգային առողջապահության ալյանս, Դեղագետ-ուսանողների միջազգային ֆեդերացիա, Բժիշկ-ուսանողների ասոցացիաների միջազգային ֆեդերացիա, Բժիշկ-ուսանողների եվրոպական ասոցացիա, միջազգային կազմակերպություններին, ինչպես նաև ներգրավված է եվրոպական և միջազգային կրթական ու գիտական բազմաթիվ ծրագրերում (TEMPUS, ERASMUS-MUNDUS, USAID, UNESCO, WB): Համալսարանի ուսանողության 25 տոկսը կազմում են օտարերկրյա ուսանողները:

Որակի ապահովում. Որակի ապահովման ոլորտում համալսարանը հավակնում է ունենալ գործունեության արդյունավետության գնահատման ցուցանիշների վրա հիմնված և գործընթացների ամբողջական շրջափուլն ընդգրկող կրթության որակի ապահովման համակարգ, որը միտված կլինի բոլոր գործընթացների աստիճանական և շարունակական բարելավմանը: Համալսարանի 2015-2020թթ. ռազմավարական ծրագրում կարևորվում են կրթության որակի ապահովման համակարգի շարունակական բարելավումը, համալսարանի տարբեր ստորաբաժանումների ինքնագնահատման պարբերականությունը, որակի ապահովման գործընթացներում համալսարանի կրթական, գիտական և ֆինանսական գործունեության համակողմանի ընդգրկվածությունը և այլն

Փորձագիտական խումբը, գնահատում կատարելիս, առաջնորդվել է «համապատասխանություն նպատակներին» սկզբունքով և վերոնշյալ տեղեկատվությունն է դիտարկել որպես համալսարանի հիմնական հավակնություններ և նպատակներ:

I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որը համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին:

Փաստեր

1.1 ՄՈՒՀ-ն ունի նպատակներն ու խնդիրներն արտացոլող հստակ ձևակերպված առաքելություն, որը համահունչ է ՈԱՇ-ին:

Համալսարանի առաքելությունը ներկայացված է ԵՊԲՀ հիմնադրամի 30.01.2015թ գիտական խորհրդում հաստատված ԵՊԲՀ-ի 2015-2020թթ. ռազմավարական ծրագրում (այսուհետ՝ ՌԾ), որի համաձայն համալսարանի առաքելությունը սահմանված է հետևյալ ձևակերպմամբ. «Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանը կրթական, գիտական և կլինիկական ուղղվածության բարձրագույն ուսումնական հաստատություն է, որի հիմնական առաքելությունը առողջապահության ոլորտի որակյալ կադրերի պատրաստումն է՝ միտված հանրության առողջության պահպանմանը, ամրապնդմանը և բարելավմանը»: Համաձայն նույն ՌԾ-ի՝ ԵՊԲՀ-ն հաստատում է, որ ՌԾ-ն «երկարաժամկետ (5տ.) ժամանակահատվածում Համալսարանի առաքելության և հիմնական նպատակների իրականացման գործընթացի նկարագիրն է, ենթարկվում է մշտադիտարկման և կարող է կարգավորվել նոր իրավիճակին համապատասխան»: Սակայն անհրաժեշտ է նշել, որ ԵՊԲՀ-ի նախորդ՝ 2009-2014թթ. ՌԾ-ի արդյունքների գնահատում չի իրականացվել: Միաժամանակ, նախորդ հավատարմագրման արդյունքներից ելնելով՝ վերաձևակերպվել են ՌԾ նպատակները:

ԵՊԲՀ-ի առաքելությունը համահունչ է ՈԱՇ-ին այն առումով, որ համալսարանը կազմակերպում է կրթական ծրագրեր՝ բակալավրի, մագիստրոսի և կլինիկական օրդինատուրայի աստիճաններում՝ մշակելով նաև անընդհատ և ինտեգրված կրթական ծրագրեր և կրթական վերջնարդյունքներ, ՈԱՇ-ին համապատասխանեցնելու մատրիցաներ: Փորձագիտական այցի հանդիպումների արդյունքներից ելնելով և ԵՊԲՀ ռեկտորի փաստմամբ՝ ԵՊԲՀ-ի գերակա նպատակներից է՝ ԵՊԲՀ-ն ՀՀ-ում որպես բուժական և գիտական կենտրոն թիրախավորելը և ՀՀ-ի հիմնական բժշկական ներուժը համալսարանում կենտրոնացնելը, որակյալ կադրերին հիվանդանոցներից համալսարանի աշխատանքներին ներգրավելու խթանների ստեղծումը և համալսարանի բոլոր գործընթացներն նպատակաուղղված են վերոնշյալ նպատակին հասնելու համար:

ԵՊԲՀ-ի գործունեության տեսլականը, ռազմավարական 9 նպատակներն ու խնդիրները նշված են զարգացման ռազմավարական ծրագրում, ընդ որում կոնկրետ նպատակների համար նկարագրված են ռազմավարական կոնկրետ խնդիրներ: Սակայն, ԵՊԲՀ-ի առաքելության, նպատակների և իրականացվող գործողությունների փոխկապակցվածությունը հստակ չէ, քանի որ համալսարանում տեղի ունեցող գործընթացները առաջանցիկ են առաքելությամբ սահմանված նպատակների նկատմամբ: Բացի այդ, ՌԾ-ում հիմնական բովանդակային բաժինը՝ «համալսարանի ռազմավարության նպատակները, խնդիրները և դրանց իրագործման ուղիները» բաժնում շարադրված խնդիրներում հաճախ նշված են նպատակներին հասնելու ուղիները, ոչ թե խնդիրները (օրինակ՝ Նպատակ 1-ը սահմանված է որպես. «Իրականացնել Համալսարանի կառավարման համակարգի բարեփոխումներ և ապահովել բժշկական կրթական հայեցակարգի արդիականացումն ու հեռանկարային զարգացումը», իսկ նույն նպատակի խնդիրներում նշված է «օպտիմալացնել

Համալսարանի կառավարման կառուցվածքը՝ ռազմավարական և ընթացիկ ծրագրերի, կառավարման գործընթացների արդյունավետ իրականացման նպատակով, իրականացնել ներքին կադրային աուդիտ՝ աշխատատեղերի նպատակային և արդյունավետ օգտագործման համար և այլ խնդիրներ)»:

1.2. ՄՈՒՀ-ի առաքելությունը, նպատակները և խնդիրներն արտացոլում են ներքին և արտաքին շահակիցների կարիքները:

Համաձայն ինքնավերլուծության և փորձագիտական այցի արդյունքների՝ ԵՊԲՀ-ն կարևորում է արտաքին և ներքին շահակիցների կարիքների վերհանումը, դրանց արտացոլումը ՌԾ-ում և այլ փաստաթղթերում: Համալսարանում կարիքների վերհանման գործընթացները ուղղված են հիմնականում ներքին շահակիցների կարիքների վերհանմանը: Արտաքին շահակիցների հստակ սահմանում և տարանջատում (մասնավորապես գործատուների, այդ թվում՝ ՀՀ տարածքից դուրս գտնվող և գործունեություն ծավալող) տրված չէ: Համալսարանի համար արտաքին շահակիցներ համարվող գործատուների մի մասը նույնականացվում է ներքին շահակիցների հետ, քանի որ դրանք կլինիկական ամբիոնների դասախոսներ են: ԵՊԲՀ-ի կանոնադրությամբ սահմանված են համալսարանի շահակիցները՝ առողջապահության ոլորտի, կրթական, գիտական, հետազոտական, ուսումնաարտադրական և կանոնադրությամբ նախատեսված այլ բնագավառներին առնչություն ունեցող ֆիզիկական և իրավաբանական անձինք: Արդյունքում, ՀՀ տարածքից դուրս գտնվող և գործունեություն ծավալող շահակիցների կարիքները հստակ հաշվի չեն առնվել ԵՊԲՀ-ի առաքելության, նպատակների և խնդիրների ձևակերպումներում: Ըստ ինքնավերլուծության՝ ներքին և արտաքին շահակիցների ներկայացուցիչները մասնակցություն են ունեցել համալսարանի ռազմավարական ծրագրի նախագծի քննարկման գործընթացներում: Այնուամենայնիվ, ռազմավարական ծրագրում արտացոլված են առավելապես ներքին շահակիցների կարիքները: Իսկ ՌԾ-ում ներքին շահակիցների կարիքների հաշվի առնումը տեղի է ունեցել կառավարման կոլեգիալ մարմիններում ընդգրկելու, ինչպես նաև հարցումներին նրանց մասնակցության միջոցով: Ուսանողների կարիքների բացահայտումը ևս իրականացվում է հիմնականում հարցումների և ուսանողական կազմակերպությունների հանդիպումներին մասնկցության միջոցով: Փորձագիտական այցի արդյունքներով պարզ դարձավ, որ համալսարանն աշխատանքներ է իրականացնում արտաքին շահակիցների հետ հետադարձ կապի աշխուժացման ուղղությամբ (այդ թվում՝ շրջանավարտների և միջազգային շահակիցների հետ): Միջազգային գործատուների հետ կապը միջնորդավորված է՝ շրջանավարտների միության միջոցով, իսկ տեղացի գործատուների հետ կապը՝ մասնագիտական բժշկական ասոցիացիաների միջոցով: Այնուամենայնիվ, փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ արտաքին շահակիցների ներգրավվածությունը ռազմավարական առաջնահերթությունների սահմանմանը, և արդյունքում նաև իրազեկվածությունը իրականացվող գործընթացների վերաբերյալ, ցածր է:

1.3. ՄՈՒՀ-ում գործում են առաքելության ու նպատակների իրականացման արդյունքների գնահատման և բարելավման հաստատված մեխանիզմներ և ընթացակարգեր:

ԵՊԲՀ-ի ռազմավարական ծրագրի գործողությունների պլանում յուրաքանչյուր քայլի համար որպես կատարողական ակնկալվող վերջնարդյունքների նկարագրերն ընդհանրական են (օրինակ, աշխատատեղերի արդյունավետ և նպատակային օգտագործում, գերակա ուղղություններ, գերազանցության կենտրոնի ստեղծման

նախադրյալներ և այլն), հստակ չափելի չեն կոնկրետ թիրախային ժամանակահատվածի համար: Ռազմավարական ծրագրի իրագործման կարճաժամկետ պլանավորման նպատակով համալսարանում կիրառվում է ուսումնական տարվա կտրվածքով ստորաբաժանումների կողմից աշխատանքային պլանների կազմման մեխանիզմը, որոնց միջոցով մշտադիտարկվում են պլանավորված գործողությունների և միջոցառումների կատարման փաստերը: ԵՊԲՀ-ի առաքելության ու ռազմավարական նպատակների իրականացումը գնահատելու նպատակով կիրառվում է հիմնականում ստորաբաժանումների և ղեկավար անձնակազմի (ռեկտոր, պրոռեկտորներ, արտաքին կապերի բաժին, ֆակուլտետների դեկաններ, ամբիոնների վարիչներ և այլն) հաշվետվությունների համակարգը: Սակայն հաշվետվությունները հիմնականում արձանագրում են կատարված աշխատանքները և փաստերը, ունեն տեղեկատվական բնույթ, իսկ վերլուծությունները կամ դրանց արդյունքներով մշակված բարելավումների ծրագրերը սակավ են, իսկ առանձին դեպքերում բացակայում են: Չի իրականացվում նաև ստորաբաժանումների գործունեության արդյունքների գնահատում: Մասնավորապես, միջազգային համագործակցության, օտարերկրյա ուսանողների հետ տարվող աշխատանքների բաժինների աշխատանքային պլաններով նախատեսված աշխատանքների կատարման փաստը արձանագրվում է այդ պլաններում «կատարված է» նշումով, և համալսարանը չի հետևում դրանց իրագործման արդյունքներին և արդյունավետությանը:

Ֆինանսական պլանավորման նպատակով կազմվում է բյուջեի նախահաշիվ 1 տարվա կտրվածքով ամբողջ ԵՊԲՀ-ի մասշտաբով: Համալսարանի կողմից չի իրականացվում բյուջեի պլանավորում՝ ըստ ռազմավարական նպատակների: Ֆինանսական պլանավորումն իրականացվում է՝ հաշվի առնելով ՀՀ պետական բյուջետային գործընթացով նախատեսված ծրագրային բյուջետավորման պահանջները: ԵՊԲՀ-ի առաքելության ու նպատակների իրականացման արդյունքների քանակական և որակական հստակ գնահատումների և դրանց բարելավման մեխանիզմներն ու ընթացակարգերը դեռևս մշակված չեն:

Դատողություններ: ԵՊԲՀ-ի գործող 2015-2020թթ. ռազմավարական ծրագիրը, որը 2009-2014թթ. ռազմավարական ծրագրի լրամշակված և համալրված տարբերակն է, հստակեցնում է ԵՊԲՀ տեսլականը, նրա գործունեության ռազմավարական նպատակները և դրանց հասնելու կոնկրետ գործողությունները: Սակայն, համալսարանի առաքելությունը մասամբ է արտացոլում ռազմավարական նպատակներն ու խնդիրները: Համալսարանում իրականացվող գործընթացները առաջանցիկ են, իսկ գործունեության ընտրած բարձր նշաձողը արտացոլված չէ գործող ՌԾ-ում: Առաքելության սահմանումը չի շեշտադրում գիտական հետազոտությունը և միջազգայնացումը ԵՊԲՀ-ի համար որպես առաջնահերթություն: Ռազմավարական ծրագրի գործողությունների պլանում առկա վերջնարդյունքները չափելի դարձնելը և կատարման ժամկետ սահմանելը, կնպաստի ԵՊԲՀ-ի գործողությունների նպատակայնության և փոփոխություններին արձագանքելու օպերատիվության մակարդակի բարձրացմանը: Համալսարանի փաստացի գործունեության հիմքում ընկած է առավելապես կարճաժամկետ պլանավորման քաղաքականությունը (բացառությամբ գիտական գործունեության պլանավորման), ինչն էլ ռիսկային է դարձնում համալսրանի երկարաժամկետ զարգացման գործընթացը: Բացի այդ, ԵՊԲՀ-ի առաքելության ու ռազմավարական նպատակների իրականացման քանակական և որակական վերջնարդյունքների հստակ գնահատում չի կատարվում, քանի որ ռազմավարական ծրագրի գործողությունների պլանը ևս նպատակների իրականացման ժամկետայնության և գնահատման հստակ մեխանիզմներ չի պարունակում, վերջնարդյունքները հստակ ձևակերպված, չափելի չեն, իսկ վերջնարդյունքների ոչ

հստակ և չափելի լինելը նվազեցնում է ՌԾ-ի կատարման գնահատման արդյունավետությունը և համալսարանի զարգացման տեմպերի գնահատումը: Արդյունքում ՌԾ բարելավմանն ուղղված ընթացակարգերը դեռևս մշակված չեն:

ԵՊԲՀ-ի ռազմավարական նպատակների իրագործման համար ներքին շահակիցների կարիքների վերհանման գործընթացներում նրանց մասնակցությունը ակտիվ է, սակայն արտաքին շահակիցների հետ համագործակցությունը և կապը դեռ թույլ է: Ներքին շահակիցների կարիքների վերհանումն ու ուսումնասիրությունն իրականացվում է հիմնականում հարցումների միջոցով, սակայն ստացված տեղեկատվության հետագա օգտագործման և արդյունքների բարելավման մեխանիզմներ հստակեցված չեն, ինչը նվազեցնում է ստացված տեղեկատվության նպատակային օգտագործումը: ԵՊԲՀ-ի կողմից միջազգայնացումը սահմանված է որպես գործունեության առաջնահերթություն, սակայն արտերկրի գործատուների և միջազգային այլ շահակիցների հետ համագործակցությունը հատվածային է և նրանց հետ փոխհարաբերությունների կառավարումը իրավիճակային է և իրականացվում է միջնորդավորված կերպով ացոցիացիաների միջոցով: Արտաքին շահակիցների հետ համագործակցությունը չխորացնելը և այն չկանոնակարգելը կխոչընդոտի ԵՊԲՀ-ի կողմից սահմանված նպատակների իրականացմանը: Ռազմավարական նպատակների իրագործման արդյունավետության տեսանկյունից կարևոր է նաև բյուջեի ֆինանսական պլանավորումն ըստ ռազմավարական նպատակների: Համալսարանի կողմից, ըստ ռազմավարական նպատակների ֆինանսական հստակ պլանավորում և ռեսուրսների հստակ բաշխման քաղաքականություն չի իրականացվում, ինչը կարող է վտանգել ռազմավարական նպատակների իրագործման և որակի ապահովման քաղաքականության շարունակականությունը և փոխկապակցվածությունը:

ԵՊԲՀ-ում որպես առաքելության և նպատակների իրականացման գնահատման հիմնական մեխանիզմ դիտարկվում է կառուցվածքային ստորաբաժանումների, պրոռեկտորների և ռեկտորի տարեկան հաշվետվությունների համակարգը, որոնք ունեն հիմնականում փաստերն արձանագրելու բնույթ և վերաբերում են և ձեռքբերումներին, և բացթողումներին, ինչպես նաև առաջիկա ծրագրերին: Սակայն հաշվետվությունների արդյունքների վերլուծությունների և կատարված աշխատանքների գնահատման գործընթացների սակավությունը և ստորաբաժանումների գործունեության վերջնարդյունքների քանակական և որակական գնահատման հստակ ցուցիչների բացակայությունը հնարավորություն չեն ընձեռում գնահատել համալսարանի և դրա ստորաբաժանումների գործունեության իրական արդյունավետությունը:

Եզրահանգում: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նախորդ հավատարմագրման արդյունքներից ելնելով, ԵՊԲՀ-ն բարեփոխել է իր Ռազմավարական ծրագիրը, ունի ձևակերպված առաքելություն, որը համահունչ է ՀՀ ՈԱՇ-ին, առկա է առաքելության հիման վրա սահմանած նպատակներով և գործունեության առաջնահերթություններով ռազմավարական ծրագիր՝ գործողությունների պլանով, ներքին շահակիցները մասնակցում են ռազմավարական նպատակների և խնդիրների սահմանմանը և իրագործմանը, փորձագիտական խումբը գտնում է, որ ԵՊԲՀ-ն բավարարում է չափանիշ 1-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ԵՊԲՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 1-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

Խորհրդատվություններ.

1. Վերանայել համալսարանի ռազմավարական ծրագիրը՝ հստակ սահմանելով գործունեության թիրախները երկարաժամկետ ժամանակահատվածում, ինչպես նաև տարանջատել ռազմավարական խնդիրները և դրանց իրագործման ուղիները:
2. Համալսարանի զարգացման ընթացքը մշտադիտարկելու և արդյունքները գնահատելու նպատակով՝ մշակել ռազմավարական նպատակների իրականացման վերջնարդյունքների որակական և քանակական գնահատման, ինչպես նաև ռազմավարական ծրագրի բարելավման հստակ մեխանիզմներ և ընթացակարգեր,
3. Ռազմավարական ծրագրի իրականացման գործընթացում ապահովել արտաքին շահակիցների ակտիվ ընդգրկվածությունը և նրանց հետ հետադարձ կապը,
4. Վերանայել ֆինանսական պլանավորման և ռեսուրսների բաշխման քաղաքականությունը՝ նպաստելով ռազմավարական նպատակների և ֆինանսական պլանավորման շրջանակում իրականացվող գործողությունների փոխկապակցվածության ամրապնդմանը:

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործունեությունն արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝ պահպանելով կառավարման էթիկայի կանոնները:

Փաստեր

2.1 Հաստատության կառավարման համակարգն ապահովում է որոշումներ կայացնելու կանոնակարգված գործընթաց՝ սահմանված էթիկայի կանոններին համապատասխան և ունի կրթական ու այլ նպատակների իրականացման համար անհրաժեշտ մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ:

Համաձայն կանոնադրության՝ «Համալսարանն իր գործունեությունն իրականացնում է իր մարմինների միջոցով, դրանք են՝ 1) համալսարանի հոգաբարձուների խորհուրդը. 2) համալսարանի գործադիր մարմինը՝ ռեկտորը»:

Համալսարանի ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է ռեկտորը, իսկ կոլեգիալ կառավարման մարմիններն են հոգաբարձուների խորհուրդը և գիտական խորհուրդը: ԵՊԲՀ-ի ներքին շահակիցները ներգրավված են ԵՊԲՀ-ի կառավարման գործընթացում՝ նրանց կարիքների վերհանմանը և բավարարմանն ուղղված որոշումների կայացմանը: Ուսանողների կողմից ընտրված հոգաբարձուների և գիտական խորհուրդների անդամները կազմում են այդ խորհուրդների անդամների 25 տոկոսը: Հոգաբարձուների խորհրդում ընդգրված են նաև համալսարանի հիմնադրի և լիազոր մարմնի ներկայացուցիչներ:

Փորձագիտական այցի արդյունքներով պարզ դարձավ, որ համալսարանում գործում է օպերատիվ կառավարման մոդելը՝ կոլեգիալ կառավարման մարմինների կողմից լիակատար վստահության պայմաններում: Համալսարանում գործում են համապատասխան գործառույթների իրականացման համար կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներ՝ ուսումնամեթոդական վարչություն, գիտության վարչություն, կլինիկական աշխատանքների կազմակերպման վարչություն, կրթության որակի գնահատման և ապահովման, գիտահետազոտական կենտրոններ, արտաքին կապերի, միջազգային համագործակցության, օտարերկրացիների հետ տարվող

աշխատանքի բաժին, գիտական հետազոտությունների, նորամուծության և ձեռներեցության կենտրոն, կարիերայի կենտրոն և պրակտիկայի պատասխանատու, ֆակուլտետների դեկանատներ, ամբիոններ, գրադարան, ուսանողական խորհրդարան, իրավաբանական կլինիկա, էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության կայան և այլն: 2015 թվականին նախկին հավատարմագրման արդյունքներով տրված խորհրդատվությունների հիման վրա, ԵՊԲՀ-ի կառավարման համակարգը կատարելագործելու նպատակով, մշակվել և ներդրվել են մի շարք հիմնարար փաստաթղթեր, որոնք կանոնակարգում են համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների գործունեությունը և կազմակերպվող գործընթացները: Մասնավորապես, առանձին ստորաբաժանումների կանոնադրությունների հաստատմամբ մասամբ հստակեցվել է այդ մարմինների գործունեության շրջանակը, մշակվել է պրոֆեսորադասախոսական կազմի մրցութային եղանակով ընտրության կարգը, մշակվել են առանձին պաշտոնների (հիմնականում վարչական հաստիքների) անձնագրեր, սակայն համաձայն այդ կանոնակարգերի ընտրության գործընթաց դեռևս չի իրականացվել:

ԵՊԲՀ-ի կառավարման գործող համակարգի ստորաբաժանումների կառուցվածքային սխեմայի ուսումնասիրությունը և փորձագիտական այցի ընթացքում հանդիպումները ցույց տվեցին, որ որոշ հաստիքների համար սահմանված պարտականությունների ու լիազորությունների շրջանակները հստակ տարբերակված չեն: Մասնավորապես, փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ միջազգային համագործակցության բաժնի և օտարերկրյա ուսանողների հետ տարվող աշխատանքների բաժնի գործառույթները կրկնվում են, քանի որ միջազգային համագործակցության բաժնի կանոնադրությամբ նախատեսված գործառույթները մասամբ իրականացնում էր օտարերկրյա ուսանողների հետ տարվող աշխատանքների բաժինը (վիզաների ձևակերպում, տեղեկատվական նյութերի տրամադրում և այլն): Հստակեցված չէ նաև իրավաբանական կլինիկայի կարգավիճակը, հստակ նկարագրված չէ նաև կարիերայի կենտրոնի և զարգացման բաժինների և պրակտիկայի պատասխանատուի գործառույթները (պրակտիկայի կազմակերպման, ուսանողների կարիերային աջակցման, մարքետինգային քաղաքականությանն առնչվող, շրջանավարտների հետ հետադարձ կապի ապահովման, համալսարանի առաջխաղացման ռազմավարության մշակման և իրագործման մասով): ԵՊԲՀ-ում պրակտիկայի կազմակերպման համար պատասխանատու է մեկ հաստիք, չնայած այն հանգամանքին, որ ըստ շահակիցների կարծիքի, առկա է պրակտիկ պարապմունքների շատացման անհրաժեշտություն:

Համալսարանն իր գործունեությունը կազմակերպում է հաստատված տարեկան բյուջեի հիման վրա, իսկ ՌԾ նպատակներին համահունչ ֆինանսական պլանավորում չի իրականացվում: ԵՊԲՀ գիտության զարգացման 2018-2028 հայեցակարգի «գիտության զարգացման թիրախներ» բաժնի ֆինանսական ռեսուրսներ ենթաբաժնում, օրինակ, գնահատված և նկարագրված չեն նույն փաստաթղթում նշված գիտության զարգացման համար ֆինանսական անհրաժեշտ ռեսուրսները և դրանց ֆինանսավորման աղբյուրները:

Բացի այդ, 2018 թվականին Ուսանողական խորհրդարանի ֆինասավորմանը և գրադարանային ֆոնդի արդիականացմանը բաժին ընկնող ռեսուրսների մասնաբաժինը համալսարանի բյուջեի ծախսային հոդվածներում շատ քիչ է տարբերվում՝ համապատասխանաբար 40 000 և 48 800 հազար դրամ:

ԵՊԲՀ-ում գործում է կարգապահական հանձնաժողովը՝ հաստատված էթիկայի կանոններին համապատասխան, որի գործունեությունը թափանցիկ է և հրապարակային:

2.2 ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը հնարավորություն է տալիս դասախոսներին և ուսանողներին մասնակցելու իրենց առնչվող որոշումների կայացմանը:

2015-2018թթ. բուհում կառավարման համակարգի բարեփոխումների շրջանակում մշակված փաստաթղթերը և դրանց կիրառումը միտված են եղել նաև արտաքին ու ներքին շահակիցների մասնակցությանը համալսարանի կառավարման գործընթացներում: ԵՊԲՀ-ի հոգաբարձուների և գիտական խորհուրդի անդամների թվի 25 տոկոսը կազմում են ուսանողները, որոնց առաջադրում է Ուսանողական խորհրդարանը (կանոնադրությամբ՝ ուսանողական խորհուրդը): Համալսարանի հոգաբարձուների և գիտական խորհուրդներում ներկայացված են նաև ՊԴ անձնակազմի ներկայացուցիչները: Այլ մակարդակներում դասախոսների մասնակցությունը կառավարչական որոշումների կայացմանը տեղի է ունենում ամբիոնի, ֆակուլտետի մակարդակներում, իսկ ուսանողներինը՝ Ուսանողական խորհրդարանի, Ուսանողական գիտական ընկերություն, մանդատային հանձնաժողովների, ինչպես նաև հարցումներին մասնակցության միջոցով: Օտարերկրյա ուսանողների կարիքների վերհանման, նրանց մասնակցությունը կառավարչական որոշումներում ապահովելու նպատակով գործում է նաև օտարերկրացիների ուսուցման դեկանատը և օտարերկրյա ուսանողների հետ աշխատանքների բաժինը:

Այնուամենայնիվ, չնայած ուսանողների կողմից բարձրաձայնված խնդիրների լուծման դրական նախադեպերին /գրադարանային ֆոնդի համալրում, այլընտրանքային պրակտիկաների իրականացում և այլն/, կառավարման կոլեգիալ մարմնում կառավարչական որոշումների քննարկմանը ուսանողների ակտիվության վերլուծություն չի իրականացվել (այդ թվում՝ սեփական նախաձեռնությամբ որոշակի հարցեր օրակարգային դարձնելու մասով):

2.3 ՄՈՒՀ-ը մշակում և իրականացնում է կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ պլանավորում՝ իր առաքելությանն ու նպատակներին համապատասխան, և ունի դրանց իրականացման և մշտադիտարկման հստակ մեխանիզմներ:

ԵՊԲՀ-ում երկարաժամկետ 5 տարվա կտրվածքով պլանավորման գործող հիմնական փաստաթղթերը 2015-2020թթ. ռազմավարական ծրագիրն է և դրա իրականացման գործողությունների պլանը, որտեղ նշված են գործողությունների նկարագրերը, քայլերը, վերջնարդյունքները, վերջնարդյունքների չափման ցուցիչները, կատարման ժամանակահատվածը և ընթացքը, պատասխանատուները և ռեսուրսները: Կիրառության մեջ է դրված նաև համալսարանի գործունեության առաջնահերթ ուղղություններից մեկին առնչվող երկարաժամկետ մեկ այլ փաստաթուղթ՝ ԵՊԲՀ գիտության զարգացման 2018-2028/38 հայեցակարգը:

Սակայն, ԵՊԲՀ ՌԾ-ի հիման վրա կանոնակարգված միջնաժամկետ պլանավորում, ռիսկերի գնահատում և դրա հիման վրա երկարաժամկետ պլանավորման ճշգրտում չի իրականացվում: 2017թ.-ին մշակված է մեկանգամյա «ենթակառուցվածքային հավատարմագրման ընթացքում վերհանված խնդիրների լուծմանն ու գործընթացների բարելավմանն ուղղված գործողությունների ծրագիր» փաստաթուղթը, որի ազդեցությունը ևս գնահատված չէ: Փաստաթղթում նշված գործողությունների հիմնական մասը դեռ ընթացքի մեջ է: ԵՊԲՀ-ի կառուցվածքային ստորաբաժանումները մշակում են իրենց տարեկան աշխատանքային պլանները ՌԾ հիման վրա: Սակայն դրանց մշտադիտարկման համար կիրառվող մեխանիզմներ առկա չեն: Օրինակ, փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ միջազգային

համագործակցության բաժինը իր աշխատանքային պլանով նախատեսած առանձին աշխատանքների շրջանակում էլեկտրոնային փոստով շահակիցներին ուղարկում է տեղեկատվական թերթիկները, սակայն, դրա իրագործման արդյունավետության գնահատում չի իրականացնում: Որպես կատարողականի գնահատման մեխանիզմներ կիրառվում են համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումների հաշվետվությունները, որոնք կրում են փաստերն արձանագրելու բնույթ:

Ինչ վերաբերում է առաքելությանն ու նպատակներին համապատասխան ֆինանսական պլանավորմանը, ապա ԵՊԲՀ-ի կողմից բյուջեի պլանավորումն իրականացվում է կարճաժամկետ ժամանակահատվածի համար՝ մեկ տարվա կտրվածքով նախահաշվի կազմմամբ, որտեղ արտացոլված են ֆինանսական մուտքերը և ծախսերն ըստ առանձին հոդվածների՝ ամբողջ համալսարանի համար (և ոչ թե ըստ դրա կառուցվածքային ստորաբաժանումների կամ գործունեության ուղղությունների): Այս համատեքստում ևս բյուջեի կատարման մշտադիտարկման և բարելավման (այդ թվում՝ ռեսուրսների արդյունավետ օգտագործման) հստակ մեխանիզմներ մշակված չեն:

2.4 ՄՈՒՀ-ը կատարում է իր գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրություն և որոշումներ կայացնելիս հիմնվում է հավաստի տվյալների վրա:

ԵՊԲՀ-ի կառավարմանն առնչվող որոշումների կայացումը հիմնվում է հիմնականում շահակիցների կարիքների վերհանման նպատակով իրականացվող հարցումների, բանավոր քննարկումների արդյունքների և շրջանավարտների հաջողությունների վերաբերյալ ունեցած տեղեկատվության հիման վրա: «Շանհայի վարկանշավորման խորհրդատվություն» (ShanghaiRanking Consultancy) կազմակերպության հետ համատեղ առաջին անգամ ԵՊԲՀ-ում իրականացվել է գիտական գործունեության բենչմարքինգ-վերլուծությունը, որի արդյունքներով հստակեցվել է նեյրովիրաբուժությունը որպես գիտական գործունեության առաջնահերթություն: Բացի այդ, հիմնվելով ՀՀ առողջապահության նախարարության առաջնահերթությունների վերլուծության և նրանց հետ քննարկումների արդյունքների վրա, ԵՊԲՀ կանխարգելիչ բժշկությանն ուղղված գործողությունները նախատեսում է ևս ընդգրկել ԵՊԲՀ-ի գործունեության առաջնահերթություններում: Չնայած սրան, արտաքին գործոնների կանխատեսման, դրանց ազդեցության գնահատման կանոնակարգված մեխանիզմներ մշակված չեն: Միջազգայնացման վրա ուղղակիորեն ազդող արտաքին միջավայրի վերլուծությունները (ներառյալ արտերկրի աշխատաշուկայի պահանջների փոփոխությունների և այլ թիրախային գործոնային գնահատումներ), SWOT վերլուծությունները սակավ են: Շահակիցների կողմից (հատկապես արտաքին շահակիցների) տրամադրած տեղեկատվության ամբողջականության և հավաստիության գնահատման մեխանիզմների արդյունավետությունը ևս գնահատված չէ:

2.5 Քաղաքականությունների և ընթացակարգերի վարչարարությունն իրականացվում է որակի կառավարման սկզբունքով (պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում):

Կրթության որակի գնահատման և ապահովման կենտրոնի կանոնակարգում /2018 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 16 նիստի թիվ 18-11-16-05 որոշմամբ/ նշված գործառույթները թույլ են տալիս իրականացնել որակի շրջափուլային կառավարման սկզբունքը: Պլանավորման նախնական փուլը ԵՊԲՀ-ի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից խնդիրների, հնարավորությունների, զարգացման հեռանկարների վերհանումն է, ուսումնասիրությունը և դրանց իրականացման իրատեսականության նախնական գնահատումն է /օրինակ՝ Պրակտիկայի պատասխանատուի կողմից վերհանված խնդիրների հիման վրա, ներդրվել է

այլընտրանքային պրակտիկան, կամավոր սկզբունքով/: Տարբեր գործընթացների իրականացումը վերահսկելու նպատակով հավաքագրվում է տեղեկատվություն հաշվետվությունների ձևով, սակայն քիչ են օրինակները, երբ դրանցով հավաքագրված տեղեկատվությունն արդեն իսկ կիրառվել է բարելավում իրականացնելու նպատակով (բացառությամբ՝ գնահատման և դասախոսի որակավորման գնահատում համակարգի):

ԵՊԲՀ որակի ապահովման համակարգի ներդրումից հետո, ընթացակարգերի և քաղաքականությունների մշակման և ներդրման ուղղությամբ լայնածավալ աշխատանքներ է իրականացրել, հատկապես 2018թ.-ին: Փորձագիտական այցի ընթացքում, համալսարանի ռեկտորի հետ հանդիպմանը նշվեցին համալսարանի՝ ՌԾ նպատակների չափելի ցուցիչներ որոնք սակայն, իրենց արտացոլումը չեն գտել համալսարանի ռազմավարական փաստաթղթերում և առանձին կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության կանոնակարգերում:

2.6 ՄՈՒՀ-ում գործում են մասնագիտությունների կրթական ծրագրերի և այլ գործընթացների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը, վերլուծությունը և կիրառումը գնահատող մեխանիզմներ:

Մասնագիտությունների կրթական ծրագրերի և այլ գործընթացների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման նպատակով ԵՊԲՀ-ում մշակվել են հարցաթերթեր, իրականացվել հարցումներ ուսանողների շրջանում: Համալսարանն աշխատանքներ է իրականացնում մասնագիտությունների կրթական ծրագրերի բարելավմանը միտված գործընթացներում արտաքին շահակիցներին ներգրավելու ուղղությամբ (ներառյալ՝ նրանց հետ քննարկումների կազմակերպման, հարցումների միջոցով նրանցից տեղեկատվության ստացման միջոցով): Մասնավորապես, արտերկրում շրջանավարտների միությունների միջոցով ԵՊԲՀ-ն, օգտագործելով նրանց ներուժը, հավաքագրում է տեղեկատվություն շրջանավարտների հաջողությունների վերաբերյալ: Կրթական ծրագրերի մշտադիտարկման և վերանայման հաստատված կարգ համալսարանում առկա չէ (չնայած այն նախատեսված էր 2015-2020թթ. ՌԾ գործողությունների պլանով),

Ինչպես նաև առկա չէ ՄԿԾ-ների և այլ գործընթացների (նյութատեխնիկական ապահովման, ֆինանսական, կադրային համալրման և այլն) բարելավման նպատակով անհրաժեշտ տեղեկատվությունը և հավաքագրման մեխանիզմները:

2.7 ՄՈՒՀ-ում գործում են կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին քանակական և որակական տեղեկատվության հրապարակումները գնահատող օբյեկտիվ մեխանիզմներ:

ԵՊԲՀ-ում կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին քանակական և որակական տեղեկատվության հրապարակումները տեղադրվում են հիմնականում համալսարանի ինտերնետային կայքում, «Ապագա բժիշկ» պաշտոնաթերթում, ֆեյսբուքյան էջում, ինչպես նաև առաջին կուրսի ուսանողների համար նախատեսված ուղեցույցում (մասնավորապես՝ շրջանավարտների քանակի, նրանց հաջողությունների մասին տեղեկատվություն և գործունեությանը նվիրված առանձին հոդվածներ): Սակայն կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի հրապարակումների օբյեկտիվությունը գնահատող կանոնակարգված մեխանիզմները դեռ մշակված չեն: Առկա են առանձին վերլուծություններ միայն օտարերկրյա ուսանողների՝ միջազգային որակավորման քննությունների արդյունքների, ինչպես նաև նրանց և ՀՀ տարածքից դուրս հայազգի շրջանավարտների գործնական հաջողությունների վերաբերյալ:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում այն, որ 2015-ից սկսած, հաշվի առնելով նաև հավատարմագրման նախորդ գործընթացի խորհրդատվությունների հիման վրա, վերնայվել է ռազմավարական ծրագիրը, կատարվել են որոշ կառուցվածքային փոփոխություններ (կարիերայի կենտրոնի ստեղծում և այլն):

ԵՊԲՀ-ում ընթացքի մեջ են ստորաբաժանումների գործունեության կանոնակարգերի մշակումը և ամբիոնների վերամիավորումները և պաշտոնների անձնագրերի հաստատման գործընթացը: ՄՈՒՀ-ում աշխատանքներ են տարվել գործող կառուցվածքային ստորաբաժանումների ֆունկցիոնալ նշանակության և ռազմավարական ծրագրի նպատակներին համահունչության ապահովման տեսանկյունից: Այնուամենայնիվ, դեռևս հստակ չեն որոշ կառուցվածքային ստորաբաժանումների և պատասխանատուների գործառույթները, մասնավորապես, միջազգային համագործակցության բաժնի, օտարերկրյա ուսանողների հետ տարվող աշխատանքների բաժնի, օտարերկրացիների ուսուցման դեկանատի, գիտության վարչության, գիտահետազոտական կենտրոնի, նորարարական հետազոտությունների կենտրոնի, ուսումնամեթոդական վարչության և ուսումնամեթոդական խորհուրդների, կարիերայի կենտրոնի, զարգացման բաժնի ղեկավարների և պրակտիկայի պատասխանատուի: Միաժամանակ, հաստատված պաշտոնների անձնագրերի գործնականում դեռ չկիրառելը և ՊԴ անձնակազմի ոչ բոլոր հաստիքների համար մրցույթով համալրումը ևս կարող է ազդել ԵՊԲՀ-ում համապատասխան պրոֆեսիոնալ կադրերով ապահովման և ուսանողներին մատուցվող կրթական ծառայությունների որակի վրա:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ ներքին շահակիցները հիմնականում հնարավորություն ունեն մասնակցելու իրենց առնչվող որոշումների կայացման գործընթացներին, սակայն հատկապես արտասահմանցի ուսանողների կողմից հարցերի բարձրացման նախաձեռնողականության մակարդակը ցածր է: Աշխատանքներ են տարվում նաև արտաքին շահակիցների ակտիվությունը բարձրացնելու ուղղությամբ, սակայն մեխանիզմները դեռևս կանոնակարգված չեն: Մինչդեռ, միջազգային աշխատաշուկայի պահանջների վերաբերյալ ոչ ամբողջական տեղեկատվությունը կարող է ռիսկային դարձնել ռազմավարական նպատակների իրականացումը, այն է՝ համալսարանի միջազգայնացման հետագա խորացումը և մրցունակ շրջանավարտների պատրաստումը:

Դրական է այն հանգամանքը, որ ԵՊԲՀ-ում առկա են հաստատված էթիկայի նորմեր, ակտիվորեն գործում է կարգապահական հանձնաժողով, որի գործունեության վերաբերյալ տեղեկացված էին նաև ուսանողները:

ԵՊԲՀ-ի ղեկավարության և ներքին շահակիցների հետ հանդիպումներից պարզ դարձավ, որ կառավարչական ստորաբաժանումները բավարար են համարում անհրաժեշտ մարդկային և նյութական ռեսուրսներով ապահովվածությունը՝ իրենց գործառույթներն իրականացնելու համար: Իսկ համալսարանի կողմից կառուցվածքային ու առանձնացված ստորաբաժանումների մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների բաշխման արդյունավետության գնահատում իրականացված չէ: Միաժամանակ, ռեկտորի հետ հանդիպմանը կարևորվեց համալսարանի ֆինանսական ռեսուրսների աղբյուրների դիվերսիֆիկացումը:

ԵՊԲՀ-ում երկարաժամկետ պլանավորման փաստաթուղթ է հանդիսանում վերանայված ռազմավարական ծրագիրը, որը չունի զարգացման հստակ չափելի վերջնարդյունքներ, դրանց կատարման չափելի ցուցիչների լրակազմ, ինչը ռիսկային է դարձնում ռազմավարական նպատակների և խնդիրների իրագործման կատարողականի գնահատումը, և դրա հիման վրա զարգացման սցենարների մշակումը:

ԵՊԲՀ-ում կանոնակարգված միջնաժամկետ պլանավորում, ռիսկերի գնահատում չի իրականացվում, իսկ կարճաժամկետ պլանավորումն էլ ԵՊԲՀ-ն դիտարկում է ստորաբաժանումների մեկ տարվա կտրվածքով աշխատանքային պլանները: Որպես կատարողականի ցուցանիշներ հանդես են գալիս հաշվետվությունները, որոնք ունեն փաստերն ու խնդիրներն արձանագրելու բնույթ և գործողությունների արդյունավետության գնահատում չեն նախատեսում: Բացի այդ, ֆինանսական պլանավորումն իրականացվում է համալսարանի մասշտաբով և ոչ ռազմավարական նպատակներին համապատասխան, ինչը ռիսկային գործոն է ռազմավարական նպատակներին համապատասխան անհրաժեշտ նյութական և ֆինանսական ռեսուրսներով ապահովվածության և այդ ռեսուրսների բաշխման արդյունավետության տեսանկյունից: Մասնավորապես հետազոտությունների իրականացման, համալսարանական կլինիկաների կարողությունների ամրապնդման տեսանկյունից, որոնք պահանջում են հստակ պլանավորում և երկարաժամկետ, և միջնաժամկետ և կարճաժամկետ կտրվածքով:

ԵՊԲՀ-ում իրականացվում են հարցումներ, որոնց միջոցով վեր են հանվել ներքին շահակիցներին առնչվող խնդիրներ: Սակայն, կատարված հարցումներից բացի, համալսարանի գործունեության վրա ազդող արտաքին գործոնների ուսումնասիրության, ռիսկերի գնահատման, SWOT վերլուծությունների սակավությունը սահմանափակում է ստացված տվյալների հավաստիության աստիճանը: Հստակ չեն նաև հավաքագրված տեղեկատվության հետագա կիրառման ուղիները և մեխանիզմները, քանի որ դրանք իրականացվում են հիմնականում ըստ անհրաժեշտության և իրավիճակային կառավարման սկզբունքներով՝ առանց շահակիցների հետ հետադարձ կապի ապահովման: Հավաքագրված տեղեկատվության գնահատման և վերլուծության մեխանիզմների բարելավմամբ հնարավոր կլինի բարձրացնել շահակիցների ընդգրկվածության մակարդակը՝ հատկապես միջազգային ուսանողների:

ԵՊԲՀ-ում որակի ապահովման համակարգի արդյունավետության բարձրացման նպատակով մշակվել են ընթացակարգեր և կանոնակարգեր, ինչը դրական է անդրադառնում ծառայությունների մատուցման վարչարարության ապահովման տեսանկյունից: Սակայն կառավարման համակարգի գործընթացների գերակշիռ մասում ՊԻԳԲ շրջափուլը դեռ փակված չէ. դրանք գտնվում են պլանավորման կամ իրականացման փուլում, իսկ ստուգման փուլն անցած գործընթացների վերաբերյալ հավաքագրված տեղեկատվության գնահատման մեխանիզմներ և բարելավման նպատակներով կիրառելու համակարգված մոտեցումներ դեռ չեն մշակվել:

Համալսարանն իր կողմից մատուցվող կրթական ծառայությունների վերաբերյալ տեղեկատվությունը շահակիցներին հասանելի դարձնելու նպատակով կիրառում է իր պաշտոնաթերթը, ֆեյսբուքյան էջը և պաշտոնական կայքը, արտերկրում գտնվող շրջանավարտների միության և միջազգային ծրագրերի համակարգողների գրասենյակները: Սակայն ԵՊԲՀ-ում իրականացվող մյուս գործընթացների արդյունավետության գնահատման, կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի վերաբերյալ վստահելի տեղեկատվության հավաքագրման, վերլուծության, կիրառման մեխանիզմների մշակումն ու կիրառումը կնպաստի համալսարանի նկատմամբ շահակիցների և միջազգային գործընկերների վստահության ամրապնդմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով այն հանգամանքները, որ ԵՊԲՀ-ի կառավարման համակարգում նախորդ հավատարմագրման արդյունքներով տեղի են ունեցել զգալի բարելավումներ, որոնք հանգեցրել են կառավարման համակարգի բարելավման, կառավարման որոշումներն ընդունվում են բազմակարծության մթնոլորտում՝

շահակիցների ներգրավմամբ, ԵՊԲՀ-ի կառավարման համակարգն ապահովված է անհրաժեշտ մարդկային և նյութական ռեսուրսներով, կան պլանավորման համակարգի հիմնական բաղադրիչները, փորձագիտական խումբը գտնում է, որ ԵՊԲՀ-ն բավարարում է չափանիշի 2-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ԵՊԲՀ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 2-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

Խորհրդատվություններ.

1. Բարեփոխել համալսարանի կազմակերպական կառուցվածքը՝ բացառել գործառույթների կրկնությունները ըստ ստորաբաժանումների, ակտիվացնել հորիզոնական կապերը ստորաբաժանումների միջև և մշակել կառավարման համակարգի արդյունավետության գնահատման հստակ համակարգ:
2. Խթանել և ակտիվացնել արտաքին շահակիցների ներգրավվածությունը կառավարման գործընթացներում:
3. Վերանայել ֆինանսական պլանավորման համակարգը՝ այն համապատասխանեցնելով ԵՊԲՀ-ի ռազմավարական խնդիրների իրականացմանը:
4. Ներդնել միջնաժամկետ պլանավորման և ռիսկերի վերլուծության և գնահատման համակարգ:
5. Մշակել արտաքին գործոնների ազդեցության, ռազմավարական ծրագրի և պլանների մշտադիտարկման, գնահատման ու վերանայման չափելի ցուցանիշների լրակազմ և դրանք գնահատումների և վերլուծությունների նպատակով կիրառելու մեխանիզմներ:
6. Հստակեցնել և կանոնակարգել կրթական ծրագրերի և այլ գործընթացների արդյունավետության գնահատման ու վերլուծության համար հավաքագրվող անհրաժեշտ տեղեկատվության քանակը, դրա մշակման և կիրառման մեխանիզմները:

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

ՉԱՓԱՆԻՇ: ՄԿԾ-ները համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունությանը և միջազգայնացմանը:

Փաստեր

3.1 ՄՈՒՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերը համահունչ են հաստատության առաքելությանը, համապատասխանում են պետական կրթական չափորոշիչներին, մանրամասն նկարագրված են ըստ շնորհվող որակավորումների ակնկալվող ուսումնառության արդյունքների:

ԵՊԲՀ-ն իր 2015-2020 թթ. Ռազմավարական ծրագրում բժշկական տիրույթի բարելավման նպատակով նախատեսել է իրականացնել հետևյալ քայլերը. «կրթական ծրագրերի և կրթության կազմակերպման ձևերի բարեփոխումների միջոցով ապահովել ուսուցման բարձր որակ՝ բավարարելով աշխատաշուկայի պահանջները և նպաստելով շարժունակությանն ու միջազգայնացմանը»: ԵՊԲՀ-ը նախատեսում է նաև կատարելագործել ուսուցման մեթոդաբանությունը և բարելավել ուսումնագիտական և

ուսումնաարտադրական համալիրների գործունեությունը, ապահովել կրթական և հետազոտական գործընթացների ժամանակակից տեխնոլոգիաների ինտեգրումը:

ԵՊԲՀ-ում առկա են «Բուժական գործ» մասնագիտության անընդհատ և ինտեգրացված ձևաչափով իրականացվող կրթական ծրագիրը (նորմատիվ տևողությունը 6 տարի, շնորհվող որակավորումը՝ «Բժիշկ», կազմակերպվում է Ընդհանուր բժշկության ֆակուլտետի կողմից, «Ստոմատոլոգիա» մասնագիտության անընդհատ և ինտեգրացված ձևաչափով կրթական ծրագիրը (նորմատիվ տևողությունը 5 տարի, շնորհվող որակավորումը՝ «Բժիշկ-ստոմատոլոգ»՝ Ստոմատոլոգիական ֆակուլտետի կողմից, «Ֆարմացիա» մասնագիտության բակալավրական (նորմատիվ տևողությունը 4 տարի, շնորհվող որակավորումը «Ֆարմացիայի բակալավր» և մագիստրոսական (նորմատիվ տևողությունը 1 տարի, շնորհվող որակավորումը «Ֆարմացիայի մագիստրոս») կրթական ծրագրերը կազմակերպվում է Դեղագիտական ֆակուլտետի կողմից: ԵՊԲՀ-ում գործում է Հանրային առողջության ֆակուլտետը, որի մագիստրոսական ծրագրերն (առողջապահության կազմակերպում և կառավարում, բիզնես վարչարարություն, բուժհաստատությունների կառավարում) ավարտվում են երկու տարբեր որոկավորմամբ՝հանրային առողջապահության մագիստրոս և բիզնես վարչարարության մագիստրոս: ԵՊԲՀ-ում գործում է նաև Ռազմաբժշկության ֆակուլտետ, որտեղ Բուժական գործ զինված ուժերում կրթական ծրագրի շրջանակներում պատրաստում են բժիշկներ ՀՀ զինված ուժերի համար:

ԵՊԲՀ-ի ՄԿԾ-ները համահունչ են համալսարանի առաքելությանը այն առումով, որ համալսարանը պատրաստում է առողջապահության ոլորտի մասնագետներ, որոնք բավարարում են տվյալ ոլորտի աշխատաշուկայի պահանջներին: Փորձագիտական վերլուծություններից պարզ դարձավ, որ ԵՊԲՀ-ն ՄԿԾ վերջնարդյունքներն ՈԱՇ-ի 6-րդ և 7-րդ մակարդակներին համապատասխանեցնելու փորձ է կատարել՝մշակելով համապատասխան մատրիցաներ: Մասնագիտական կրթական ծրագրերը նկարագրված են ըստ շնորհվող որակավորումների և կրթական վերջնարդյունքների: Հաշվի առնելով նախորդ հավատարմագրման արդյունքում տրված խորհրդատվությունները, կրթական ծրագրերը վերանայելու, կրթական վերջնարդյունքները նկարագրելու նպատակով իրականացվել է համեմատական վերլուծություն՝ ուսումնասիրվել և համեմատվել է ավելի քան 25 երկրի առաջավոր փորձը, սակայն պետք է նշել, որ առարկաների բովանդակային վերլուծությունը դեռևս կատարված չէ: Ինչպես փորձագիտական վերլուծությունները, այնպես էլ այցի ժամանակ տարբեր շահակիցների հետ հանդիպումների արդյունքում պարզ դարձավ, որ գնահատված չէ տեսական և գործնական դասընթացների համամասնության արդյունավետությունը, քանի որ և արտաքին, և ներքին շահակիցները մատնանշեցին գործնական հմտությունների ձեռքբերմանն ուղղված դասընթացների պակասը, ինչպես նաև կենսաբանական գիտելիքներ ապահովող դասընթացների ժամաքանակների քչությունը:

Համեմատական վերլուծության ժամանակ համեմատության են ենթարկվել նաև WFME և եվրոդիրեկտիվի չափորոշիչները, համալսարանում կատարվել են փոփոխություններ ուսումնական պլաններում և վերանայվել են կրթական ծրագրերը: Սակայն հարկ է նշել, որ վերը նշված ստանդարտների պահանջներում կան բազմաթիվ այլ ոլորտներ. առողջապահության ոլորտի շահակիցների կարիքների առավել թիրախային հաշվի առնում ՄԿԾ վերջնարդյունքներում, ուսանողների մոտ պատասխանատվություն, վերլուծական և հետազոտական կարողություններ ձևավորող հանձնարարականների կիրառում, տվյալների վրա հիմնված կրթության իրականացում, գանահատման համակարգի բարելավում MiniCEX և OSCE տարբերակված քննությունների, անհատական պորտֆոլիոյի կիրառմամբ և այլն, որոնց համալսարանը չի անդրադարձել համեմատական վերլուծության ժամանակ:

Նախորդ հավատարմագրման արդյունքների հիման վրա ԵՊԲՀ-ի ուսումնական ստորաբաժանումների կողմից Tempus ALIGN ծրագրի շրջանակներում և 03.07.2015թ.-ի ՈՒՄԽ նիստով հաստատվել են անընդհատ և ինտեգրված կրթական ծրագրերի, դրանց դասընթացների փաստաթղթավորման նոր ձևաչափը և դրա լրացման ուղեցույցը, իրականացվել են վերապատրաստումներ և աշխատաժողովներ դասախոսական և վարչական կազմի համար:

Համալսարանը նախատեսում է նաև «Բուժական գործ» անընդհատ և ինտեգրացված ՄԿԾ-ի շրջանակներում ներդնել միջառարկայական դասընթացներ, որը որպես խորհրդատվություն տրված էր նախորդ հավատարմագրման գործընթացի փորձագիտական խմբի կողմից:

Այցի շրջանակներում պարզվեց, որ ԵՊԲՀ-ն նախատեսում է մոտակա տարիներին դառնալ հետազոտական ուղղվածության համալսարան, սակայն դեռևս բացակայում է ուսանողների մոտ հետազոտական և վերլուծական կարողություններ ձևավորող դասընթացները:

3.2 ՄՈՒՀ-ն ունի մանսագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականություն, ինչը նպաստում է ուսանողակենտրոն ուսուցմանը:

Նախորդ հավատարմագրման արդյունքներից ելնելով՝ ԵՊԲՀ-ն որդեգրել է ուսանողակենտրոն ուսուցմանը նպաստող դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականություն, որն ամրագրված է 2015-2020 թթ ռազմավարական ծրագրում:

ԵՊԲՀ-ն մշակել է դասավանդման և ուսումնառության մոտեցումների և մեթոդների արդիականացման քաղաքականություն և ընթացակարգ: Համալսարանում բացի դասավանդման ավանդական մեթոդներից կիրառվում են նաև իրավիճակների քննարկման /case study/, ինտերակտիվ և խմբակային մեթոդները: ՄԿԾ-ները կազմվել են ըստ ակնկալվող վերջնարդյունքների, որից ելնելով ընտրվում են դասավանդման մեթոդները: ՄԿԾ փաթեթներում առկա են նաև յուրաքանչյուր առարկայի վերջնարդյունքներին համապատասխան դասավանդման մեթոդները:

Պետք է նշել, որ Համաշխարհային բանկի և ՀՀ ԿԳՆ ԿԾԿ Նորարարությունների մրցակցային հիմնադրամի դրամաշնորհով միջազգային չափանիշներին համապատասխան երկու գերազանցության կենտրոնների հիմնումը ստեղծել է գործնական պարապմունքների կիրառման ավելի լայն հնարավորություններ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ Սիմուլյացիոն կենտրոնում սիմուլյատորներից հիմնականում օգտվում և վերապատրաստվում են կլինիկական օրդինատորները և բժիշկները: Այցի շրջանակներում պրազ դարձավ, որ չկա հատկացված առանձին ֆինանսավորում կենտրոնների համար: Կենտրոնների համար անհրաժեշտ մարդկային և նյութական ռեսուրսների տրամադրվումը չի կատարվում ըստ նախապես պլանավորման հիման վրա: Այցի շրջանակներում պարզվեց, որ Գերազանցության և Սիմուլիացիոն կենտրոններում պրակտիկ դասընթացներ անցնող խմբերը 12 ուսանողից էին բաղկացած, սակայն դեռևս ստուգված չէ խմբերի թվաքանակի արդյունավետությունը:

3.3 ՄՈՒՀ-ն ունի ուսանողների գնահատման քաղաքականություն՝ ըստ ուսումնառության արդյունքների, և ապահովում է ակադեմիական ազնվությունը:

ԵՊԲՀ-ի ռազմավարական ծրագրում նշված է, որ համալսարանը նախատեսում է բարելավել ուսանողների գնահատման քաղաքականությունը՝ օգտագործելով գնահատման բազմաբաղադրիչ համակարգը՝ ըստ ուսումնառության արդյունքների:

Նախորդ հավատարմագրման արդյունքների հիման վրա, հիմք ընդունելով փորձագետների նկատառումները և խորհրդատվությունները, ԵՊԲՀ-ն իրականացրել է գնահատման ձևերի բազմազանեցում՝ հաշվի առնելով դասընթացի և համապատասխան վերջնարդյունքների տեսակները և աստիճանական անցում է կատարել 2006-2011 թթ. գործող բացառապես թեստային եղանակով վերջնարդյունքների ստուգումից, ուսումնառության արդյունքների բազմաբաղադրիչ գնահատման համակարգին: Հարկ է, սակայն նշել, որ դեռևս բազմաբաղադրիչ գնահատման համակարգը, որը ներառում է ուսանողների ակտիվ ներգրավումը հետազոտական աշխատանքերում և պորտֆոլիոյի բաղադրիչը, ոչ բոլոր ամբիոններում է ներդրված: Ինչպես նաև դասախոսական կազմը վերապատրաստումներ չի անցել բազմաբաղադրիչ գնահատման համակարգի իրականացման վերաբերյալ:

Կլինիկական առարկաների դասընթացների շրջանակներում կիրառվում է թեստային և բանավոր քննության ձևերը: Համապատասխան գործնական և հիվանդի հետ շփվելու հմտությունների ձեռքբերման գնահատումն իրականացվում է կլինիկաներում:

Հանդիպումների ժամանակ պարզ դարձավ, որ թեստերի մշակման համար առկա է ընթացակարգ և ընդհանուր ձև, որի հիման վրա ամբիոնները կազմում են քննության թեստեր, ինչպես նաև յուրաքանչյուր կիսամյակ 30 տոկոսով թարմացվում է թեստերի բովանդակությունը: Պարզ դարձավ, նաև, որ ուսանողները հնարավորություն ունեն բողոքարկելու թեստերի արդյունքները: Հանդիպումներից պարզվեց, որ ուսանողները դիմում են ինչպես տեխնիկական, այնպես էլ թեստերի բովանդակային խնդիրների վերաբերյալ: Առկա էր ուսանողների բողոքների 90 տոկոս բավարարում:

Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ կլինիկաներում բանավոր քննություններն իրականացվում են միաժամանակ տարբեր դասախոսների կողմից առանձին-առանձին: Կլինիկական առարկաների դեպքում, որոնք անց են կացվում տարբեր կլինիկաներում, գնահատման հստակ չափանիշներ ըստ նախատեսված կրթական վերջնարդյունքների բացակայում են (քանի անգամ պետք է ուսանողը կրկնի գործողությունը, որ համարվի դրական): Չկան նաև տվյալներ, թե ուսանողը քանի հիվանդի հետ պետք է շփվի, որպեսզի ձեռք բերի անհրաժեշտ պրակտիկ հմտություններ: Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ կլինիկական առարկաների քննությունների ժամանակ քիչ են քննարկվում կլինիկական կոնկրետ դեպքեր:

Կլինիկաներում ցիկլերի վերահսկողության մեխանիզմը հստակ չէ: Ցիկլերի ընթացքում ուսանողների կատարած աշխատանքների համար պորտֆոլիոներ առկա չեն և չի հավաքագրվում տեղակատվություն, թե որ ուսանողը կլինկական ցիկլերի դեպքում, ինչ հմտություններ ձեռք բերեց և ինչ խնդիրներ դեռևս կան:

Համալսարանի ամփոփիչ ատեստավորումը «Բուժական գործ» և «Ստոմատոլոգիա» անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրերով ԵՊԲՀ-ում եռափուլ է: Երեք բաղադրիչների համամասնությունը վերջնական գնահատականի ձևավորման մեջ հետևյալն է 10%՝ գործնական, 40%՝ համակարգչային թեստային քննություն, 50%՝ բանավոր պատասխան: Այս համամասնությունը չի բխում ըստ նախատեսված կրթական վերջնարդյունքերի պրակտիկ գիտելիքներից և հմտություններից: Ավելին, ամփոփիչ ատեստավորման ժամանակ ուսանողների գրեթե 60-70%-ը ստանում է բավարար գնահատական: Միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովերում չկան արտաքին գործատուներ կամ ներկայացուցիչներ առողջապահության նախարարությունից:

ԵՊԲՀ-ում պրակտիկան իրականացվում է ՀՀ և Արցախի Հանրապետության տարբեր կլինիկաներում և բուժհաստատություններում, որոնց հետ կնքվում են պայմանագրեր յուրաքանչյուր տարի: Ուսանողները կարող են պրակտիկա անցնել նաև արտերկրում, եթե ուսանողները նախապես ձեռք են բերում համապատասխան պայմանավորվածություն կլինիկաների հետ: Պրակտիկայի ղեկավարները նշանակվում են բուժհաստատությունների տնօրենների կողմից, ովքեր ուղղորդում և վերահսկում են ուսանողների պրակտիկան, սակայն համալսարանի կողմից պրակտիկայի վերահսկան հստակ մեխանիզմներ առկա չեն: Պրակտիկաներն իրականացվում են ուսումնառության երկրորդ տարվանից սկսած ամառվա ընթացքում: Ամառային պրակտիկան անցկացվում է գարնանային կիսամյակի հիմնական քննաշրջանին հաջորդող շաբաթվանից սկսած: Նախորդ հավատարմագրման ժամանակ տրված խորհրդատվությունների հիման վրա 2015 թվականից սկսած, բացի ամառային պրակտիկաներից, ուսանողները կարող են անցնել այլընտրանքային պրակտիկաներ, իրականացնեն հերթապահություններ, սակայն այլընտրանքային պրակտիկան հիմնված է ուսանողների անհատական ցանկությունների վրա:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ նաև, որ առկա են պրակտիկայի կազմակերպման դժվարություններ, որոնք կապված են ուսանողների մեծ քանակի հետ:

3.4 ՄՈՒՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերը բովանդակային առումով համահունչ են նմանատիպ այլ ճանաչված մասնագիտությունների կրթական ծրագրերին և նպաստում են ուսանողների ու դասախոսների շարժունությանը:

Նախորդ հավատարմագրման գործընթացի փորձագիտական խմբի կողմից ներկայացված խորհրդատվության համաձայն, ԵՊԲՀ-ն ստեղծել է նոր համահամալսարանական ստորաբաժանում՝ Ուսումնամեթոդական վարչության կրթական ծրագրերի բաժին, որպեսզի օժանդակի ուսումնական և մեթոդական բարեփոխումների իրականացմանը:

Կատարվել է համեմատական վերլուծություն «Բուժական գործ» անընդհատ և ինտեգրացված ՄԿԾ-ի համար՝ 20-ից ավելի համալսարանների 30 ՄԿԾ-ի հետ և «Ստոմատոլոգիա» ՄԿԾ-ի համար՝ 14 երկրի 28 ՄԿԾ-ների ուսպլանների հետ: ՄԿԾ-ների բովանդակությունները և անհրաժեշտ փոփոխությունները քննարկվում են ու հետագայում երաշխավորվում ՈՒՄԽ-ում: Համապատասխան ամբիոններն ըստ իրենց մասնագիտական ուղղվածության մասնակցում են խնդիրների համակարգման և մշակման գործընթացին՝ որպես առաջնային փուլի օղակներ: ՄԿԾ-ների արտաքին գնահատումը բացակայում է:

Չնայած համալսարանում իրականացվող ՄԿԾ-ների համեմատական վերլուծությունների, այնուամենայնիվ կան առարկաններ, որոնք չեն համապատասխանում արտասահմանյան ծրագրերին (օրինակ միջազգային ուսանողները անցնում են մաթեմատիկա, ինչը այլ երկրների համանման ծրագրերում առկա չէ):

Փորձագիտական հանդիպումների ընթացքում պարզվեց, որ կան առարկաներ, որոնք անհրաժեշտություն կա ներառելու ուսումնական պլաններում, սակայն դեռևս չի երաշխավորվել ՈՒՄԽ-ի կողմից, չնայած որ երկար տարիներ քննարկվում է: Ավելին, ուսպլաններում պրեռեկվիզիտային առարկաների նվազում է տեղի ունեցել, սակայն ԵՊԲՀ-ն ձգտում է WFME չափանիշներին, որտեղ մեծ տեղ է տրվում հենց կենսաբանական պրեռեկտվիզիտային առարկաներին:

Չնայած կատարված համեմատական վերլուծությունների, ԵՊԲՀ-ում շատ քիչ է դասախոսների և ուսանողների միջազգային շարժունությունը:

3.5 ՄՈՒՀ-ը որդեգրել է մասնագիտությունների կրթական ծրագրերի մշտադիտարկման, արդյունավետության գնահատման, բարելավման քաղաքականություն:

ԵՊԲՀ-ում գործում են կրթական ծրագրերի մշակման, գնահատման և բարելավման համապատասխան ենթակառուցվածքներ: Առկա են մեխանիզմներ և գործիքների շղթաներ (ամբիոն – ՈՒՄԽ - Համալսարանի գիտական խորհուրդ), որոնք մշտադիտարկում և հաստատում են կրթական ծրագրերը: Այնուամենայնիվ փորձագիտական այցի շրջանակներում պարզ դարձավ, որ ուսումնական պլաններում տարբեր առարկաների ինչպես ծանրաբեռնվածության, այնպես էլ բովանդակային փոփոխությունների առաջարկությունները (հատկապես կլինիկական առարկաների դեպքում) ոչ միշտ են պատշաճ քննարկվում Ուսումնամեթոդական Խորհրդի կողմից կամ հասնում համապատասխան օղակներին քննարկման և եզրահանգման:

ՈՒՄԽ-ում պարբերաբար քննարկում են պրեռեկտվիզիտային առարկաների ժամաքանակը. մասնավորապես տեսական ամբիոնների կողմից տրված գիտելիքների համապատասխանեցումը կլինիկական առարկաների պահանջներին: Սակայն, այցի ընթացքում պարզ դարձավ, որ դեռևս տեսական ամբիոնների կողմից տրված գիտելիքները և գործնական հմտությունների ժամաքանակների համամասնությունը պահպանված է: Ավելին, այն ռեսուրսները (ինչպես մարդկային, այնպես էլ տարածքային և ֆինանսական), որոնք տեսական ամբիոններն ունեն, քիչ են ըստ համալսարանի կողմից որդեգրած քաղաքականության՝ համապատասխանեցնելու ՄԿԾ-ներն WFME պահանջներին:

ՈՒՄԽ-ներում ՄԿԾ-ները մշտադիտարկող արտաքին շահակիցներ չկան: ՈՒՄԽ աշխատանքների արդյունավետությունը դեռևս գնահատված չէ:

ՄԿԾ-ները գնահատվում են նաև տարբեր հարցախույզների, ֆոկուս խմբային և անհատական հանդիպումների: Սակայն ՄԿԾ-ների մշտադիտարկման, արդյունավետության գնահատման հաստատված քաղաքականություն առկա չէ:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ ԵՊԲՀ-ի մասնագիտական կրթական ծրագրերում նախորդ հավատարմագրումից հետո իրականացվել են բարելավումներ, ՄԿԾ-ները համահնչեցված են առաքելությանը, համապատասխանեցված են ՈԱՇ-ի պահանջներին, ինչպես նաև միջազգային բժշկական չափանիշներին (WFME, եվրոդիրեկտիվներ), ինչը կարևոր նախադրյալ է համալսարանի Ռազմավարական ծրագրով սահմանված նպատակները իրականացնելու տեսանկյունից: Քանի որ համալսարանի միջազգայնացումը և միջազգային ուսանողների աճող քանակը որպես ԵՊԲՀ ռազմավարական առաջնահերթություն է դիտվում, փորձագիտական խումբը, գտնում է, որ ԵՊԲՀ-ի ինտեգրված կրթական ծրագրերի իրականացման և կատարելագործման նպատակով ՄԿԾ-ները միջազգային չափանիշներին առավել շատ համապատասխանեցման կարիք ունեն (WFME- ի Չափորոշիչ 2. Կրթական ծրագիր; 3. Ուսանողների գնահատում; 6. Կրթական ռեսուրսներ: 6.5 Կրթական փոխանակման ծրագրեր; 7. Ծրագրի գնահատումը): Դա կապահովի կրթական ծրագրերի մրցունակությունը միջազգային մակարդակով: Փորձագիտական խումբը դրական է գնահատում գերազանցության և սիմուլիացիոն կենտրոնների ստեղծումը, որը կնպաստի ՄԿԾ-ներում ըստ վերջնարդյունքների ուսանողների մոտ անհրաժեշտ գործնական կարողությունների և հմտությունների ձևավորմանը: Այնուամենայնիվ, փորձագիտական խումբը գտնում է, որ կարիք կա որդեգրել այնպիսի քաղաքականություն, որը թույլ կտա բարձր կուրսերի ուսանողներին առավել հաճախ օգտվել սիմուլիոցիոն սարքավորումներից: Իսկ գերազանցության և սիմուլիացիոն կենտրոնների առանձին ֆինանսավորումը կնպաստի կենտրոնների շարունակական զարգացմանը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ նախորդ հավատարմագրման արդյունքների հիման վրա փոփոխություններ են իրականացվել դասավանդման մեթոդներում: Դասավանդման ավանդական մեթոդներից բացի, ԵՊԲՀ-ի որոշ ամբիոններում կիրառվում են խնդիրների ուսումնասիրության վրա հիմնված, փոքր խմբերով ուսուցումը, որը սակայն համատարած բնույթ չի կրում: Փորձագիտական խումբը գտնում է, որ ուսուցման նորարարական մեթոդների և տարբեր տեխնոլոգիաների կիրառումը, որը ներառում է խմբային դասավանդման, կոնկրետ դեպքերի վրա հիմնված ուսուցման, մահճակալի շուրջ դասավանդման մեթոդների համատարած կիրառման քաղաքականության որդեգրումը, կնպաստի որակյալ կրթության իրականացմանը և սահմանված վերջնարդյունքների ձեռքերմանը:

Դրական է, որ նախորդ հավատարմագրման գործընթացի փորձագիտական խորհրդատվությունների հիման վրա ԵՊԲՀ-ն իրականացրել է գնահատման ձևերի բազմազանեցում և կարևորում է գործնական հմտությունների գնահատումը, սակայն բազմաբաղադրիչ գնահատման քաղաքականությունը դեռևս մի քանի ամբիոններում է կիրառվում: Գնահատման բազմաբաղադրիչ համակարգի լիարժեք ներդրումը կնպաստի ուսանողների մոտ վերլուծական և հետազոտական հմտությունների և գործնական կարողությունների ամրապնդմանը: Հարկ է նաև նշել, որ միջազգային չափանիշներում առավել կարևորվում է ուսանողների ընթացիկ ու ամփոփիչ գնահատման մեթոդների կիրառումը. տեղում անցկացվող աշխատանքի հիման վրա գնահատում, ուսանողի պորտֆոլիո, ինչպես նաև տարբեր ցիկլերի ժամանակ ուսանողների կողմից ձեռքբերված հմտությունների վերահսկում և մշտադիտարկումներ, որոնք համալսարանում դեռևս ամբողջական չեն իրականացվում: Կլինիկաներում բանավոր քննությունների անցկացման ընթացքում տարբեր դասախոսների կողմից միաժամանակ տարբեր ուսանողներին քննելու պրակտիկան նվազեցնում է գնահատման օբյեկտիվությունը: Ամփոփիչ ատեստավորման ժամանակ գործնական հմտությունների գնահատմանը գնահատականի միայն տասը տոկոսի հատկացումը հանգեցնում է նրան, որ ամփոփիչ գնահատականում գերակշռող դեր է ունենում տեսական բաղադրիչը, ինչը չի արտահայտում ՄԿԾ-ներում սահմանված վերջնարդյունքների ձեռքբերման աստիճանը: Միևնույն ժամանակ, ԵՊԲՀ-ի հետ չփոխկապակցված արտաքին գործատուների բացակայությունը ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովներում չի նպաստում որակավորումների շնորհման վերաբերյալ անկողմնակալ կարծիքի ձևավորմանը:

Համալսարանում իրականացվող այլընտրանքային պրակտիկաների համատարած և ըստ հաստատված քաղաքականության ներդրումը կնպաստի ուսանողների մոտիվացիայի և պատասխանատվության բարձրացմանը:

Թեև ԵՊԲՀ-ն իրականացրել է ՄԿԾ համեմատական վերլուծություն մի շարք արտասահմանյան համալսարանների հետ, այնուամենայնիվ, ներկայում առկա են որոշակի խնդիրներ կապված կենսաբանական պրեռեկվիզիտային առարկաների ավելացման, ուսանողների և դասախոսների շարժունության ակտիվացման հետ, որոնք էլ խոչընդոտում են առավել գրավիչ և միջազգային չափանիշներին համահունչ կրթություն տրամադրելուն:

ԵՊԲՀ-ում գործում են տարբեր ստորաբաժանումներ և հանձնախմբեր, որոնք պատասխանատու են ՄԿԾ-ների մշտադիտարկումների համար, իրականացվում են նաև հարցումներ ՄԿԾ արդյունավետության գնահատման նպատակով, սակայն արտաքին շահակիցները ներգրավված չեն ՄԿԾ-ների մշակման և վերանայման գործընթացներում, ինչպես նաև համապատասխան պաշտոնական գրավոր հարցումները բացակայում են, ինչը խոչընդոտում է համալսարանի որդեգրած ռազմավարական նպատակի իրագործմանը. այն է՝ առողջապահության ոլորտի և աշխատաշուկայի կարիքներին համապատասխան որակյալ կադրերի պատրաստումը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ԵՊԲՀ ՄԿԾ-ները համահունչ են հաստատության առաքելությանը, վերլուծվել է դրանց համապատասխանությունը ՈԱՇ-ի բնութագրիչներին, արտասահմանյան մի շարք համալսարանների ՄԿԾ-ների հետ բենչմարքինգի հիման վրա վերանայվել են ուսումնական պլանները և ծրագրերը, նախորդ հավատարմագրման արդյունքների հիման վրա բարելավվել են դասավանդման և ուսումնառության մեթոդները, բազմազանեցվել են գնահատման համակարգի բաղադրիչները, գործնական հմտությունների ձևավորման և զարգացման նպատակով բացվել են գերազանցության և սիմուլիացիոն կենտրոններ, տարբեր ստորաբաժանումների կողմից պարբերաբար իրականացնում են ծրագրերի մշտադիտարկումներ և արդյունքների քննարկումներ դասավանդող ամբիոնների հետ, փորձագիտական խումբը գտնում է, որ ԵՊԲՀ-ն համապատասխանում է Չափանիշ 3-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ԵՊԲՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 3-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

Խորհրդատվություններ.

1. Միջազգային չափանիշներին ամբողջապես համապատասխանեցնելու նպատակով՝ իրականացնել ՄԿԾ-ների համեմատական վերլուծություն, այդ թվում նաև առարկաների բովանդակային համեմատություն և անհրաժեշտ փոփոխությունների իրականացում:
2. Ուսանողների մոտ հետազոտական և վերլուծական հմտությունների ձեռքբերման նպատակով՝ լիարժեք ներդնել գնահատման բազմաբաղադրիչ համակարգը և ներդնել քննությունների տարբերակված մեթոդներ /MiniCEX և OSCE/, ինչպես նաև ուսանողի պորտֆոլիո:
3. Ուսանողների մոտ գործնական հմտությունների զարգացման նպատակով՝ ներդնել կոնկրետ դեպքերի ուսումնասիրության պրակտիկան, սիմուլիցիոն սարքերի վրա հիմնված ուսուցում և գնահատում:
4. Սիմուլիացիոն կենտրոնների շարունակական զարգացման նպատակով՝ սահմանել կենտրոնների համար անհրաժեշտ ֆինանսավորում և մարդկային ռեսուրսներ:
5. Վերանայել կենսաբանական առարկաների անվանացանկը, ինչպես նաև այդ առարկաների լսարանային, գործնական և լաբորատոր ժամաքանակները՝ համապատասխանեցնելով այն միջազգային չափորոշիչներին:
6. Ուսանողների մասնագիտական առաջընթացի ապահովման նպատակով՝ ներդնել տարբեր ցիկլերի գործունեության վերահսկողության և մշտադիտարկման համակարգ:
7. Ընդլայնել ուսանողների պրակտիկաների հնարավորությունները՝ այլընտրանքային պրակտիկան դարձնելով պարտադիր բոլոր ուսանողների համար:

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով:

Փաստեր

4.1 ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության իրականացման հստակ մեխանիզմներ:

ԵՊԲՀ-ի ուսանողների ընդունելությունն իրականացնում է համաձայն ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգի՝ բացառությամբ օտարերկրյա ուսանողների: Ընդհանուր առմամբ յուրաքանչյուր տարի ԵՊԲՀ է ընդունվում է միջինում 700 տեղացի ուսանող:

Օտարերկրյա ուսանողների ընդունելության քննությունները համասարանը կազմակերպում է ինքնուրույն՝ համաձայն ներբուհական քննությունների հաստատված կարգի: Հնդիկ դիմորդների ընտրությունը կատարվում է Հնդկաստանում՝ համալսարանի ներկայացուցչի՝ պրոռեկտորի մասնակցությամբ: Իսկ այլ օտարերկրացիների դեպքում, դիմորդները քննություններ հանձնում եմ ԵՊԲՀ-ում: Քննությունների կազմակերպման և վերահսկման նպատակով ԵՊԲՀ ռեկտորի հրամանով ստեղծվում է ընդունող հանձնաժողով:

Համալսարան կարող են դիմել այն օտարերկրացիները, ովքեր ունեն ավարտական փաստաթուղթ, որը վկայում է, որ նրանք ստացել են առնվազն ՀՀ միջնակարգ կրթությանը համարժեք կրթություն: Օտարերկրացի դիմորդների գիտելիքների ստուգումն իրականացվում է անգլերեն լեզվի և ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն առարկաներից քննության ձևով: Դիմորդն իրավունք ունի ընտրելու երկուսը՝ ֆիզիկա, քիմիա և կենսաբանություն առարկաներից: ԵՊԲՀ-ում սովորող ուսառողներից յուրաքանչյուր չորրորդ ուսանողը (մոտ 25 տոկսը) օտարկերացի է:

Բացի պլանային ընդունելությունից, ձևավորվել է այնպիսի պրակտիկա, երբ համալսարանը նախապես դիմում է ՀՀ ԿԳ նախարարություն՝ լրացուցիչ (միջինում 150 ուսանող տարեկան) ընդունելություն կազմակերպելու թույլտվությամբ: Այդ լրացուցիչ տեղերը զբաղեցնում են ընդունելության միասնական քննություն հանձնած, սակայն մինիմալ շեմը չհաղթահարած դիմորդները:

ԵՊԲՀ ընդունելության մասին տեղեկատվության տարածումը տեղի է ունենում ԵՊԲՀ պաշտոնական կայքի, սոցիալական ցանցերի, մեդիայի և լրատվության միջոցով: Ինչպես նաև համալսարանը դպրոցներում կազմակերպում է բազմաթիվ հանդիպումներ, որտեղ ներկայացվում են ԵՊԲՀ-ում առկա մասնագիտությունները:

Նախորդ հավատարմագրման ժամանակ փորձագիտական խմբի կողմից արված դիտարկումներից ելնելով, ինչպես նաև ուսանողների հավաքագրման և ընդունելության մեխանիզմների արդյունավետությունը պարզելու համար: ԵՊԲՀ Կրթության որակի գնահատման և ապահովման կենտրոնի կողմից իրականացվել է դիմորդների մուտքային որակի և հետագա ուսումնառության ընթացքում նրանց ցուցաբերած առաջադիմության կորելյացիոն վերլուծություն: Ելնելով ներկայացված վերլուծությունից՝ համալսարանն այսօր քննարկում է ցածր գնահատականներով լրացուցիչ հայտով ուսանողներ ընդունելու արդյունավետության և նպատակահարմարության հարցը: Համապատասխան գերատեսչության հետ քննարկվում է նաև ընդունելության քաղաքականության մեջ փոփոխություններ կատարելու և համալսարանում ինքնուրույնություն տալու անհրաժեշտության հարցը:

4.2 ՄՈՒՀ-ը որդեգրել է ուսանողների կրթական կարիքների ուսումնասիրության քաղաքականություն և ընթացակարգեր:

ԵՊԲՀ-ում գործում են ուսանողների կրթական կարիքների վերհանման մի քանի մեխանիզմներ: Ուսանողներն իրենց խնդիրները քննարկում են ամբիոնի վարիչների կամ ուսումնական գծով պատասխանատուների հետ: Բոլոր ֆակուլտետների ուսանողները հանդիպումներ ունեն ռեկտորի հետ տարեկան 2-3 անգամ: Ընդունելության սահմանված օրեր կան ռեկտորի և ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի հետ հանդիպումների համար: Ուսանողների կողմից բարձրացված հարցերի լուծման համար քննարկում են իրականացվում ֆակուլտետի և համալսարանի գիտական խորհուրդներում, հոգաբարձուների խորհրդի նիստերում:

Համալսարանն ուսանողների շրջանում անցկացնում է հարցումներ, որոնց նպատակն է պարզել ուսումնական ռեսուրսներով ապահովվածության, գործող գնահատման և դասավանդման մեթոդների արդյունավետության վերաբերյալ: Բացահայտված խնդիրների արդյունքում կատարվել են փոփոխություններ գնահատման մեթոդներում: Ներդրվել է բազմաբաղադրիչ գնահատման համակարգը, որի կիրառումից ուսանողները գոհ են, սակայն այն դեռևս կրում է հատվածական բնույթ և չի տարածվում բոլոր ամբիոնների վրա:

Փորձագիտական այցի ժամանակ պարզ դարձավ, որ Կրթության որակի գնահատման և ապահովման կենտրոնի կողմից անցակվող հարցումներին մասնակցում է ուսանողների 50-60%-ը: Միջազգային ուսանողների մասնակցության մակարդակը նույնպես ցածր է:

4.3 ՄՈՒՀ-ը ստեղծում է լրացուցիչ պարապմունքներ կազմակերպելու և խորհրդատվություն տրամադրելու հնարավորություններ՝ ուսանողների արդյունավետ ուսումնառությանը նպաստելու համար:

ԵՊԲՀ-ում իրականացվում են ուսանողների համար լրացուցիչ պարապունքների կազմակերպում և պրոֆեսորադասախոսական կազմի կողմից խորհրդատվությունների տրամադրում:

Ելնելով տարբեր ֆակուլտետներում սովորող ուսանողների թվից և ուսանող-դեկանատի աշխատող հարաբերակցության ցուցչից՝ ԵՊԲՀ-ն ավելացրել է ընդհանուր բժշկության ֆակուլտետի փոխդեկանների թիվը՝ 3-ից դարձնելով 6՝ յուրաքանչյուր կուրսի աշխատանքները կազմակերպելու, խորհրդատվություն տրամադրելու համար առանձնացնելով 1 փոխդեկան, 1 տեսուչ (ինչը պայմանավորված էր այդ ֆակուլտետի յուրաքանչյուր կուրսում ընդգրկված 400-500 ուսանողների մեծ թվաքանակով):

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ որ, դեկանատներում և ամբիոններում սահմանված են հերթապահությունների գրաֆիկներ, բոլոր ամբիոններում կան հերթապահ դասախոսներ, որոնք ուսանողներին տրամադրում են խորհրդատվություններ ամբողջ կիսամյակի ընթացքում, սակայն ըստ փորձագիտական այցի տվյալների՝ ուսանողների մասնակցությունը բարձր չէ, իսկ քիչ մասնակցության պատճառները դեռևս ուսումնասիրված չեն ԵՊԲՀ-ի կողմից:

Կազմակերպվում են նաև լրացուցիչ պարապունքներ դասերը բաց թողած ուսանողների համար՝ «Բաց թողնված դասերի լրացման կարգի» համաձայն:

Ուսանողների առաջարկով կազմակերպվում են նաև լրացուցիչ թեմատիկ դասախոսություններ՝ ուսանողների նախընտրած թեմաների շուրջ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողները ակտիվ ներգրավված են այս գործընթացներում:
2017-2018 և 2018-2019 ուստարիներին Ընդհանուր բժշկության ֆակուլտետի 5-րդ, 6-րդ կուրսի ուսանողների և կլինիկական օրդինատորների համար համալսարանի «GLOBUS» և «FMGE» ծրագրերի շրջանակներում կարիերայի կենտրոնի կողմից կազմակերպվել են 3-6 ամսյա անվճար լրացուցիչ դասընթացներ՝ ամերիկյան և հնդկական բժշկագիտական տեսական և կլինիկական մոդուլների ընդգրկմամբ հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ օտարերկրյա ուսանողները գրանցել են ցածր ցուցանիշներ FMGE

քննությունից: Լրացուցիչ պարապմունքներում ընդգրկված են եղել ավելի քան 94 ուսանող:

4.4 ՄՈՒՀ-ում սահմանված է վարչական աշխատակազմին դիմելու հստակ կանոնակարգ և ժամանակացույց՝ ուսանողներին օժանդակություն և ուղղորդում տրամադրելու նպատակով:

ԵՊԲՀ-ում ուսանողների համար վարչական անձնակազմին դիմելու հստակ կանոնակարգ է գործում: Ուսանողները կարող են դիմել ինչպես կուրսերի, հոսքերի կողմից ընտրված ավագների, ՈՒԽ-ի միջոցով, այնպես էլ անհատական՝ ըստ հանդիպումների համար սահմանված օրերի. շաբաթական երեք անգամ պրոռեկտորների, մեկ անգամ՝ ռեկտորի և ամեն օր դեկանների կամ փոխդեկանների հետ:

Ուսանողների հետ հանդիպման ժամանակ պարզ դարձավ, որ ուսանողների բավարարվածությունը վարչական անձնակազմից՝ օժանդակություն և ուղղորդում ստանալու տեսանկյունից, բարձր է:

4.5 ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների կարիերային նպաստող ծառայություններ:

ԵՊԲՀ-ում ուսանողների կարիերային նպաստող ծառայությունների մատուցման համար պատասխանատու կարիերայի կենտրոնի գործառույթներն ամրագրած են կանոնադրությամբ: Կարիերայի կենտրոնը գործում է 2017 թվականից, որը ձևավորվել է նախորդ հավատարմագրման արդյունքների հիման վրա: Համալսարանում գործում է շրջանավարտների միություն, կայքէջում առկա է ուսանողների գրացման հարթակ:
Վերջին 3 տարիների ընթացքում ԵՊԲՀ Կարիերայի կենտրոնի կողմից ձևավորվել է շրջանավարտների ակումբը, որին ներկայումս անդամագրված է ավելի քան 2500 շրջանավարտ, որոնք աշխատում են աշխարհի տարբեր երկրներում (Հնդկաստան, ԱՄՆ, ՌԴ, Մեծ Բրիտանիա, Լիբանան և այլն):

Համալսարանն իրականացնում է նաև շրջանավարտների ինքնակենսագրականների տվյալների բազայի ընթացիկ համալրում: Կարիերայի կենտրոնը համագործակցում է տարբեր դեղագործական ընկերությունների («ՏԱԿԵԴԱ», «Սեռվիե Լաբորատորիես»), արտասահմանյան դեղագործական ցանցերի («Ջեորջիա ֆարմասյութիքլս»), լաբորատորիաների («ԷՖԷմԴիԿաԷլ»), խոշոր բժշկական կենտրոնների («Շենգավիթ» ԲԿ, «ԱրթՄեդ» ԲԿ, ՀՀ ԱՆ «Մաշկաբանության եվ սեռավարակաբանության բժշկագիտական կենտրոն» ՓԲԸ) հետ: Համագործակցության արդյունքում 20 շրջանավարտ մասնագիտական գործունեություն է ծավալում տվյալ բժշկական կենտրոններում: ԵՊԲՀ պաշտոնական կայք-էջում «Կարիերա» բաժնում առանձնացվել են «Գործատուներին», «Շրջանավարտներին», «Թափուր աշխատատեղեր» ենթաբաժինները տեղեկատվության տարածման նպատակով:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ կարիերայի կենտրոնը համագործակցում է մարզպետարանների հետ, կապ հաստատում գործատուների և ՀՀ զբաղվածության կենտրոնի, մասնագիտական ասոցիացիաների հետ:

4.6 ՄՈՒՀ-ն աջակցում է ուսանողներին՝ ներգրավվելու հաստատության գիտահետազոտական աշխատանքներում:

ԵՊԲՀ-ն նախորդ հավատարմագրման գործընթացի փորձագիտական խմբի տրված խորհրդատվություններից ելնելով՝ իր ՌԾ-ում առանձնացրել է հետևյալ խնդիրը. մշակել ուսանողների լայն հատվածին հետազոտական աշխատանքներում ներգրավելու քաղաքականություն և դրա իրականացման մեխանիզմներ: Տվյալ խնդրի լուծման համար ԵՊԲՀ-ն մշակվել է ուսանողների հետազոտական ակտիվության կրեդիտավորման

գործընթացը, որի արդյունքում գնահատվելու է ուսանողների մասնակցությունը հետազոտական աշխատանքներին և գիտական միջոցառումներին: Սակայն հարկ է նշել, որ տվյալ գործընթացը դեռևս չի կիրառվել:

Մշակվել և որոշ ամբիոններում ներդրվել է գնահատման բազմաբաղադրիչ համակարգը, որում իր հստակ չափաբաժինն ունի նաև հետազոտական բաղադրիչը: Ներդրված համակարգի արդյունքում Հիգիենայի և էկոլոգիայի ամբիոնում ակտիվացել է ուսանողների մասնակցությունը հետազոտական աշխատանքներում, որտեղ 1 տարվա ընթացքում ուսանողների կողմից իրականացվել են հետազոտական 252 աշխատանք:

Փորձագիտական այցի ժամանակ պարզ դարձավ, որ գիտահետազոտական աշխատանքներում ուսանողների ուսանողների մասնակցությունը կամավոր է: Կլինիկական հետազոտությունները սահմանափակ են: Հետազոտական աշխատանքներում ուսանողների ներգրավվածության խրախուսման մեխանիզմներ դեռևս մշակված չեն:

Փորձագիտական այցի ժամանակ պարզ դարձավ, որ հետազոտական աշխատանքներում ուսանողների ներգրավվածությունը մեծապես կախված է իրենց մոտիվացիայից, այդ իսկ պատճառով ՈւԳԸ-ն կազմակերպում է միջոցառումներ («Ուսանողական գիտական օր», «Առաջին քայլերը գիտահետազոտական աշխատանքների ճանապարհին», «Արտասահմանցի ուսանողների գիտական կոնֆերանսը» և այլն) ուսանողներին մոտիվացնելու համար:

4.7 ՄՈՒՀ-ում գործում է ուսանողների իրավունքների պաշտպանության համար պատասխանատու մարմին:

ԵՊԲՀ-ում ուսանողների իրավունքների պաշտպանության, նրանց խնդիրների քննարկման և շահերի ներկայացման համար պատասխանատու մարմիններն են՝ ՈՒԽ-ն, Իրավաբանական կլինիկան, որոնց գործառույթները ամրագրված են իրենց կանոնադրություններում: Սակայն Իրավաբանական Կլինիկայի կարգավիճակը դեռևս հաստատված չէ:

Վերը նշված կառույցները իրականացնում են տեղեկատվության տարածում, ուսանողների խնդիրների բացահայտում և իրավունքների պաշտպանություն ինչպես տեղացի ուսանողների, այնպես էլ միջազգային ուսանողների համար: ՈՒԽ-ում առկա էր օտարերկրյա ուսանողների հետ աշխատանքների համակարգման պատասխանատու:

2017թ-ից գործող Իրավաբանական կլինիկան գործունեության սկզբից ի վեր՝ ուսանողներից ստացել է մոտ 100 դիմում: Ուսանողները հիմնականում դիմում են իրավաբանական կլինիկա կապված ուսման վարձավճարների, ուսումնական զեղչերի, անհարգելի բացակայած դասերի լրացման կարգի հետ առնչվող հարցերի, զինվորական ծառայությունից տարկետման իրավունքի և այլնի հետ: Առկա է դիմումների 99 տոկոս բավարարում:

4.8 ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների կրթական, խորհրդատվական և մատուցվող այլ ծառայությունների գնահատման և որակի ապահովման մեխանիզմներ:

ԵՊԲՀ-ում ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ մատուցվող ծառայությունների գնահատման և որակի ապահովման ուղղությամբ գործում է հարցումների մեխանիզմը. ուսանողների կողմից դասախոսների գնահատման և ստացած կրթությունից բավարարվածության վերաբերյալ: Հարցումների արդյունքնում բացահայտվել են խնդիրներ գրականության, տարբեր կլինիկաներում ցիկլերի վերահսկողության, պրակտիկ դասաժամերի պակասի, սիմուլիացիոն կենտրոններում քիչ ժամանակի անցկացման հետ կապված:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ հարցումներին ուսանողների մասնակցությունը բարձր չէ, ինչպես նաև օտարերկրյա ուսանողների շրջանում քիչ են իրականացվում կարիքների գնահատման հարցումներ:

Կարևոր է նշել, որ ուսանողների կրթական, խորհրդատվական և մատուցվող այլ ծառայությունների գնահատման և որակի ապահովման այլ մեխանիզմներ, բացի դասախոսը ուսանողի աչքերով, հարցումներից առկա չէ: Բացի այդ, իրականացված հարցումների արդյունքները չեն քննարկվում ուսանողների հետ:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում, որ ԵՊԲՀ-ում գործող ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության մեխանիզմները ապահովում են տեղեկատվության տարածումը, ընդունելության գործընթացի արդյունավետ իրականացումը և տարբեր երկներից ուսանողների ներգրավումը:
Փորձագիտական խումբը հատկանշական է համարում ԵՊԲՀ-ի կողմից ուսանողների կրթական կարիքների վերհմանման որդեգրած քաղաքականությունը: Ուսանողները հնարավորություն ունեն իրենց խնդիրները բարձրաձայնել ինչպես ռեկտորի, այնպես էլ պրոռեկտորների, դեկանների, ամբիոնների վարիչների հետ հանդիպումների ժամանակ: Այս հանդիպումները նպաստում են ուսանողների կարիքների և առկա խնդիրների դուրսբերմանը և լուծումների պլանավորմանը: Փորձագիտական խումբը լավ փորձ է դիտարկում ԵՊԲՀ-ում գործող Իրավաբանական կլինիկայի առկայությունը, որը զբաղվում է ուսանողների բողոքների քննմամբ, որը նպաստում է ուսանողների մոտ առաջացած խնդիրների հիմնավոր և անաչառ ուսումնասիրությանը և օրենքի սահմաններում դրանց լուծմանը: Սակայն համալսարանի կառուցվածքային համակարգում Իրավաբանական կլինիկայի ներառումը և գործունեության կանոնակարգումը կնպաստեն ենթակառուցվածքի առավել համակարգված աշխատանքին: ԵՊԲՀ-ում Ուսանողական խորհրդարանի առկայությունը նույնպես նպաստում է կրթական գործընթացում ուսանողների մոտ առկա խնդիրների բացահայտմանը և ուսանողների իրավունքների պաշտպանությանը:

Թեև ԵՊԲՀ-ն որդեգրել է քաղաքականություն ուսանողներին հետազոտական աշխատանքներում ներգրավելու համար, սակայն ներկայում գործընթացը հիմնված է ավելի շատ ուսանողների անհատական նախաձեռնության և մոտիվացիայի վրա, որը չի ապահովում մեծ թվով ուսանողների ներգրավվածությանը հետազոտություններում և կարող է խոչընդոտ հանդիսանալ նրանց մոտ վերլուծական կարողությունների ձեռքբերման համար:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ տարբեր հարցերի վերաբերյալ խորհրդատվություն, ուղղորդում և օժանդակություն ստանալու համար ուսանողները կարող են դիմել ամբիոնների հերթապահ դասախոսներին, ինչպես նաև փոխդեկաններին: Ուսանողների համար, այդ թվում՝ նաև օտարերկրյա, ստեղծված են լրացուցիչ պարապմունքների հնարավորություններ, որոնք հնարավորություն ունեն լրացնելու բաց թողնված դասերը: Վերոնշյալ մեխանիզմները նպաստում են ուսանողների առաջընթացին և արդյունավետ ուսումնառությանը:

Չնայած, որ ԵՊԲՀ-ում իրականացվում են դասախոսը ուսանողների աչքերով հարցումներ, որոնց արդյունքնում բացահայտվում են խնդիրներ ուսումնառության հետ կապված, այնուամենայնիվ փորձագիտական խումբը գտնում է, որ դեռևս համակարգված բնույթ չի կրում հարցումների արդյունքների տարածումը և բացահայտված խնդիրների լուծումը, ինչն էլ կարող է խոչընդոտել կրթական և խորհրդատվական ծառայությունների որակի շարունակական բարելավմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ԵՊԲՀ-ում առկա են ուսանողների ընտրության, հավաքագրման, ընդունելության հստակ և թափանցիկ մեխանիզմներ,

իրականացվում է տեղեկատվության տարածում ինչպես ազգային, այնպես էլ միջազգային մակարդակներում, առկա են ուսանողների կարիքների բացահայտման մի շարք մեխանիզմներ, ուսանողները հնարավություն ունեն իրենց խնդիրների մասին բարձրաձայնելու և քննարկելու վարչական օղակի տարբեր մակարդակներում, ինչպես նաև առկա է լրացուցիչ պարապմունքների և բաց թողնված դասերը լրացվելու հնարավորություն, առկա են ուսանողների իրավունքների պաշտպանության մի քանի կառույցներ, համալսարանն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով, փորձագիտական խումբը գտնում է, որ ԵՊԲՀ-ի գործունեությունը համապատասխանում է ՉԱՓԱՆԻՇ 4-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ԵՊԲՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 4-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

Խորհրդատվություններ.

1. Ակտիվացնել ուսանողների մասնակցությունը հետազոտական աշխատանքներում՝ հստակ մեխանիզմների մշակման և ներդրման միջոցով, որոնք թույլ կտան մեծ թվով ուսանողներին ներգրավել հետազոտական աշխատանքներում:
2. Բազմազանեցնել ուսանողների կրթական, խորհրդատվական կարիքների գնահատման մեխանիզմները, լայնացնել հարցվողների շրջանակը, ապահովել պարբերականությունը և արդյունքների քննարկումները շահակիցների հետ:

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար հաստատությունն ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով:

Փաստեր

5.1 ՄՈՒՀ-ում գործում են կրթական ծրագրերն իրականացնելու համար անհրաժեշտ որակավորումներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ընտրության քաղաքականություն և ընթացակարգեր:

ԵՊԲՀ-ն իր Ռազմավարական ծրագրում նախատեսել է «ապահովել մասնագիտական բարձր որակավորմամբ և բարոյական արժեքներով օժտված դասախոսական կազմի առկայություն՝ որպես բժշկական բարձրագույն կրթության որակի գլխավոր երաշխավորի»:

ԵՊԲՀ-ում դասախոսական կազմի ընտրությունն իրականացվում է «Ամբիոնների և դասախոսական կազմի մասին» կանոնակարգով, որը սահմանում է ԵՊԲՀ ամբիոնների ուսումնագիտական գործընթացի կազմակերպման կանոնները, դասախոսական անձնակազմի ձևավորման չափանիշերը, դասախոսների կրթության և որակավորման չափորոշիչները, դասավանդման, ուսումնական ծանրաբեռնվածության սահմանային չափերը, դասախոսների ընտրությունների ընթացակարգերը:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ չնայած մրցութային կարգի առկայությանը՝ դեռևս ոչ բոլոր ամբիոններում է դասախոսական կազմն ընդունվել մրցութային կարգով:

ԵՊԲՀ-ում ներդրվել է «Դասախոսի որակավորման գնահատման» (ԴՈԳ) համակարգը, քննարկվել և հաստատվել է 2016թ ապրիլին համալսարանի ուսումնամեթոդական խորհրդի կողմից:

Համալսարանի ուսումնաօժանդակ կազմի ընտրություններն իրականացվում են ըստ 2017թ. հունիսի 27-ի ռեկտորատի թիվ 22/7 արձանագրությամբ հաստատված «Թափուր պաշտոնների ընտրության մրցույթի կազմակերպման և անցկացման» կարգի համաձայն: Համալսարանի ուսումնաօժանդակ կազմը ներառում է 105 մասնագետ:
ԵՊԲՀ-ում դեռևս մշակված չեն ՊԴ կազմի տարակարգերի պաշտոնի անձնագրեր, իսկ դասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ընտրության քաղաքականության ու ընթացակարգերի արդյունավետության գնահատում իրականացված չէ:

Սակայն հարկ է նշել, որ ԵՊԲՀ-ում դասավանդում են առողջապահության ոլորտի լավագույն մասնագետները, տարբեր կլինիկաների պրակտիկ բժիշկները:

5.2 ՄՈՒՀ-ի յուրաքանչյուր կրթական ծրագրի համար սահմանված են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջներ:

Դասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջները կանոնակարգվում են դասախոսների տարբեր տարակարգերին (ամբիոնի վարիչ, պրոֆեսոր, դոցենտ, ավագ դասախոս, դասախոս) ներկայացվող գործառույթներին և բնութագիչներին վերաբերող կարգով և դասախոսի կողմից իրականացվող տարբեր գործառույթների գնահատման համար մշակված ցուցանիշներով: Նեղ մասնագիտական ուղղությունների դեպքում կան հստակ սահմանված պահանջներ դասավանդողներին՝ մասնավորապես, տվյալ մասնագիտությամբ կլինիկական օրդինատուրայում ստացած կրթությունը և այլն: Այնուամենայնիվ, դեռևս հստակ մշակված և սահմանված չեն միջառարկայական առարկաներ դասավանդողներին ներկայացվող պարտադիր պահանջները, ինչպես նաև ՄԿԾ-ներում սահմանված չեն դասախոսների մասնագիտական որակներին ներկայացվող և ՄԿԾ առանձնահատկություններից բխող պահանջները:

5.3 ՄՈՒՀ-ը սահմանել է հստակ քաղաքականություն և ընթացակարգեր դասախոսական կազմի պարբերաբար գնահատման համար:

ԵՊԲՀ-ում ներդրված է «Դասախոսի որակավորման գնահատման» (ԴՈԳ) համակարգը: Գնահատվում է դասախոսի 5 տարվա գործունեության արդյունքները հստակ բալային համակարգով, որն ընդգրկում է դասախոսի գործունեության տարբեր բնագավառները: Այնուամենայնիվ, ԴՈԳ համակարգում բացակայում է դասախոսի գիտական գործունեության գանահատումը, իսկ մրցութային կարգում այն հստակ սահմանված է:

2018թ. դասախոսների ընտրության գործընթացի արդյունքների համաձայն, որակավորման հանձնաժողովը ոչ բավարար է գնահատել 4 դասախոսի գործունեություն: Բացի այդ, կատարվում են պարբերաբար հարցումներ «Դասախոսը ուսանողի աչքերով», որի գնահատականները հաշվի են առնվում դասախոսի մրցութային կարգով ընտրության ժամանակ: 2018թ. 5 դասախոս չի երաշխավորվել մրցույթին մասնակցելու, քանի որ հարցումների արդյունքում ստացել էր ցածր գնահատական: Պետք է նշել, որ ԴՈՒԱ-ի արդյունքերի մասին տեղեկատվությունը ուսանողներին և անձնակազմին շատ դեպքերում հասանելի չէ: Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ արտասահմանցի ուսանողների կողմից դասախոսներին տրված

գնահատականների մեջ գերակշռում են ցածր նիշերը, ինչը պայմանավորված է քիչ թվով ուսանողների մասնակցություն հարցումներին: Կրթության որակի գնահատման և ապահովման կենտրոնի կողմից դեռևս ստուգված չեն հարցումների արդյունավետությունը և ցածր գնահատականների պատճառները:

5.4 Պարբերաբար իրականացվող ներքին և արտաքին գնահատումների արդյունքում բացահայտված կարիքներին համապատասխան, ՄՈՒՀ-ն իրականացնում է դասավանդողների կատարելագործմանն ուղղված միջոցառումներ:

2012թ-ին դասախոսների շրջանում իրականացրած մանկավարժական և հոգեբանական վերապատրաստումների անհրաժեշտության մասին հարցումների արդյունքների վերլուծությամբ պայմանավորված՝ ԵՊԲՀ-ում 2013թ-ից գործում է «Դասախոսների որակավորման բարձրացման» բաժինը, որը «Մանկավարժական հոգեբանություն», «Մանկավարժություն» և «Գիտելիքների ստուգման կազմակերպում՝ թեստավորման միջոցով» 3 մոդուլներով դասընթացների միջոցով իրականացնում է դասախոսների որակավորման բարձրացման գործառույթներ: 3 տարին 1 անգամ՝ 10 օր տևողությամբ, հրավիրված մասնագետների կողմից, 3 մոդուլների շրջանակներում անցկացվում են դասախոսություններ: 2015թ. «Բուժական գործ» մասնագիտության ինտեգրված կրթական ծրագրի ձևավորման շրջանակներում բոլոր ամբիոնների հետ ՀՀ և արտերկրում վերապատրաստում անցած կրթական ծրագրերի բաժնի աշխատակիցները իրականացրել են խորհրդատվական-բացատրական աշխատանքներ: Հետագայում այս փորձը տարածվել է նաև «Ստոմատոլոգիա» մասնագիտության անընդհատ և ինտեգրացված ծրագրի և «Ֆարմացիա» մասնագիտության մագիստրոսական ծրագրերի վրա: Երիտասարդ դասախոսների մասնագիտական վերապատրաստման հարցերը լուծվում են նաև միջազգային համագործակցության շրջանակներում: Տարբեր միջազգային ծրարգրերի շրջանակներում եվրոպական, ամերիկյան համալսարաններում և կլինիկաներում վեց ամիս տևողությամբ վերապատրաստումներ են անցել համալսարանի 34 դասախոս, 3 շաբաթ տևողությամբ՝ 73 դասախոս, իսկ կարճաժամկետ վերապատրաստումների՝ ավելի քան 320 դասախոս: Հիմնական վերապատրաստումներ անցած դասախոսները կլինիկական ամբիոններից են: Տեսական ամբիոններում մասնագիտական վերապատրաստումներ բացակայում են: Միջազգային վերապատրաստումների թվաքանակը մեծ չէ, դրանք հիմնված են անհատական նախաձեռնությունների վրա: Համալսարանը չունի ներդրված հստակ խրախուսման մեխանիզմներ և չի առանձնացնում ֆինանսական միջոցներ ՊԴ անձակազմի մասնագիտական և հետազոտական կարողությունների զարգացման համար: Չկան նաև որակի հստակ ինդիկատորներ դասախոսների մասնագիտական զարգացման և կատարելագործման գնահատման համար:

5.5 ՄՈՒՀ-ը երաշխավորում է մասնագիտությունների կրթական ծրագրերի՝ համապատասխան պրոֆեսորադասախոսական կազմով ապահովվածության կայունությունը:

ԵՊԲՀ-ում առկա կրթական ծրագրերն իրականացվում են 73 ամբիոնների 1074 հոգանոց պրոֆեսորադասախոսական կազմի կողմից: Պետք է նշել որ դասախոսների ընդհանուր թվում հիմնական աշխատակիցիերի թիվը 73.7% է: 73 ամբիոնների վարիչների միջին տարիքը 57 է, 59 պրոֆեսորներինը՝ 61, 228 դոցենտներինը՝ 53, 81 ավագ դասախոսներինը՝ 49, 420 դասախոսներինը՝ 41 և 203 ասիստենտներինը՝ 32: Տեսական բժշկության ամբիոնների աշխատակիցների միջին տարիքը ավելի բարձր է, քան կլինիկական ամբիոնների դասախոսներինը: Վերջին 5 տարում պրոֆեսորադասախոսական կազմում աշխատում է ՀՀ ԳԱԱ 1 ակադեմիկոս և 6

թղթակից անդամ, գիտությունների 119 դոկտոր և 397 թեկնածու: Ուսանող-դասախոս հարաբերությունը 1:5-ի է:

Համալսարանը որոշակի քայլեր է ձեռնարկում դասախոսական անձակազմը երիտասարդացնելու ուղղությամբ՝ դասախոսական կազմը համալրելով սեփական շրջանավարտներով: Յուրաքանչյուր տարի դասախոսական կազմը թարմացվում է միջինում 45 երիտասարդ (մինչև 30 տարեկան) աշխատակիցներով, ովքեր, 3 տարի աշխատելով որպես դասախոսի ասիստենտ և ապահովելով համապատասխան պատրաստվածության մակարդակ, այնուհետև զբաղեցնում են դասախոսական հաստիք: Վերջին 5 տարում համալսարան են ընդունվել 243 երիտասարդ դասախոս (որը կազմում է դասախոսական կազմի 22,6%-ը), իսկ ազատվել են 5-ը: Այնուամենայնիվ դասախոսական անձնակազմի միջին տարիքը դեռևս մնում է բարձր: Ինչպես նաև հարկ է նշել, որ ընդհանուր դասախոսական կազմի մեջ քիչ տոկոս են կազմում կենսաբանական կրթություն ունեցող դասախոսները:

5.6 ՄՈՒՀ-ում գործում են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր:

ԵՊԲՀ-ի կողմից իրականացվում են դասախոսների խրախուսման համար տարբեր աշխատանքներ. մասնավորապես, դասախոսները պարգևատրվում են ուսումնագիտական գործունեության համար: Ավելին, 2018թ-ից ԵՊԲՀ-ն լավագույն շրջանավարտներին անվճար հետբուհական կրթության հնարավորություն է տրամադրում և հետագայում պայմաններ ստեղծում դասախոսական աշխատանքի անցնելու համար: Նախորդ հավատարմագրման խորհրդատվությունների արդյունքով, ԵՊԲՀ-ն այժմ խրախուսում է դասախոսներին տպագրել ազդեցության գործոն ունեցող միջազգային պարբերականներում՝ տրամադրելով հավելավճարներ: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ մասնագիտական վերապատրաստումներ իրականացվում են դասախոսների անհատական նախաձեռնությունների հիման վրա և համալսարանում հրավիրյալ մասնագետների դասախոսություններին մասնակցելով, իսկ երիտասարդ դասախոսների մասնագիտական առաջընթացի ապահովման հստակ քաղաքականություն և ընթացակարգեր չեն գործում: Բացի այդ տեսական ամբիոններում մասնագիտական առաջընթաց ապահովող վերապատրաստումներն առավել քիչ են, քան կլինիկական ամբիոններում:

5.7 ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմ՝ ռազմավարական նպատակների իրականացման համար:

Վերջին տարիներին ԵՊԲՀ-ում մշակվել են վարչական կազմի պաշտոնների անձնագրեր: Համալսարանում և համալսարանական կլինիկաներում աշխատողների ընդհանուր թիվը 3162 է, որից ուսումնական պրոցեսում ընդգրկվածները 1341-ն են, որոնցից 1074-ը դասախոսական կազմն է, իսկ 267-ը ասիստենտներ (228) և լաբորանտները (39): Այնուամենայնիվ դասախոս/լաբորանտ, ինչպես նաև ուսանող/լաբորանտ հարաբերակցությունը շատ ցածր է: Մեկ լաբորանտը սպասարկում է քառասունհինգ ուսանողի:

Փորձագիտական այցի ընթացում պարզ դարձավ, որ տեսական ամբիոններում քիչ են լաբորանտների քանակը: Հստակեցված չեն ուսումնաօժանդակ կազմի քանակի ձևավորման սկզբունքները:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում, որ ԵՊԲՀ-ում նախորդ հավատարմագրման խորհրդատվություններից ելնելով, մշակվել են մասնագիտական կրթական ծրագրերն իրականացնելու համար անհրաժեշտ որակավորում ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ անձնակազմի

ընտրության քաղաքականություն և ընթացակարգեր: ԵՊԲՀ-ն ունի բարձր որակավորում ունեցող դասախոսական և վարչական անձնակազմ, որն ունակ է հաջողությամբ կյանքի կոչել համալսարանի առաքելությունը և ռազմավարական նպատակները: Դրական է նաև, որ ԵՊԲՀ-ի ՊԴ կազմում իրենց գործունեությունն են ծավալում ՀՀ-ի առողջապահության ոլորտի խնդիրներին քաջածանոթ բժիշկներ:

Պրոֆեսորադասախոսական անձնակազմի որակավորումների համապատասխանությունը իրենց պաշտոնի պահանջներին և մակարդակին համալսարանը հիմնավորում է նրանց գիտական աստիճաններով և կոչումներով, հետազոտական փորձով և կլինիկական պրակտիկայով, մասնագիտական փորձով և որակավորումներով: Պրոֆեսորադասախոսական անձնակազմի ընտրության քաղաքականությունը, այնուամենայնիվ, չի ապահովում բավարար քանակությամբ կենսաբժշկական ոլորտի գիտաշխատողների ներգրավում, ինչը կարող է վտանգել ուսանողների կողմից ՄԿԾ վերջնարդյունքների ձեռքբերմանը:

Ըստ ՄԿԾ-ների առանձնահատկությունների՝ դասախոսական կազմի որակներին ներկայացվող պահանջների սահմանումը և ՊԴ կազմի տարրակարգերի պաշտոնների անձնագրերի մշակումը կնպաստեն ոլորտի անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող ՊԴԿ կազմի ընտրությանն ու ձևավորմանը

Փորձագիտական խումբը դրական է համար, որ ԵՊԲՀ-ում իրականացվում են դասախոսական կազմի գնահատումներ, սակայն գանահատումների արդյունքների տարածման և բացահայտված խնդիրների լուծման քաղաքականության բացակայությունը վտանգում է դասավանդման որակի բարելավումը և ՊԴ կազմի առաջընթացը:

Թեև ԵՊԲՀ-ում իրականացվում են միջոցառումներ դասավանդողների կարողությունների կատարելագործման ուղղությամբ, այդուհանդերձ դրանք հիմնված են անհատական նախաձեռնությունների վրա, ինչպես նաև չկան դասախոսների աջակցման մեխանիզմներ և կատարելագործման հստակ ցուցանիշներ, որոնք խոչընդոտում են դասավանդողների շարունակական զարգացմանը և միջազգային շարժունությանը:

Հատկանշական է, որ ԵՊԲՀ-ն որդեգրել է դասախոսների երիտասարդացման քաղաքականություն, ինչը կնպաստի դասախոսական կազմի կայունության ապահովմանը: Գովելի է, որ նախորդ հավատարմագրման խորհրդատվությունների հիման վրա ԵՊԲՀ-ն որդեգրել է ՊԴ կազմի խրախուսման քաղաքականություն միջազգային ամսագրերում հոդվածներ տպագրելու համար: Համալսարանում դեռևս սահմանված չէ դասախոսական կազմի մասնագիտական առաջխաղացման հստակ քաղաքականություն և առանձնացված ֆինանսավորում, ինչը կարող է վտանգել նրանց մասնագիտական առաջընթացին և որակյալ կրթության իրականացմանը:

ԵՊԲՀ-ն իր ռազմավարական նպատակների իրականացման համար ունի անհրաժեշտ վարչական աշխատակազմ: Իսկ ուսումնաօժանդակ անձնակազմի սակավությունը, կարող է հանգեցնել մատուցվող կրթական ծառայությունների ոչ լիարժեք իրագործմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ԵՊԲՀ-ում գործում են պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ անձնակազմի ընտրության քաղաքականության, իրականացվում է «Դասախոսները ուսանողի աչքերով» գնահատում, իրականացվում են դասախոսական կազմի վերապատրաստումներ և փորձի փոխանակումներ հրավիրյալ դասախոսների մասնակցությամբ, դասավանդում են բարձր որակավորում ունեցող և առողջապահության ոլորտի խնդիրներին քաջատեղյակ և պրակտիկ մասնագետներ, ԵՊԲՀ-ի կողմից կարևորվում է

դասախոսական կազմի երիտասարդացումը, փորձագիտական խումբը գտնում է, որ ԵՊԲՀ-ն բավարարում է Չափանիշ 5-ի պահանջները:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ԵՊԲՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 5-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

Խորհրդատվություններ.

1. Պրոֆեսորադասախոսական անձնակազմի ընտրության քաղաքականության մեջ որպես խնդիր ներառել բարձր որակավորում ունեցող կենսաբժշկական ոլորտի գիտաշխատողների ներգրավումը դասավանդման մեջ:
2. Կրթական ծրագրերի առանձնահատկություններից ելնելով՝ ՄԿԾ-ներում ներառել դասախոսների մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջներ:
3. Դասախոսների գնահատման արդյունքների օբյեկտիվության ապահովման նպատակով՝ բազմազանեցնել գնահատման ձևերը:
4. Որդեգրել դասախոսական կազմի առաջընթացի զարգացման և մասնագիտական առաջխաղացման քաղաքականություն, ինչպես նաև մշակել և իրագործել դասախոսների կատարելագործման համար որակի հստակ ցուցանիշներ:
5. Կրթական գործընթացների լիարժեք իրագործման նպատակով՝ հնարավորինս համալրել ամբիոնները լաբորանտներով և այլ ուսումնաօժանդակ անձնակազմով:

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ:

Փաստեր

6.1 ՄՈՒՀ-ում առկա է հետազոտական ոլորտում իր հետաքրքրությունները և հավակնություններն արտահայտող ռազմավարություն:

Նախորդ հավատարմագրման խորհրդատվություններից ելնելով՝ համալսարանում մշակվել է «ԵՊԲՀ գիտության զարգացման ռազմավարությունը և քաղաքականությունը 2015-2020», որտեղ սահմանված են գիտության և հետազոտության ոլորտում պլանավորված գործողությունները, մասնավորապես՝ «առանձնացնել համալսարանի ընդհանուր բյուջեից գիտությանը հատկացվող բյուջեն՝ 2015-2020 թթ. ընթացքում գիտությանը հատկացնելով բյուջեի առնվազն 5%-ը՝ չհաշվարկելով գրանտային ծրագրերը, սահմանել գիտահետազոտական գերակա ուղղությունները՝ հիմքում դնելով համաշխարհային տրենդը, ՀՀ բժշկագիտության ոլորտի գերակայությունները, ամբիոնների մասնագիտական ներուժը, նյութատեխնիկական բազան, ելքը դեպի կիրառական բժշկություն, ստեղծել կապ ուսումնական գործընթացի և հետազոտություն միջև, ստեղծել համալսարանի գերազանցության կենտրոնի կայացման նախադրյալներ՝ հիմքում դնելով գիտահետազոտական կենտրոնի վերակառուցումը և նոր, ժամանակակից կենդանանոցի ստեղծումը, որպես հիմք ընդունել գիտության երիտասարդացումը, դրա կայուն հարաճող զարգացումը և սահուն սերնդափոխությունը, լրամշակել և մշակել հետազոտական գործունեության կանոնակարգեր և այլ իրավական ակտեր, ստեղծել գիտական միջավայր և միջազգայնացնել գիտությունը»:

Նախորդ հավատարմագրումից հետո, ԵՊԲՀ-ն, ուսումնասիրելով իր գիտական ներուժը և համապատասխանաբար WoS շտեմարանում առկա հրապարակումները՝ 2015թ սահմանել է «Ուղեղի հետազոտություն»-ը որպես գիտության զարգացման գերակա ուղղություն, որն ամրագրված է Գիտակոորդինացիոն խորհրդի 25.12.2015 թվականի թիվ 8 որոշման մեջ: Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ հետազոտական աշխատանքներ իրականացվում են նաև նորածինների մահացության, սրտաբանության և այլ ուղղություններով:

Մշակվել է նաև «ԵՊԲՀ գիտության զարգացման հայեցակարգ 2018-28/38»-ը, որը սահմանում է գիտության ոլորտի երկարաժամկետ տեսլականը և առաքելությունը, ինչպես նաև գիտության զարգացման թիրախները: ԵՊԲՀ ղեկավար կազմի հետ հանդիպումներից պարզ դարձավ, նաև, որ ԵՊԲՀ-ն նախատեսում է մինչև 2028 թվականը դասավանդող համալսարանից դառնալ հետազոտական համալսարան: Գիտության զարգացման ռազմավարությունը քննարկվել է ամբիոններում՝ դասախոսական կազմի ներկայացուցիչների հետ:

2017-2018 թվականների ընթացքում կատարվել է համալսարանի միջազգային վարկանիշավորում մի քանի մեթոդոլոգիաներով (QS World University Ranking, The Times Higher Education World University Rankings etc.): Շանհայի վարկանիշավորման խորհրդատվություն (ShanghaiRanking Consultancy) կազմակերպության հետ համատեղ առաջին անգամ իրականացվել է ԵՊԲՀ գիտական գործունեության բենչմարքինգ-վերլուծությունը, որի արդյունքում վերահաստատվել է գիտության գերկա ուղղությունները:

2017թ. Երիտասարդ գիտնականների խորհուրդը վերահաստատվել է որպես Երիտասարդ հետազոտողների միություն:

Փորձագիտական վերլուծություններից պարզ է դառնում, որ Ուսանողական գիտական ընկերությունը (ՈԻԳԸ) նույնպես ջանքեր է գործադրում ուսանողներին ներգրավելու հետազոտական աշխատանքներում՝ կազմակերպելով տարբեր գիտական միջոցառումներ: Չնայած տարվող քաղաքականությանը՝ դասախոսների թիվը, ովքեր ընդգրկված են գիտահետազոտական աշխատանքներում, դեռևս սակավ է:

Վերջին տարիներին աճել է ԵՊԲՀ-ի կողմից գիտությանը հատկացվող գումարները և 2018թ. այն հասել է 24 մլն ՀՀ դրամի, ինչի հաշվին ձեռք են բերվել սարքավորումներ: Սակայն բյուջեում նախահաշվում ծախսային հոդվածներում առանձին տողով հստակ առանձնացված չէ ՌԾ-ում նշված գիտության ֆինանսավորման համար նախատեսվող բյուջեի ելքերի 5%-ը:

6.2 ՄՈՒՀ-ն ունի երկարաժամկետ ռազմավարություն և միջնաժամկետ ու կարճաժամկետ ծրագրեր, որոնք արտահայտում են հետազոտության ոլորտում ՄՈՒՀ-ի հետաքրքրությունները և հավակնությունները:

ԵՊԲՀ-ում առկա են կարճաժամկետ և երկարաժամկետ ծրագրեր, որտեղ սահմանված են ԵՊԲՀ-ի հետաքրքրություններն ու հավակնությունները, և այդ ծրագրերի իրականացման համար պատասխանատու են Գիտակոորդինացիոն խորհուրդը, գիտության վարչությունը, գիտահետազոտական կենտրոնը: ԵՊԲՀ-ն որպես միջնաժամկետ հետազոտական ծրագրեր ներկայացնում են ՀՀ ԿԳՆ Գիտության կոմիտեի կողմից ֆինանսավորվող դրամաշնորհային ծրագրերը: Սակայն դրամաշնորհների տրամադրման կարգից պարզ է, որ ծրագրերը և համապատասխանաբար ֆինանսական պլանավորումը կայուն չեն կարող լինել: Ավելին, համալսարանը ստանում է բազային ֆինանսավորում, որը նույնպես երկարաժամկետ չէ, այլ մեկ տարվա համար, իսկ կայուն ֆինանսական հոսքեր ապահովելու քաղաքականություն և հստակեցված մեխանիզմներ առկա չեն: Փորձագիտական վերլուծությունները ցույց տվեցին, որ ԵՊԲՀ-ի կողմից հատկացված

գումար և աշխատակիցների քանակ/տպագրված աշխատանք հարաբերության արդյունավետությունը գնահատված չէ:

6.3 ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտությունների իրականացումը և իր զարգացումը՝ հստակ քաղաքականության և ընթացակարգերի միջոցով:

Համալսարանի հետազոտական գործունության իրականացման քաղաքականությունը և ընթացակարգերը սահմանված են մի շարք փաստաթղթերում. «ԵՊԲՀ գիտության զարգացման ռազմավարությունը և քաղաքականությունը 2015-2020», «ԵՊԲՀ գիտության զարգացման հայեցակարգ 2018–2028/38», Ազդեցության գործոն ունեցող պարբերականներում գիտական հետազոտությունների ոլորտի հոդվածներ տպագրելու դեպքերում խրախուսանքի միջոցներ կիրառելու մասին» հրամանի նախագիծ: Պրոֆեսորադասախոսական կազմի համար WoS շտեմարանում գրանցված ամսագրերում գիտական հոդվածների հրապարակումը պարտադիր է դարձել: Առկա է ԵՊԲՀ-ում աշխատող անձնակազմի խրախուսման կարգ՝ ազդեցության գործակից ունեցող շտեմարաններում տպագրվելու համար: 27 աշխատակից ստացել է խրախուսման վճար: ԵՊԲՀ-ում հիմնադրվել է Նորամուծության և ձեռներեցության կենտրոն, սակայն պարզ չէր, թե ինչ հիմնական գործառույթներ է իրականացնում այդ ստորաբաժանումը (քանի որ գտնվում էր կառուցվածքային փոփոխությունների գործընթացում), իսկ տարբեր աշխատակիցներ և ուսանողներ տեղյակ չէին այդ ստորաբաժանման առկայությունից: Համալսարանը դոռնս հետազոտության արդյունքները չի դիտարկում որպես ֆինանսական աղբյուր և չի զբաղվում այդ արդյունքների առևտրայնացմամբ:

6.4 ՄՈՒՀ-ը կարևորում է հետազոտական գործունեության միջազգայնացումը:

ԵՊԲՀ-ն որդեգրել է արտերկրից հրավիրված այցելու պրոֆեսորների և պատվավոր դոկտորների դասախոսությունների կազմակերպման ավանդույթը: Վերջին տարիների կազմակերպվել են տարբեր գիտական միջոցառումներ, այդ թվում հրավիրվել են Նոբելյան մրցանակակիրներ՝ դասախոսություններով հանդես գալու համար: Իրականացվել է նաև «Նոբելյան օրեր Երևանում» միջոցառումը, որին մասնակցել են 2250 մասնակից, որից՝ 22 արտերկրից, 1650 ուսանողներ: ԵՊԲՀ-ն ֆինանսներ է տրամադրում «Ուսանողական գիտական օր» և «Երիտասարդական գիտական օր» միջոցառումների կազմակերպման համար:

Համալսանի աշխատակիցների տպագրված հոդավծների 65% համահեղինակությամբ է արտերկրի տարբեր կենտրոնների աշխատակիցների հետ, սակայն ընդհանուր հետազոտական աշխատանքների քանակը մնում է ցածր և դեռևս ԵՊԲՀ-ում չկան բարձր վարկանիշ ունեցող հետազոտողներ բարձր ինդեքսով:

Քիչ են դեպքերը, երբ համալսրանն իր միջոցներն է հատկացնում ուսանողների կամ աշխատակիցների շարժունությունն ապահովելու համար:

6.5 ՄՈՒՀ-ում գործում են հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմներ:

Հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցվման համար ԵՊԲՀ-ի որոշ ամբիոններում գնահատման բազմաբաղադրիչ համակարգը, որը ներառում է նաև հետազոտական աշխատանքի իրականացում և գնահատում:

Դեղագործության ֆակուլտետում ուսանողները հնարավորություն ունեն կատարել հետազոտական աշխատանք և պաշտպանել մագիստրոսական թեզ, սակայն քիչ թվով ուսանողներ են ներգրավում հետազոտական աշխատանքներում և քիչ

ուսանողներ են ընտրում մագիստրոսական թեզը որպես ամփոփիչ ատեստավորման տեսակ:

Փորձագիտական վերլուծություններից պարզ դարձավ, որ կլինիկաներում քիչ են քննարկվում և վերլուծվում կլինիկական կոնկրետ դեպքեր, իսկ տեսական առարկաների հետ կապված հետազոտական կապը սակավ է: Պրեռեկվիզիտային առարկաների ժամաքանակները նույնպես քիչ են, որոնք ուղիղ կապ ունեն հետագայում հետազոտական բաղադրիչի բարելվման և ընդգրկվածության հետ:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն հանգամանքը, որ ԵՊԲՀ-ն աշխատանքներ է իրականացրել նախորդ հավատարմագրման փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման ուղղությամբ: Դրական է, որ ԵՊԲՀ-ն հստակ սահմանել է գիտահետազոտական ոլորտում իր հետաքրքրություններն ու հավակնությունները, ինչպես կլինիկական, այնպես էլ տեսական հետազոտությունների համար, որը կնպաստի առավել թիրախային հետազոտությունների իրականացմանը: Ողջունելի է, որ ԵՊԲՀ-ն սահմանել է հետազոտական գործունեության զարգացման համար բարձր նշաձող, սակայն միևնույն ժամանակ սահմանված հավակնություններն իրականացնելու համար համալսարանի կողմից մարդկային և ֆինանսական ռեսուրսների առավել հստակ պլանավորում պետք է իրականացվի և առաջընթացի ցուցանիշներ պետք է սահմանվեն՝ ապահովելու և ամրագրելու գիտության և կիրառական հետազոտությունների ոլորտում ԵՊԲՀ հաջողությունները:

Դրական է, որ ԵՊԲՀ-ում առկա են գիտության ոլորտի զարգացման երկարաժամկետ և կարճաժամկետ ծրագրեր, այնուամենայնիվ՝ միջնաժամկետ ծրագրերի և գիտական գործունեության արդյունավետության ցուցիչների մշակումը թույլ կտա բացահայտել ձեռքբերումները և խնդիրները, ճշգրտել երկրաժամկետ ծրագրերը:

Ողջունելի է, որ ԵՊԲՀ-ն որդեգրել է դասախոսներին և ուսանողներին հետազոտական աշխատանքներում ներգրավվելու և խրախուսելու քաղաքականություն: Սակայն, ներկայում քիչ դասախոսներ են ներգրավված հետազոտական աշխատանքներում և քչերն են խրախուսվել, ինչը ազդում է ուսանողների հետազոտական աշխատանքներին մասնակցության ակտիվության վրա: Ոչ դասախոսների, ոչ էլ ուսանողների հետազոտություններում քիչ ներգրավվածության պատճառները համլսարանը չի ուսումնասիրել: ԵՊԲՀ ՈՒԳԸ-ն նույնպես աշխատանքներ է տանում մեծացնելու ուսանողների մասնակցությունը հետազոտական աշխատանքներում, սակայն այն դեռևս հիմնված է անհատական մոտիվացիայի վրա կարող է խոչընդոտել ուսանողների մոտ վերլուծական կարողությունների ձեռքբերմանը և մեծաքանակ ուսանողների ներգրավվմանը հետազոտական աշխատանքներում:
Հարկ է նշել, նաև, որ գիտական լաբորատոր ենթակառուցվածքը մասամբ է համալրված նորագույն սարքավորումներով, անհրաժեշտ նյութերով ու լաբորատոր պարագաներով, ինչը թույլ չի տալիս համալսարանին ՌԾ նպատակներին համապատասխան ավելի խորացնել հետազոտությունները և դրանց արդյունքների հրապարակումների միջոցով նպաստել միջազգային տարբեր ռեյտինգներում ԵՊԲՀ-ի վարկինիշի բարձրացմանը:

Դրական է, որ իրականացվում են տարբեր միջոցառումներ գիտության միջազգայնացումը խթանելու համար. խրախուսվում են միջազգային ամսագրերում հրապարակումները, կազմակերպվում են Նոբելյան մրցանակակիրների այցեր և դասախոսություններ ԵՊԲՀ, սակայն դեռևս գնաատված չէ այդ միջոցառումների արդյունավետությունը և ազդեցությունը ուսումնական գործընթացի բարելավման համար:

Թեև ԵՊԲՀ որոշ ամբիոններում ներդրվել է բազմաբաղադիչ գնահատման համակարգը, որը ներառում է նաև հետազոտական աշխատանքի իրականացման

գնահատում, սակայն դեռևս առկա են խնդիրներ ուսումնական գործընթացի և հետազոտական գործունեության կապի ամրապնդման տեսակետից: Հստակ չէ, թե ուսումնական ծրագրերի որ բաղադրիչներն են ապահովում գիտական մեթոդների, բժշկական հետազոտության մեթոդների, վերլուծական և քննադատական մտածողության և ապացույցների վրա հիմնված բժշկության սկզբունքների յուրացումը, որոնք մեծապես կարևոր են ապագա նորարար բժշիշկներ համար:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ԵՊԲՀ-ն ոլորտի զարգացման համար մշակել է հետազոտության ոլորտում իր հետաքրքրություններն ու հավակնություններն արտահայտող ռազմավարություն, ունի երկարաժամկետ և կարճաժամկետ ծրագրեր, որդեգրել է ուսանողներին և դասախոսներին հետազոտական աշխատանքներում ներգրավելու քաղաքականություն, գիտության միջազգայնացման համար խրախուսում է դասախոսներին միջազգային բարձր ազդեցության ցուցիչ ունեցող ամսագրերում տպագրվելու համար, որդեգրել է Նոբելյան մրցանակակիրներին և ոլորտի այլ հայտնի մասնագետներին ԵՊԲՀ հրավիրելու և դասախոսություններ իրականացնելու քաղաքականությունը, քայլեր է ձեռնարկում ուսուցման և հետազոտության կապի ամրապնդման համար, փորձագիտական խումբը գտնում է, որ ԵՊԲՀ-ն բավարարում է չափանիշ 6-ի պահանջները:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ԵՊԲՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 6-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

Խորհրդատվություններ.

1. Դիտարկել Դեղագիտության ֆակուլտետի մագիստրատուրայում միայն թեզի պաշտպանությունը որպես ավարտական աշխատանք ներկայացնելու հնարավարությունը:
2. Հստակեցնել հետազոտության ոլորտում ֆինանսական պլանավորումը և արդյունքում ավելացնել հետազոտողների թիվը, այդ թվում՝ դրանցում ներգրավելով կենսաբանական կրթությամբ մասնագետներին:
3. Մշակել հստակ ցուցիչներ հետազոտության զարգացման համար և պարբերաբար իրականացնել հետազոտական ծրագրերի մշտադիտարկում:
4. Մեծացնել դասախոսների և ուսանողների պրոակտիվ ներգրավվածությունը հետազոտական աշխատանքներում՝ մշակելով և կիրառելով հստակ մեխանիզմներ:
5. Մշակել և իրագործել ԵՊԲՀ-ում հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման գործուն մեխանիզմներ՝ առավել նպատակային դարձնելով հրավիրյալ դասախոսների այցերը, ինչպես նաև ուսումնական ծրագրերում ներառել գիտական մեթոդի, բժշկական հետազոտության մեթոդների, վերլուծական և քննադատական մտածողության, թղթային գնահատման և ապացույցների վրա հիմնված բժշկության սկզբունքները:
6. Արդիականացնել գործող եթակառուցվածքները և ստեղծել նոր գիտական ենթակառուցվածքներ, որոնք թույլ կտան հասնել ՌԾ-ում դրված նպատակներին:

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության ու նպատակների արդյունավետ իրականացման համար:

Փաստեր

7.1 ՄՈՒՀ-ում առկա է մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայր:

ԵՊԲՀ-ի ռազմավարական ծրագրի Նպատակ 3-ում սահմանված է՝ «ապահովել ուսանողների համար կրթական անհրաժեշտ միջավայր՝ աջակցելով նրանց կրթական գործընթացի և սոցիալական կարգավիճակի բարելավմանը», իսկ նպատակ 6-ում՝ «բարելավել Համալսարանի նյութատեխնիկական բազան՝ ելնելով ուսումնա-գիտական ծրագրերի որակի ապահովման պահանջներից»: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ նյութատեխնիկական բազայի, սիմուլյացիոն կենտրոնների, հիվանդանոցային կլինիկաների նյութատեխնիկական հագեցվածության և կարողությունների բարելավումը ԵՊԲՀ-ի ղեկավարության ուշադրության կենտրոնում է:

Համալսարանի վարչական և ուսումնական շենքերը տեղակայված են այլ բարձրագույն ուսումնական հաստատությունների հարևանությամբ՝ ուսանողական միջավայրում:

Համալսարանը տիրապետում է 88 226 քմ տարածքի: ԵՊԲՀ-ի կենտրոնական տարածքում են տեղակայված հիմնականում տեսական ամբիոնները և Ստոմատալոգիական կրթության գերազանցության կենտրոնը: Կլինիկական ամբիոնները տեղակայված են հանրապետական նշանակության 22 և համալսարանական 2 կլինիկական բազաներում և 3 համալսարանական պոլիկլինիկաներում: ԵՊԲՀ-ի կոմունալ և սպասարկող ենթակառուցվածքները բարեկարգ են, աշխատանքներ են տարվում նաև կլինիկական ռեսուրսների արդիականացման և վերազինման ուղղությամբ: Վերջիններիս ուղղությամբ արդեն իսկ իրականացված և պլանավորված աշխատանքների վերաբերյալ տեղեկատվությունը մանրամասն ներկայացված է կլինիկական աշխատանքների գծով պռոռեկտորի՝ համալսարանական հիվանդանոցների 2018 թվականի գործունեության հաշվետվության մեջ:

Համալսարանի ռեսուրսային բազայի դիտարկման արդյունքում փորձագիտական խումբը արձանագրել է հետևյալը: ԵՊԲՀ-ն ունի գրադարան, որը փորձագիտական այցի պահին համալրված էր անհրաժեշտ գրքերով: Սակայն, ինչպես փաստում էին և ՀՀ, և միջազգային ուսանողները, մասնագիտական հայալեզու և օտարալեզու գրականությունը սակավ է, բավականին փոքր թիվ են կազմում մասնագիտական գրականության առանցքային նոր հրապարակված դասագրքերի, ուսումնական ձեռնարկների օրինակները ընթերցասրահում (յուրաքանչյուր դասագրքից այցի պահին առկա էր առավելագույնը 1 օրինակ): Բացի այդ, օտարերկրյա ուսանողները կազմում են ԵՊԲՀ-ի ուսանողների մոտ 25%-ը, սակայն գրադարանի ռեսուրսների միայն 18% է օտարալեզու:

ԵՊԲՀ-ի գրադարանը բաժանորդագրված է միջազգային մասնագիտական Hinari և UpToDate էլեկտրոնային շտեմարաններին: Ուսանողների հետ հանդիպման ընթացքում նրանց մեծամասնությունը հավաստեց մասնագիտական գրականության պակասը:

ԵՊԲՀ-ում գործում է նաև էլեկտրոնային գրադարան, որը կահավորված է համակարգիչներով, որոնցում ներբեռնված են դասավանդվող առարկաների մասով

հայալեզու և օտարալեզու գրականություն՝ ըստ յուրաքանչյուր ֆակուլտետի յուրաքանչյուր կուրսի առարկաների: Էլեկտրոնային գրադարան հնարավոր է մուտք գործել նաև համալսարանի պաշտոնական կայքից, այն կապված է նաև ներքին ցանցի հետ:

Համալսարանում առկա են պրոյեկտորներով և հեռուստացույցներով կահավորված լսարաններ, մասնավորապես, Ստոմատոլոգիական կրթության գերազանցության կենտրոնում, որտեղ դասախոսության ընթացքում մատուցված նյութը ուսանողների գործնական աշխատանքին զուգահեռ ցուցադրվում է էկրաններին: Այդ լսարաններում ուսումնական պարապմունքների պլան-գրաֆիկները և լսարանների ծանրաբեռնվածությունները կազմվում են նախապես՝ ուսումնական կիսամյակի ծանրաբեռնվածությունները սահմանելիս:

Համալսարանի տարածքում գործում են լաբորատորիաներ, ընթերցասրահներ, քննությունների անցկացման համակարգչային սրահներ, 2 թանգարան, մարզադահլիճներ, լողավազան, էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության կայան, բուժկետ, ինչպես նաև տեղակայված են հասարակական սննդի կետեր: ԵՊԲՀ-ի ենթակայության ներքո գործում են հանրակացարան և ուսումնաարտադրական բազաներ: ԵՊԲՀ-ի տարածքը ապահովված է WIFI ծածկույթով և ինտերնետ հասանելիությամբ:

7.2 ՄՈՒՀ-ը, իր առաքելությունն ու նպատակներն իրականացնելու համար, հատկացնում է համապատասխան ֆինանսական ռեսուրսներ՝ անհրաժեշտ միջոցներով և սարքավորումներով ապահովելու ու գործարկելու համար:

ԵՊԲՀ-ի ֆինանսական միջոցները հիմնականում ձևավորվում են ուսուցման ծառայությունների կազմակերպումից (2018թ. բյուջեի նախահաշվի տվյալներով 61,6 %), բուժօգնության ծառայություններից՝ (ընդամենը մուտքերի 32%-ը), որոշ չափով նաև (2018թ.՝ 1,7%-ը)՝ գիտական գործունեությունից: 2018 թվականի նախահաշվի տվյալներով ուսուցման ծառայություններից ստացվող եկամուտներում՝ 31,2%-ը օտարերկրյա ուսանողներից հավաքագրված եկամուտներն են, պետական բյուջեից ֆինանսավորումը կազմում է 15,7%: Նույն նախահաշվի համաձայն ոչ ընթացիկ ակտիվների ձեռք բերման ծախսերը զգալի չեն՝ 9,6%, որից կլինիկական գործունեության հետ կապված բժշկական սարքավորումների ձեռք բերումը կազմում է ընդամենը՝ 24,4%: Մինչդեռ, կլինիկական գործունեությունից եկամուտը, ինչպես արդեն նշվեց, ապահովում է ընդամենը եկամուտների 32%-ը: Այլընտրանքային ֆինանսական հոսքեր են ապահովում հանրակացարանների, էլեկտրակայանի գործունեությունից եկամուտները:

ԵՊԲՀ-ի ծախսերի շուրջ 59,2 %-ը կազմում է աշխատավարձային ֆոնդը, իսկ ապրանքանյութական պաշարների ձեռք բերմանը համաձայն նախահաշվի ուղղվում է ծախսերի միայն 9%-ը: ԵՊԲՀ-ի գրադարանային ծախսերին ուղղվում է միայն 0,4%-ը: ԵՊԲՀ-ի եկամուտը ձևավորող ֆինանսական հոսքերը բազմազան են:

7.3 ՄՈՒՀ-ում գործում է մասնագիտությունների կրթական ծրագրերի նպատակների իրականացումն ու շարունակականությունն ապահովող և երաշխավորող ֆինանսական միջոցների բաշխման քաղաքականություն:

ԵՊԲՀ-ը չունի ֆինանսական միջոցների բաշխման սահմանված քաղաքականություն, իսկ ֆինանսական գործունեության իրավական հիմքն են կազմում «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքը, «ՀՀ Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքը, համալսարանի կանոնադրությունը և ոլորտը կանոնակարգող այլ նորմատիվ իրավական ակտերը:

ԵՊԲՀ-ի ֆինանսական միջոցների բաշխումը ըստ ծախսային հոդվածների իրականացվում է համաձայն հաստատված ֆինանսական նախահաշվի, որը հաստատվում է հոգաբարձուների խորհրդի որոշմամբ:

ԵՊԲՀ-ի ֆինանսական միջոցների բաշխումն ըստ կառուցվածքային ստորաբաժանումների կամ կրթական ծրագրերի չի իրականացվում և ամբողջությամբ հաշվի չի առնվում տարբեր ֆակուլտետների կրթական ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ նյութատեխնիկական ապահովվածության առանձնահատկությունները: ԵՊԲՀ-ում 1 ուսանողին բաժին ընկնող ֆինանսական ապահովվածությունը դիտվում է որպես միասնական չափորոշիչ բոլոր մասնագիտությունների ուսանողների համար:

Ֆինանսական նախահաշվի կազմմանը համալսարանի շահակիցներն անմիջականորեն ներգրավված չեն: Մասնավորապես, կառուցվածքային ստորաբաժանումները տարեկան կտրվածքով ներկայացնում են միայն ապրանքանյութական արժեքների նկատմամբ պահանջագրեր:

7.4 ՄՈՒՀ-ի ռեսուրսային բազան հնարավորություն է ընձեռում մասնագիտությունների կրթական ծրագրերի և ռազմավարական պլանի իրականացման համար, ինչը նպաստում է որակի շարունակական բարելավմանը և կայունությանը:

ԵՊԲՀ-ի կողմից կրթական գործընթացի իրականացման և կրթության որակի ապահովման համար անհրաժեշտ ռեսուրսների պլանավորումը հիմնականում իրականացվել է ըստ անհրաժեշտության: Միայն վերջին տարիներին է համալսարանի կլինիկական բազայի համալրման և արդիականացման անհրաժեշտությամբ պայմանավորված սկսվել լայնածավալ աշխատանքներ կատարել՝ ուղղված կրթական ծառայությունների մատուցմանն անհրաժեշտ կապիտալ ծախսերի ավելացմանը (գերազանցության կենտրոնների ստեղծում, Միքայելյան վիրաբուժության կենտրոնի բաժնետոմսերի ձեռք բերում և այլն), համալսարանական հիվանդանոցների նյութատեխնիկական ապահովվածության բարելավմանը (մասնավորապես, 2018թ-ին ձեռք է բերվել էլեկտրական դանակ, անզգայացնող սարքեր և այլն):

Մյուս կողմից, առանձին ստորաբաժանումներ իրենց ռեսուրսների երկարաժամկետ պլանավորում չեն իրականացնում. ընթացիկ գործունեության կազմակերպման նպատակով ուսումնական տարվա սկզբին տարեկան աշխատանքային պլանի ման ընթացքում՝ կազմվում են պահանջագրեր՝ գնումների պլանում դրանք ընդգրկելու նպատակով:

Համալսարանի Կրթության որակի գնահատման և ապահովման կենտրոնը ուսուցման գործընթացների որակի ապահովման համար անհրաժեշտ ռեսուրսների վերաբերյալ ուսանողների և դասախոսների կարիքների վեր հանումը իրականացնում է միայն հարցումների ձևաչափով (առնվազն տարին 1 անգամ):

Հարցման արդյունքներով կազմվում են զեկույցներ և հաշվետվություններ, որոնցում նշվում է հարցման թեման, նպատակը, ֆորմատը, խումբը, մասնակիցների քանակը, յուրաքանչյուր հարցի մասով ստացված պատասխանների ամփոփ վերլուծությունը: Հարցումներին օտարերկրյա ուսանողների մասնակցության մակարդակը, ինչպես նաև հարցումներին մասնակցած ուսանողների բավարարվածության ընդհանուր մակարդակը ցածր են (շուրջ 54%):

7.5 ՄՈՒՀ-ում առկա է տեղեկատվությունը և փաստաթղթավորման գործընթացները կառավարելու հստակ քաղաքականություն և ընթացակարգ:

ԵՊԲՀ-ում տեղեկատվության և փաստաթղթավորման գործընթացների իրականացման իրավական հիմքն են հանդիսանում «Երևանի պետական բժշկական համալսարանի հիմնադրամի գործավարության կարգը», որտեղ մանրամասն

ներկայացված է փաստաթղթերի ստեղծմանը, պահպանմանը, արխիվացմանը ներկայացվող պահանջները, ընթացակարգերը և դրանց համար սահմանված պատասխանատվությունները: ԵՊԲՀ-ում գործում է տեղեկատվության հաղորդման վարից վեր՝ հաշվետվողականություն և վերից վար (հրամաններ, որոշումներ) մեխանիզմը:

Համալսարանում ներդրված է «Մալբրի» էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգ, որն ապահովում է օպերատիվ կապը պետական կառավարման համակարգի մարմինների հետ:

ԵՊԲՀ-ում գործում է ներքին համակարգչային ցանց, որը թույլ է տալիս օպերատիվ կերպով փոխանակել տեղեկատվությունը տարբեր ստորաբաժանումների միջև: Աշխատանքներ են տարվում էլեկտրոնային համալսարանի ներդրման ուղղությամբ: Տեղեկատվության տարածմանը նպաստում են նաև համալսարանի պաշտոնական կայքը, ֆեյսբուքյան էջը, «Ապագա բժիշկ» ամսագիրը, միջազգային ծրագրերի իրականացման գործընկեր գրասենյակները:

Միևնույն ժամանակ, կանոնակարգված չէ օտարերկրյա շահակիցների հետ փաստաթղթավորման գործընթացները (մասնավորապես, համալսարանի իրավական ակտերի պաշտոնական թարգմանությունների ապահովման գործընթացը), իսկ Իրավաբանական կլինիկային ուղղված ուսանողների դիմումներն անմիջապես ուղղվել են իրավաբանական կլինիկային՝ շրջանցելով համալսարանի գործավարության կարգը: Ամբիոններում (այդ թվում՝ կլինիկական) բացակայում է փոխադարձ դասալսումների գործընթացը փաստաթղթավորելու միասնական կարգը:

ԵՊԲՀ-ի պաշտոնական կայքում զետեղված են որոշ իրավական ակտեր և այլ փաստաթղթեր, կարգեր, սակայն դրանք գտնելը կայքի համապատասխան բաժիններում ժամանակատար է:

Հաստատության պաշտոնական կայքում գրադարանային ռեսուրսները ներկայացված են:

7.6 ՄՈՒՀ-ն ստեղծում է ապահով և անվտանգ միջավայր առողջապահական և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայությունների միջոցով՝ հաշվի առնելով հատուկ կարիքներ ունեցող ուսանողներին:

ԵՊԲՀ-ի տիրապետման ներքո գտնվող շենք-շինություններում գործում է շուրջօրյա անվտանգության ծառայություն, սակայն շենքերի միայն մի մասն է հսկվում տեսախցիկներով:

Համալսարանում առկա է հակահրդեհային համակարգ, տեղադրված են կրակմարիչներ, փակցված են տարհանման սխեմաները:

Բժշկական սպասարկում և օգնություն ցուցաբերելու նպատակով համալսարանում գործում է բուժկետ, օտարերկրյա ուսանողների բժշկական սպասարկման գործընթացները ևս կազմակերպվում են համալսարանի աջակցությամբ և դրա վերաբերյալ տեղեկատվություն տեղադրված է նաև պաշտոնական կայքում: Միջազգային ուսանողներին ցուցաբերվում է աջակցություն՝ բժշկական ապահովագրություն ստանալու հարցում: Բացի այդ, նրանք անցնում են պարտադիր ֆլյուրոգրաֆիկ հետազոտություն:

Փորձագիտական այցի պահին համալսարանում սովորող հատուկ կարիքներ ունեցող ուսանողներ չկային, այնուամենայնիվ, համալսարանում պատրաստակամ են անհատական մոտեցում ցուցաբերել հատուկ կարիքներ ունեցող ուսանողներին, սակայն նախկինում կառուցված մասնաշենքերը և ենթակառուցվածքային ռեսուրսները հարմարեցված չեն հենաշարժողական խնդիրներով անձանց շարժասայլակներով տեղաշարժվելու համար:

ԵՊԲՀ-ում անվտանգ միջավայր պահպանելու նպատակով մշակված է քաղաքացիական պաշտպանության պլան: Համալսարանի ուսումնական պլաններում որպես պարտադիր դասընթաց ներառված է «Քաղաքացիական պաշտպանություն» առարկան:

7.7 ՄՈՒՀ-ում գործում են ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման մեխանիզմներ:

Ուսանողներին տրամադրվող ռեսուրսների հասանելիությունը, կիրառելիությունը և արդյունավետությունը պարզելու մեխանիզմներ են համարվում հարցումները: Թեև ԵՊԲՀ-ը ռեսուրսների վերաբերյալ կարիքների վերհանման նպատակով ուսանողների շրջանում իրականացրել է հարցումներ, այդուհանդերձ, ներկայացված չեն բարելավմանն ուղղված միջոցառումները: Հարցման արդյունքներով կազմված վերլուծությունների համաձայն՝ հարցվողների բավարարվածությունը ռեսուրսային ապահովվածությունից գտնվում է միջին մակարդակում (2017 թվականին՝ ռեսուրսներց ուսանողների բավարարվածության մակարդակը կազմել է 48,5%, 2018 թվականին՝ 61,3%):

Ուսանողների և դասավանդողների հետ հանդիպումներից պարզ դարձավ, որ իրենց տրամադրվող ռեսուրսների հասանելիությանը և կիրառելիության խնդիրներ քննարկվում են նաև համալսարանի ղեկավարության հետ ահնդիպումների ժամանակ:

Դատողություններ: Փորձագիտական խումբը գտնում է, որ ընդհանուր առմամբ ԵՊԲՀ-ում առկա նյութական, ֆինանսական և մարդկային ռեսուրսները, դրանց կառավարումը, շենքերը և համալսարանական հիվանդանոցները բավարար են և նպաստավոր պայմաններ են ստեղծում առաքելության, ռազմավարական նպատակների իրականացման համար:

Հիմք ընդունելով ներկայացրած 2018 թվականի նախահաշվի եկամտային և ծախսային հոդվածների հարաբերակցությունները, օտարերկրյա ուսանողների թվաքանակի ավելացման նպատակադրումը և այն փաստը, որ եկամուտի գերակշիռ մասը հատկացվում է աշխատավարձերին, փորձագիտական խումբը գտնում է, որ ֆինանսական ռեսուրսների բաշխման պլանավորումը ըստ ՄԿԾ-ների, ռեսուրսներով ապահովվածության երկարաժամկետ պլանավորման համակարգի ներդրումը, կնպաստի համալսարանի մասնագիտական կրթական ծրագրերի արդյունավետ իրագործմանը, երկարաժամկետ հեռանկարում համալսարանի մրցունակությունն ապահովմանը և ուսանողների մոտ պրակտիկ հմտությունները լիարժեքորեն ձևավորմանը (հատկապես օտարերկրյա ուսանողների մասով մեկ ուսանողին բաժին ընկնող ռեսուրսների հասանելիության մասով):

Դրական է, որ ԵՊԲՀ-ն կարևորում է ուսանողների պրակտիկ հմտությունների բարելավման նպատակով սիմուլյացիոն կենտրոնների թվաքանակի ավելացումը: Սակայն, բարելավման կարիք ունի նաև այդ կենտրոնների ծանրաբեռնվածության պլանավորումը և դրանցում կազմակերպվող դասընթացներին մեկ ուսանողին բաժին ընկնող ՊԴ անձնակազմի թվաքանակը. դասալսումների ժամանակ սիմուլյացիոն կենտրոններում ընէացող դասաժամերին 12 ուսանողին բաժին էր ընկնում մեկ դասախոս: Ընդ որում, համալսարանում պահանջ կա՝ դասամատյանում լրացնել դասախոսների թվաքանակը, սակայն դրանք լրացված չէին փորձագիտական խմբի կողմից կազմակերպված դասալսումների ժամանակ:

Դրական է, որ ԵՊԲՀ-ում առկա են տեղեկատվությունը և փաստաթղթավորման գործընթացները կառավարելու բավարար և արդյունավետ ընթացակարգեր, ընդ որում՝ նկատելի է գործընթացների կատարելագործման և արդիականացման հստակ նախանշված տենդենցը: Հարկ է նշել նաև, որ օտարերկրյա ուսանողների և միջազգային

գործընկերների հետ հարաբերությունների փաստաթղթավորման գործընթացն ունի համակարգելու և գործառույթներն ըստ ստորաբաժանումների հստակեցնելու կարիք, ինչը էապես կնպաստի փաստաթղթավորման գործընթացի և վարչարարության որակի բարելավմանը:

Դրական է այն հանգամանքը, որ ԵՊԲՀ-ն որոշակի կոնկրետ աշխատանքներ է տարել նախորդ հավատարմագրման ժամանակ ստացած խորհրդատվությունների իրականացման ուղղությամբ: Մասնավորապես, ԵՊԲՀ-ն սկսել է իրականացնել ռեսուրսային բազայով բավարարվածության վերաբերյալ պարբերական հարցումներ և մշակել ընթացակարգեր, այնուամենայնիվ բարելավումների գործընթացի պլանավորումը, վերլուծությունը և հետագա վերահսկողությունը կանոնակարգման կարիք ունեն:

Ուսումնական միջավայրի ապահովության, առողջության և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայություններն արդյունավետ են: Միևնույն ժամանակ, առանձնահատուկ կարիք ունեցող, մասնավորապես, հենաշարժողական համակարգի խնդիրներ ունեցող սովորողների համար արդյունավետ պայմանների ստեղծման ուղղությամբ միջոցառումներ ձեռնարկելը կարող է նպաստել առանձնահատուկ կարիք ունեցող դիմորդներ ունենալուն:

Եզրահանգում: Հաշվի առնելով այն, որ ԵՊԲՀ-ում ընդհանուր առմամբ առկա է մասնագիտական կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայր, ռեսուրսային բազան հնարավորություն է ընձեռում մասնագիտությունների կրթական ծրագրերի և ռազմավարական ծրագրի իրականացման համար, ստեղծվել են գերազանցության և սիմուլիացիոն կենտրոններ, առկա է տեղեկատվությունը և փաստաթղթավորման գործընթացները կառավարելու ընթացակարգեր, ուսումնական միջավայրի ապահովության, առողջության և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայությունները արդյունավետ են, փորձագիտական խումբը գտնում է, որ ԵՊԲՀ-ն բավարարում է Չափանիշ 7-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ԵՊԲՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 7-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

Խորհրդատվություններ.

1. Ավելացնել ֆինանսական միջոցների տրամադրումը գրադարանային ֆոնդի համալրմանը:
2. Վերանայել ֆինանսական պլանավորման և ռեսուրսների բաշխման քաղաքականությունը՝ ներդնելով ՄԿԾ-ների ռեսուրսային ապահովվածության երկարաժամկետ պլանավորման համակարգ և ուսանողների յուրաքանչյուր խմբի կողմից առաջացրած ծախսերի փոխհատուցման արդար համակարգ:
3. Բազմազանեցնել ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման մեխանիզմները՝ պարբերաբար վերլուծելով արդյունքները և պլանավորելով համապատասխան բարելավումներ:

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն իր տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը և հասարակությանը:

Փաստեր

8.1 ՄՈՒՀ-ն ունի հաշվետվողականության սահմանված կարգ:

ԵՊԲՀ 2015-2020թթ.-ի ՌԾ-ում որդեգրել է նպատակ. «ապահովել Համալսարանի հաշվետվողականությունը պետության և հասարականության հանդեպ»:

համալսարանը հաշվետվողականության համակարգը կանոնակարգելու նպատակով մշակել և ներդրել է աշխատանքների պլանավորման, վերահսկման և հաշվետվողականության միասնական մոտեցում. հաստատությունում գործում է ներքևից վերև և վերևից ներքև հաշվետվողականության համակարգը: Ստորաբաժանումների, ֆակուլտետների դեկանների և ամբիոնների հաշվետվությունները ամփոփվում են պրոռեկտորների, ռեկտորի տարեկան հաշվետվություններով, որոնք ներկայացվում են համալսարանի գիտական խորհրդում և հոգաբարձուների ընդհանուր ժողովում:

Արտաքին շահակիցների նկատմամբ հաշվետվողականության մեխանիզմներից է ՀՀ ԿԳՆ-ին և դրամաշնորհային ծրագրերի գրասենյակներին ներկայացվող հաշվետվությունները: Կրթական և այլ ծառայությունների մատուցման վերաբերյալ տեղեկատվության հրապարակումը համալսարանն իրականացնում է ինչպես սեփական (կայք, սոցիալական ցանցեր, պաշտոնաթերթ) այնպես էլ հանրապետական զանգվածային լրատվական միջոցներով (ռադիո, հեռուստացույց):

8.2. ՄՈՒՀ-ն ապահովում է ընթացակարգերի, գործընթացների թափանցիկությունը և հասանելիությունը հասարակությանը:

ԵՊԲՀ-ն իր ընթացակարգերը և գործընթացները հասարակությանը հասանելի և թափանցիկ դարձնելու համար ձևավորել է համապատասխան ստորաբաժանում՝ Հասարակության հետ կապերի բաժինը, որը գտնվում է աշխատակազմի ղեկավարի անմիջական ենթակայության ներքո: Կիրառվում են համալսարանի գործունեությանն առնչվող տեղեկատվության տարածման բավարար թվով հարթակներ՝ պաշտոնաթերթ, կայք, ֆեյսբուքյան էջ, պարբերականներ, հեռուստաընկերություններ, ռադիո: Համալսարանը հետևողականորեն, max monitor ծրագրի միջոցով վերլուծում և արձագանքում է լրատվական կայքերում ԵՊԲՀ-ի վերաբերյալ հրատարակվող համալսարանների օնլայն մեդիա վարկանիշի վերաբերյալ տեղեկատվությանը, որի 2019թ. մարտ ամսվա տվյալներով կայքերում հիշատակումների թվաքանակով ԵՊԲՀ-ն եղել է 2-րդ տեղում, ընդ որում դրական երանգավորումներով հրապարակումներում՝ 1-ին տեղում: Վերջիններս վերաբերում են ԵՊԲՀ-ի սոցիալական պատասխանատվության շրջանակում իրագործվող միջոցառումներին (որոնց վերաբերյալ տեղեկատվություն չէր տրամադրվել ինքնավերլուծության շրջանակում): Համալսարանն արձագանքում է բացասական երանգավորումներով հրապարակումներին՝ ներկայացնելով իր դիրքորոշումը և պարզաբանումները:

Այնուամենայնիվ, ԵՊԲՀ-ի պաշտոնական կայք էջը դեռևս ամբողջական պատկերացում չի տալիս հաստատության առանցքային գործընթացների վերաբերյալ (բացակայում են հաշվետվություններ, ՊԴԿ-ի թափուր պաշտոնների համալրման մրցույթներ, ստորաբաժանումների, բաժինների կանոնակարգեր և այլն), բազմաթիվ էջերում ավարտված չեն ռուսերենով կամ անգլերենով տեղեկատվության տրամադրման

գործընթացները, իսկ հաշվետվությունների առումով հանրությանը հասանելի է միայն գնումներին առնչվող հաշվետվությունները:

Համալսարանի պաշտոնաթերթում ևս հրապարակվում են համալսարանում տեղի ունեցող բարեփոխումներին, գիտաժողովների և այլ միջոցառումների վերաբերյալ հայտարարություններ: Օտարերկրյա դիմորդների համար համալսարանը տպագրում է օտարալեզու տեղեկատվական և գովազդային նյութեր:

8.3. ՄՈՒՀ-ում գործում են հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի կայուն մեխանիզմներ:

ԵՊԲՀ-ում գործում են հասարակության հետ հետադարձ կապի ձևավորման որոշակի մեխանիզմներ՝ համալսարան-գործատու-շրջանավարտ հանդիպումները, պետական կառավարման և այլ կառույցների հետ համագործակցությունը (ՀՀ ՊՆ, ՀՀ առողջապահության նախարարություն և դրա ստորաբաժանումներ, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, դպրոցներ, բանկեր, ասոցացիաներ, հիվանդանոցներ): Համալսարանի կողմից կազմակերպված համալսարան-գործատու-շրջանավարտ հանդիպումները միտված են աշխատաշուկայում առավել մրցունակ մասնագետների պատրաստման նպատակով առկա խնդիրների վերհանմանը և այդ ուղղությամբ առաջարկների, խորհրդատվությունների տրամադրմանը: Համալսարանն արձանագրել է միջազգային կառույցների, ինչպես նաև տեղական գործընկերների, մասնավորապես ստոմատոլոգների ասոցիացիաների կողմից վերհանված խնդիրները, որոնք հիմնականում կապված են օտարերկրյա շրջանավարտների միջազգային քննությունները հանձնելու, ինչպես նաև կարողությունների և հմտությունների մակարդակի հետ: Որպես առաջարկ գործատուները կարևորում են գործնական պարապմունքների ավելացման նպատակով համալսարանի նյութատեխնիկական բազայի բարելավումը, պետական մարմինների հետ համագործակցության ակտիվացումը, հրավիրյալ դասախոսների ինստիտուտի կատարելագործումը, ուսանողների կարողությունների զարգացմանը միտված դասավանդման մեթոդների կատարելագործումը, պրակտիկաների ժամանակահատվածի ավելացումը և այլն:

ԵՊԲՀ-ն հետադարձ կապ է ապահովում նաև միջազգային վարկանշավորման կառույցների և այլ երկրների գործընկեր հաստատությունների հետ՝ կրթական ծրագրերի բենչմարկինգի ապահովման, մշտադիտարկման և գնահատման նպատակով: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ այնուամենայնիվ, համալսարան-գործատու հետադարձ կապը դեռևս ուժեղ չէ. ինչպես նշեցին փորձագիտական այցի ժամանակ տեղի ունեցած հանդիպումների մասնակիցները, գործատուների հիմնական մասը համալսարանի շրջանավարտներն են, և ցածր է այդ գործատուների մոտիվացիան որպես արտաքին շահակիցներ ներգրավվելու որակի ապահովման գործընթացներին:

ԵՊԲՀ-ն հասարակության հետ հետադարձ կապի առավել ճկուն միջոց է համարում ֆեյսբուքյան էջը, որն ակտիվորեն թարմացվում է:

Հասարակության հետ հետադարձ կապի ձևավորման միտումով համալսարանը մշակել է հարցաթերթեր շրջանավարտների և գործատուների շրջանում հարցումներ կազմակերպելու համար, սակայն հարցման արդյունքները չեն նեկայացվել փորձագիտական խմբին:

ԵՊԲՀ-ի պաշտոնական կայքում բացակայում է հասարակության կողմից հրապարակումներին արձագանքներ կամ մեկնաբանություններ թողնելու հնարավորությունը:

8.4 ՄՈՒՀ-ում գործում են հասարակությանը գիտելիքների (արժեքների) փոխանցման մեխանիզմներ:

ԵՊԲՀ-ում գործում են բժշկական և խորհրդատվական ծառայությունների իրականացման և հասարակությանը գիտելիքների փոխանցման մեխանիզմներ: ԵՊԲՀ-ն գիտելիքներ փոխանցելու գործառույթն իրագործում է ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շահակիցների շրջանում: Համալսարանի կազմում գործող հիվանդանոցային համալիրներն անվճար խորհրդատվական ծառայություններ են մատուցում շահառուներին: Գործում է «Զինվորի տուն» վերականգնողական կենտրոնը, որն անվճար կազմակերպում է շահակիցների առողջության վերականգնողական ծառայությունների մատուցումը:

Համալսարանում հասարակությանը գիտելիքների փոխանցման մեխանիզմ է դիտարկվում ՊԴ անձնակազմին մարզային հիվանդանոցներ գործուղելը, բժիշկների վերապատրաստումները և այլն: ԵՊԲՀ հասարակությանը արժեքներ փոխանցելու միտումով պարբերաբար կազմակերպում է տարաբնույթ գիտական և սոցիալական միջոցառումներ:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն հանգամանքը, որ ԵՊԲՀ-ում առկա է հաշվետվողականության համակարգ, հաստատությունում գործում է վերևից ներքև և ներքևից վերև հաշվետվողականությունը, որը կրում է պարբերական բնույթ և ամփոփվում ռեկտորի տարեկան հաշվետվությամբ, ինչը նպաստում է հաշվետվողականության կանոնակարգված և համակարգային մոտեցման զարգացմանը: Ռեկտորի, պրոռեկտորների հաշվետվություններում մանրամասն ներկայացված են ծառացած խնդիրները, մինչդեռ ստորաբաժանումների հաշվետվությունները հիմնականում կրում են փաստերի, որոշ վիճակագրությունների արձանագրման բնույթ, բացակայում են եզրահանգումները, հայտնաբերված թերությունների վերացմանն ուղղված միջոցառումների առաջարկները, վերլուծական մոտեցումը, ինչը կարող է խոչընդոտել թույլ կողմերի վերհանման և հետագա բարելավման ու զարգացման գործընթացներին:

Համալսարանի պաշտոնական կայքում ռեկտորի տարեկան հաշվետվության բացակայությունը, ԵՊԲՀ-ի գործունեության առանձին ուղղությունների (ֆինանսական, որակի ապահովման) թափանցիկության ցածր աստիճանը, օտար լեզուներով տեղեկատվության ոչ ամբողջական ներկայացումը կարող են խոչընդոտել համալսարանի վերաբերյալ արտաքին շահակիցների հետաքրքրության բավարարմանը, նվազեցնել գործընթացների հասանելիությունը հասարակությանը, միջազգային գործընկերների հետ կապերի ձևավորմանը և ամրապնդմանը:

Դրական է այն փաստը, որ ԵՊԲՀ-ն սոցիալական պատասխանատվության շրջանակում իրականացնում է հսկայածավալ աշխատանք, սակայն դրա վերաբերյալ տեղեկատվության բացակայությունը ինստիտուցիոնալ ինքնավերլուծությունում, կարող է վկայել համալսարանի ինքնագնահատման համակարգի ոչ լիարժեք գործելու մասին:

Դրական է, որ ԵՊԲՀ-ն ունի հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի հարթակներ, գործում են մեխանիզմներ, սակայն համալսարանի պաշտոնական կայքում հասարակության կողմից արձագանքներ թողնելու հնարավորության բացակայությունը նվազեցնում է ներքին և, առավելապես, արտաքին շահակիցների կարիքներին արձագանքելու հնարավորությունները:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ԵՊԲՀ-ում գործում է հաշվետվողականության համակարգ, առկա են գործընթացները հասարակությանը հասանելի դարձնելու հարթակներ, գործում են հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի, գիտելիքների և արժեքների փոխանցման մեխանիզմներ, ԵՊԲՀ-ն իր

տրամադրած կրթության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է ներքին շահակիցներին և պետությանը, փորձագիտական խումբը գտնում է, որ ԵՊԲՀ-ն բավարարում է Չափանիշ 8-ի պահանջները:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ԵՊԲՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 8-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

Խորհրդատվություններ.

1. Ակտիվացնել որակի ապահովման համակարգի և հասարակության հետ կապերի պատասխանատուների համագործակցությունը:

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ

ՉԱՓԱՆԻՇ: Արտաքին կապերի միջոցով ՄՈՒՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով հաստատության միջազգայնացմանը:

Փաստեր

9.1 Փորձի փոխանակմանը, զարգացմանը և միջազգայնացմանը նպաստող միջավայր ստեղծելու նպատակով ՄՈՒՀ-ում գործում են արտաքին կապերի հաստատումը խրախուսող քաղաքականություն ու ընթացակարգեր:

Փորձագիտական հանդիպումներից և փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ ԵՊԲՀ-ն միջազգայնացումը և արտաքին կապերի զարգացումը դիտարկում է որպես գերակա ուղղություն: 2015-2020 թվականների ռազմավարական պլանում ԵՊԲՀ-ն նախատեսել է ապահովել համալսարանի միջազգայնացման գործընթացը՝ ստեղծելով փորձի փոխանակմանը նպաստող միջավայր: Համալսարանը նախատեսել է ամրապնդել կապերը միջազգային առաջատար համալսարանների հետ, վերանայել միջազգային կապերը խթանող քաղաքականությունը և այն դարձնել համալսարանի ստորաբաժանումների ընդհանուր գործունեության բաղկացուցիչ մաս, մշակել միջազգային գործունեության գնահատման ցուցիչներ, ակտիվացնել միջազգային բենչմարքինգը, դասախոսների և ուսանողների շարժունությունը, ինչպես նաև համալսարանի մասնակցությունը միջազգային ծրագրերում, բարելավել կայքը փոխանակման ծրագրերի մասին տեղեկատվության տարածման նպատակով, նպաստել դասախոսների և ուսանողների օտար լեզվի իմացության մակարդակի բարձրացմանը:

Նախորդ հավատարմագրման խորհրդատվությունների հիման վրա համալսարանը մշակվել է արտաքին կապերի զարգացման և միջազգայնացման գործողությունների ժամանակացույց, սակայն, որտեղ չկան հստակ չափելի ցուցիչներ գործողությունների արդյունքների գնահատման համար:

2017-18 թվականներին Շանհայի վարկանիշավորման խորհրդատվություն կազմակերպության հետ համատեղ իրականացվել է ԵՊԲՀ գիտական գործունեության բենչմարքինգ-վերլուծություն: Իրականացվել է Եվրոպական, ԱՄՆ, ԱՊՀ տարածքի երկրների համալսարանների ՄԿԾ-ների հետ համեմատական վերլուծություն, որի տվյալների հիման վրա ուսումնական պլաններում կատարվում են որոշակի փոփոխություններ:

9.2 ՄՈՒՀ-ի արտաքին կապերի և միջազգայնացման ապահովման ենթակառուցվածքը երաշխավորում է կանոնակարգված գործընթաց:

Միջազգայնացման գործընթացների և արտաքին կապերի համակարգման համար ԵՊԲՀ-ում գործում են երկու ստորաբաժանումներ՝ «Միջազգային համագործակցության բաժին» (8 հաստիքով) և «Օտարերկրյա ուսանողների հետ տարվող աշխատանքների բաժին» (3 հաստիքով): Բաժինների գործառույթները նշված են բաժնի պետերի հաշվետվություններում, համաձայն որոնց միջազգային համագործակցության բաժնի գործառույթներն ընդգրկում են համալսարանի և օտարերկրյա բարձրագույն ուսումնական հաստատությունների միջև համագործակցության պայմանագրային հարաբերությունների ձևավորումը և իրականացման հաշվետվությունների կազմումը, համապատասխան փաստաթղթաշրջանառության իրականացումը, համալսարանի վեբ կայքին տեղեկատվության տրամադրումը և այլն: Օտարերկրա ուսանողների հետ տարվող աշխատանքների բաժինը կազմակերպում է միջմշակույթային միջոցառումներ, օտարերկրյա ուսանողներին ՀՀ–ում կացության կարգավիճակի տրամադրման համար ներկայացվող փաստաթղթերի լրացում և այլն: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ առկա է կրկնություն երկու բաժինների աշխատակիցների գործառույթներում, իսկ հաստատված գործառույթներ առկա չէին:

Ուսանողների ուսուցման հետ կապված բոլոր գործառույթները՝ ուսումնամեթոդական, գիտական, կազմակերպչական, ինչպես նաև ամբիոնների և ուսանողների հետ տարվող ամենօրյա աշխատանքները համակարգում են օտարերկրացիների ուսուցման դեկանատը և նախապատրաստական բաժինը: Կապը օտարերկրյա ուսանողների ծնողների հետ ևս իրականացնում են վերոնշյալ ստորաբաժանումները: Երկու բաժինների աշխատանքները համակարգում է միջազգային աշխատանքների գծով պրոռեկտորը, ով յուրաքանչյուր տարի ներկայացնում է հաշվետվություն Գիտական խորհրդին:

9.3 ՄՈՒՀ-ն արդյունավետորեն համագործակցում է տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ:

ԵՊԲՀ-ն փորձի փոխանակման նպատակով ընդլայնել է համագործակցությունը արտասահմանյան և ՀՀ համալսարանների, առողջապահական և գիտական կազմակերպությունների, առողջապահության բնագավառի ուսանողական և մասնագիտական ասոցիացիաների հետ: Փորձագիտական խմբի հանդիպումներից պարզ դարձավ, որ վերջին տարիներին ավելացել է համագործակցությունը արտերկրում մասնագիտական գործունեություն ծավալող շրջանավարտների հետ, ինչին նպաստել է նաև Շրջանավարտների ակումբի ստեղծումը:

Նախորդ հավատարմագրումից հետո ընկած ժամանակահատվածում ԵՊԲՀ-ում ակտիվացել է դասախոսների և ուսանողների մասնակցությունը փոխանակման ծրագրերի, սակայն փորձագիտական այցի ընթաքում պարզվեց որ ուսանողները 6 տարվա ընթացքում չեն կարողանում տարբեր փոխանակային ծրագրերով մեկնել արտասահմանյան համալսարաններ, քանի որ ուսումնական պլանները բավարար ճկուն չեն և թույլ չեն տալիս ապահովել ուսանողների ավելի մեծ ընդգրկվածություն:
Փորձագիտական հանդիպումներից և ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ դասախոսների և ուսանողների մասնակցությունը փոխանակման ծրագրերին հիմնականում անհատական նախաձեռնությունների արդյունք է, որը պայմանավորած է նաև նրանով, որ ֆինանսական հատկացումներ չեն արվում միջազգայնացման ուղղությամբ և ուսումնական պլաններում բացակայում են «շարժունության պատուհանները»:

2018 թվականին համալսարանը կնքել է պայմանագրերմոտ քսան միջազգային բժշկական ուղվածության համալսարանների հետ, սակայն պայմանագրերին կից հստակ պլան և որակի ինդիկատորներ առկա չեն:

Վերջին շրջանում ԵՊԲՀ կնքած համաձայնագրերից չեն գործել Օքսֆորդի կրթության և զարգացման ակադեմիայի, Ֆրայբուրգի Ալբերտ Լյուդվիգի համալսարանի հետ կնքված համաձայնագրերը, որոնց չիրականացվելու հիմնական պատճառները ֆինանսական խնդիրներն են եղել:

9.4 ՄՈՒՀ-ն ապահովում է ներքին շահակիցների օտար լեզվի իմացության անհրաժեշտ մակարդակ՝ միջազգայնացման արդյունավետությունը բարձրացնելու համար:

ԵՊԲՀ ռազմավարական ծրագրում շեշտադրված է ներքին շահակիցների օտար լեզուների իմացության մակարդակի բարձրացմանն ուղղված մեխանիզմների մշակումը: Եվ համալսարանի, հաշվի առնելով նախորդ հավատարմագրման ժամանակ տրված խորհրդատվությունները, փորձում է նոր հնարավորություններ ստեղծել ներքին շահակիցների օտար լեզվի մակարդակի բարձրացման համար: համալսարանի ջանքերով օտար լեզուների դասընթացներ են կազմակերպվում ուսանողների և դասախոսների համար: ԵՊԲՀ-ն բացի համալսարանի ներում իրականացվող դասընթացներից, Երևանի պետական համալսարանի, Վ.Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի, Հայաստանի Ամերիկյան և Ֆրանսիական համալսարանների, Հայաստանում ԱՄՆ դեսպանատան հետ համատեղ կազմակերպում է դասընթացներ: 2015թ-ից ի վեր այս համագործակցությունների շրջանակներում անգլերենի, ֆրանսերենի և գերմաներենի անվճար դասընթացների են մասնակցել շուրջ 360 ուսանող և դասախոս: Փորձագիտական խմբի հանդիպումներից պարզ դարձավ, որ հատկապես բարձր է երիտասարդ դասախոսների՝ օտար լեզուների տիրապետման մակարդակը: Ինչպես նաև, հաշվի առնելով օտարերկրյա ուսանողների թվի սպասվող ավելացումը, ԵՊԲՀ-ն ավելացրել է դասավանդողների համար կազմակերպվող անգլերեն լեզվի դասընթացների քանակը:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ տեղացի ուսանողների համար օտար լեզվի իմացությունը դեռևս խնդիր է համալսարանի համար: Ինչպես նաև ինքնավերլուծությունում առկա չեն նաև տվյալներ, թե վարչական աշխատակազմի քանի տոկոսն է տիրապետում օտար լեզուների:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում ԵՊԲՀ ջանքերն ուղղված համալսարանի միջազգայնացմանը և արտաքին կապերի զարգացմանը: Որպես առաջնահերթություն, ԵՊԲՀ-ի միջազգայնացումը և արտաքին կապերի զարգացումը ներառված է համալսարանի զարգացման ռազմավարական ծրագրում: Նախորդ հավատարմագրման խորհդատավություններից ելնելով՝ ԵՊԲՀ-ն մշակել է արտաքին կապերի զարգացման և միջազգայնացման գործողությունների ժամանակացույց, սակայն արդյունքների գնահատման հստակ ցուցչների բացակայությունը վտանգում է դրան մշտադիտորկումը և ոլորտի շարունակական և թիրախային զարգացումը: Դրական է, որ ԵՊԲՀ-ն, նախորդ հավատարմագրման խորհրդատվությունների հիման իրականացրել է ՄԿԾ-ների միջազգային բենչմարքինգ, որի արդյունքնում փոփոխություններ են իրականացվել ուսումնական պլաններում, ինչն էլ կնպաստի ուսանողների շարժունության մեծացմանը:

Նախորդ հավատարմագրումից հետո ԵՊԲՀ-ում կնքվել են պայմանագրեր մի շարք արտասահմանյան ուսումնական հաստատությունների հետ, և մեծացել է փոխանակման ծրագրերով ուսանողների և դասախոսների շարժունությունը: Սակայն ուսումնական պլաններում շարժունության պատուհանի բացակայությունը

խոչընդոտում է առավել մեծ թվով ուսանողների մասնակցությանը փոխանակման ծրագրերին:

Դրական է նաև տարբեր երկրներում ԵՊԲՀ Շրջանավարտների ակումբների ստեղծումը, որը նույնպես նպաստում է համալսարանի գրավչության աճին և միջազգայնացման զարգացմանը: ԵՊԲՀ-ն նաև ակտիվորեն համագործակցում է տեղական մի շարք համալսարանների, ՀՀ առողջապահության և պաշտպանության նախարարությունների հետ՝ ոլորտի զարգացման նպատակով: Սակայն քիչ է համագործակցությունը տեղական հետազոտական ինստիտուտների հետ, ինչը կնպաստի հետազոտական գործունեության բարելավմանը և նարնց միջոցով նոր կապերի ձևավորմանը:

Արտաքին կապերի և միջազգայնացման աշխատանքների համակարգման համար առկա են մի քանի ստորաբաժանումներ և պատասխանատուներ, որոնց աշխատանքը նպաստում է միջազգայնացման ոլորտի զարգացմանը և ոլորտում ծառացած խնդիրների արդյունավետ լուծմանը: Սակայն բաժինների գործառույթների հստակեցումը կնպաստի առավել համակարգված աշխատանքին:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ նախորդ հավատարմագրման գործընթացի փորձագետների խորհրդատվությունները հաշվի առնելով, իրականացվել են քայլեր դասախոսների և ուսանողների օտարել լեզվի իմացության մակարդակի բարձրացման ուղղությամբ: Սակայն, ներկայում անհրաժեշտություն կա խորացնելու անգլերեն լեզվի իմացությունը ուսանողների շրջանում, ինչը կնպաստի շարժունությանը, առավել մեծ թվով ուսանողների մասնակցությանը փոխանակման ծրագրերին, ինչպես նաև կմեծացնի օտարալեզու գրականությունից օգտվելու նրանց հնարավորությունները:

Եզրակացություն: Հաշվի առնելով, այն որ ԵՊԲՀ-ն կարևորում է արտաքին կապերի զարգացումը և միջազգային կապերի ամրապնդումը և դրա համար մշակել է համապատասխան ռազմավարություն և գործողությունների ծրագիր, առկա են համապատասխան ստորաբաժանումներ, որոնք ապահովում են արտաքին կապերի և միջազգայնացման ոլորտի անհրաժեշտ գործընթացները, համալսարանը համագործակցում է ինչպես տեղական, այնպես էլ արտասահմանյան համալսարանների և այլ կառույցների հետ, մեծացել է ուսանողների և դասախոսների մասնակցությունը փոխանակման ծրագրերին, նախորդ հավատարմագրումից հետո բարելավվել է ուսանողների և դասախոսների օտար լեզվի իմացության մակարդակը, ինչպես նաև քայլեր են ձեռնարկվում ներքին շահակիցների անգլերենի իմացության մակարդակի բարձրացման ուղղությամբ, փորձագիտական խումբը գտնում է, որ ԵՊԲՀ-ն բավարարում է չափանիշ 9-ի պահանջներին:

Եզրահանգում: Փորձագիտական խումբը ԵՊԲՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 9-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

Խորհրդատվություններ.

1. Ընդլայնել արտաքին կապերը և մշակել հստակ չափելի ցուցիչներ ոլորտում դրված նպատակների իրականացումը գնահատելու համար:
2. Ակտիվացնել փոխանակային ծրագրերը և խրախուսել ուսանողներին և դասախոսներին մասնակցելու այդ ծրագրերին՝ հստակ մեխանիզմների և ֆինանսական հատկացումների միջոցով
3. Ընդլայնել ՀՀ-ում անվանի գիտնականների և պրոֆեսորների ներգրավվածությունը՝ փորձի փոխանակման նպատակով:

4. Շարունակել ուսանողների և դասախոսների, ինչպես նաև վարչական աշխատակազմի օտար լեզվի իմացության մակարդակի բարձրացմանն ուղղված աշխատանքները:

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:

Փաստեր

10.1 ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր:

ԵՊԲՀ ռեկտորի՝ 31.10.2011թ. Կրթության որակի գնահատման և ապահովման կենտրոնի կազմի նշանակման մասին հրամանով նշանավորվել է ԵՊԲՀ-ում որակի ապահովման համակարգի ներդրման մեկնարկը: 2013 թվականին հրապարակվել է համալսարանի կրթության որակի ապահովման ուղեցույց-ձեռնարկը, որը լրամշակման մինչ օրս չի ենթարկվել:

Համաձայն ինքնավերլուծության՝ որակի ապահովման ոլորտի շրջանակներում «ԵՊԲՀ-ն հավակնում է ունենալ գործունեության արդյունավետության գնահատման ցուցանիշների վրա հիմնված և գործընթացների ամբողջական շրջափուլն ընդգրկող կրթության որակի ապահովման համակարգ, որը միտված կլինի բոլոր գործընթացների աստիճանական և շարունակական բարելավմանը»: ԵՊԲՀ-ն 2015-2020թթ. ռազմավարական ծրագրում նույնպես կարևորվում է կրթության որակի ապահովման համակարգի շարունակական բարելավումը, համալսարանի տարբեր ստորաբաժանումների ինքնագնահատման պարբերականությունը, համալսարանի կրթական, գիտական և ֆինանսական գործունեություններում որակի ապահովման գործընթացների համակողմանի ընդգրկվածությունը և այլն:

ԵՊԲՀ-ում որակի կառավարման համակարգի պատասխանատու ստորաբաժանման՝ կրթության որակի գնահատման և ապահովման կենտրոնի կանոնակարգը հաստատվել է ԵՊԲՀ-ի գիտական խորհրդի կողմից 2018 թվականին, որտեղ սահմանված են կենտրոնի նպատակը, հիմնական գործառույթները, հաշվետվողականությունը և այլն:

ԵՊԲՀ-ում առկա են մի շարք ընթացակարգեր (Ինքնավերլուծության զեկույցի մշակման ընթացակարգ, Ինքնագնահատման ցուցանիշների գնահատման ընթացակարգ, ԳԱՑ-երի հիման վրա գործունեության գնահատման ընթացակարգ և այլն), որոնք հիմնականում մշակված են 2012 թվականին, չեն լրամշակվել նախորդ հավատարմագրման արդյունքներից ելնելով, իսկ որակի ապահովման համակարգված և ներկա պահանջներից ու ՌԾ նպատակներից բխող, ԵՊԲՀ բոլոր ոլորտներն ընդգրկող քաղաքականություն դեռևս մշակված չէ :[5] Որակի ապահովման ոլորտում ԵՊԲՀ-ում առկա են որոշ գործիքներ, մեխանիզմներ: Օրինակ, իրականացվում է Դասախոսը ուսանողի աչքերով էլեկտրոնային հարցում, որի վերլուծության մեջ առկա է մեծ տեղեկատվություն, սակայն հարկ է նշել, որ օտարերկրյա ուսանողները 2016-2017թթ. ուսումնական տարվա 2-րդ կիսամյակից են ներգրավվել հարցումների իրականացմանը: Բացիուսումփորձագիտական խմբին ներկայացված հարցումների հարցաթերթերում

[5]Տեքստը վերաշարադրվել է հաստատության դիտողությունների և առաջարկությունների քննարկման արդյունքնում:

ընդգրկված հարցերը ամբողջությամբ չեն ծածկում բուհում ուհումո բոլոր բոլորմումփորձ:[6] Կազմակերպվում են նաև ավարտական ատեստավորմանն վերաբերյալ հետազոտություն, մնացորդային գիտելիքների գնահատում, որոնց ամփոփումները պարունակում են թվային տվյալներ, իսկ որակական վերլուծություն, բացահայտված խնդիրների վերաբերյալ հետագա պլանավորում առկա չէ: ԵՊԲՀ Որակի գնահատման նապահովման կենտրոնը հարցման արդյունքները ուղարկում է տարբեր ստորաբաժանումներ, սակայն հարցման արդյունքների քննարկում տարբեր թիրախային խմբերի շրջանում /մասնավորապես ուսանողների շրջանում/ տեղի չի ունենում: [7]

ԵՊԲՀ-ի ռեկտորատի 27.09.2012 նիստի N 04 որոշմամբ հաստատված է համալսարանի գործունեության և վիճակի գնահատման առանցքային ցուցանիշների հիման վրա ինքնագնահատման և որակի բարելավմանն ուղղված միջոցառումների մշակման ընթացակարգը, որով սահմանված է որակի բարելավմանն ուղղված տարեկան միջոցառումների պլանի կազմում և ինքնագնահատման ցուցանիշների վերլուծություն ուսումնական տարվա վերջում, սակայն տվյալ վերլուծությունները առկա չէին:

Փորձագիտական այցի ընթացքում խմբին ներկայացվեց «ԲՈՒՀ-ի գործունեության գնահատման առանցքային ցուցանիշների լրակազմը» 7 էջից բաղկացած ցուցանիշները թվարկող թերթիկ, որը հաստատված չէ որևէ փաստաթղթով և դրանցով հավաքագրված տեղեկատվություն չի ներկայացվել:

Կրթության որակի գնահատման և ապահովման կենտրոնն իր գործունեությունը՝ համաձայն իր 2018թ հաստատված կանոնակարգի, ամփոփում է միայն տարեկան զեկույցով: Հարկ է նշել, նաև որ համալսարանի տարբեր տիրույթներում իրականացվող գործընթացների արդյունավետության գնահատումներ չեն իրականացվել: Ինչպես նաև չի իրականացվել ինքնագնահատումը, ինչը շեշտադրված է նաև նախորդ հավատարմագրման գործընթացի փորձագիտական զեկույցում:

10.2 Որակի ներքին ապահովման գործընթացների կառավարման նպատակով ՄՈՒՀ-ը տրամադրում է մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ:

Կրթության որակի գնահատման և ապահովման կենտրոնի ղեկավարի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջները ամրագրված են կենտրոնի կանոնակարգում, հաստատված 2018թ.-ին: Ղեկավարի տեղակալի և ավագ մասնագետների գործառույթների նկարագիրը ևս սահմանված են կանոնակարգով, պաշտոնի անձնագրեր դեռևս մշակված չեն:

ԵՊԲՀ-ում գործող կրթության որակի գնահատման և կենտրոնի կանոնակարգով կենտրոնի գործառույթներում ներառված է կրթության որակի ապահովման կանոնակարգային, ընթացակարգային և չափորոշիչ փաստաթղթեր մշակելը, կրթության որակի ներքին ապահովմանն ուղղված գործիքների և գործիքակազմերի մշակումը և ներդրումը, սակայն ԵՊԲՀ-ում որպես ՈԱ մեխանիզմներ են կիրառվում են միայն հարցումները, բենչմարքինգը և հաշվետվությունությունը: Նշված կանոնակարգով (4-րդ կետի գ և ե ենթակետեր) սահմանված է. «Կենտրոնի քաղաքականությունն ուղղված է..ապահովել ուսման վերջնարդյունքների վրա հիմնված որակյալ կրթական համակարգ, երաշխավորել շահառուների բավարարվածությունը»: Բացի այդ, նույն կանոնակարգով (կետ 11) սահմանված է, որ կենտրոնի գործառույթներում ներառված է «համակարգել համալսարանում գործող կրթության որակի ապահովմանն ուղղված այլ կառույցների և/կամ այս ուղղությամբ գործունեություն ծավալող աշխատակիցների

[6] Տեքստը վերաշարադրվել է հաստատության դիտողությունների և առաջարկությունների քննարկման արդյունքնում:

[7] Տեքստը վերաշարադրվել է հաստատության դիտողությունների և առաջարկությունների քննարկման արդյունքնում:

աշխատանքը»: Սակայն այլ ստորաբաժանումների կանոնակարգերում Կրթության որակի գնահատման և ապահովման կենտրոնին ենթակայություն սահմանված չէ:

Որակի ներքին ապահովման գործընթացների կառավարման նպատակով կենտրոնին տրամադրվել է մարդկային ռեսուրսներ: Այցի պահին կենտրոնը ներկայացված էր հինգ աշխատակցով: Ինչպես պարզ դարձավ փորձագիտական այցի ժամանակ՝ նախատեսվում է կենտրոնի համագործակցության ակտիվացում ուսումնամեթոդական հանձնաժողովների հետ: Որակի ապահովման ոլորտի նպատակներն իրականացնելու համար ստեղծվել են նաև ֆակուլտետային հանձնաժողովներ, սակայն այդ հանձնաժողովների գործունեության հիմքեր առկա չէին: ՈԱ կենտրոնի գործունեությունը ֆինանսավորվում է համալսարանի միջոցներից: Համալսարանի բյուջեում կենտրոնի համար տող չի հատկացված, իսկ ԵՊԲՀ-ի ներկայացրած ֆինանսական պլանավորման փաստաթղթերում ՈԱ գործընթացների համար նախատեսված առանձին ֆինանսական հատկացումներ ամրագրված չեն:

Փորձագիտական այցի ընթացքում, Կրթության որակի գնահատման և ապահովման կենտրոնի ներկայացուցիչները հայտնեցին իրենց բավարարվածությունը իրենց տրամադրված ռեսուրսներից:

ԵՊԲՀ-ի որակի ապահովման և գնահատման կենտրոնի նյութական ռեսուրսները ձեռք են բերվել դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում:

10.3 Ներքին և արտաքին շահակիցները ներգրավված են որակի ապահովման գործընթացներում

Կրթության որակի գնահատման և ապահովման կենտրոնի կանոնակարգում շեշտադրվում է արտաքին և ներքին շահակիցների մասնակցությունը ՈԱ գործընթացներում:

Ներքին շահակիցները ներգրավված են ՈԱ գործընթացներում հարցումներին մասնակցելով, իսկ արտաքին շահակիցների ընդգրկվածությունը, մասնավորապես օտարերկրյա շահակիցների և գործատուների, ցածր է: [8]ԵՊԲՀ-ում գործող ուսումնամեթոդական վարչությունը և առանձին մասնագիտացված ուսումնամեթոդական խորհուրդները քննարկում են ՄԿԾ-ների բարելավման հիմնահարցեր, սակայն հարկ է նշել, որ որակի ապահովման և գնահատման կենտրոնի և ուսումնամեթոդական հանձնաժողովների աշխատանքի կապը հստակ չէ (դրանց գործառույթներում նկարագրված չէ որակի ապահովման գործընթացներում յուրաքանչյուրի պատասխանատվությունը):

Այցի ընթացքում տեղի ունեցած հանդիպումների ժամանակ Կրթության որակի գնահատման և ապահովման կենտրոնի աշխատակիցները մատնանշեցին գերակա այն հիմնախնդիրները, որոնք ենթակա են շարունակական բարելավման՝ ՈԱ գործընթացների լիարժեք քարտեզագրման ապահովումը, գործատուների ներգրավվածության ակտիվացումը, որակի ապահովման համակարգի ճյուղավորված ցանցի ստեղծումը՝ մինչև ամբիոնի մակարդակ և այլն:

10.4 Որակի ներքին ապահովման համակարգը պարբերաբար վերանայվում է:

ԵՊԲՀ-ի 2015-2020թթ. ՌԾ-ի գործողությունների պլանում համալսարանի որակի ապահովման գործընթացների բարելավման և շարունակական զարգացման նպատակով նախատեսվել է. «Կրթության որակի ապահովման համակարգի ընդլայնում, որակի գործառույթների և գործընթացների ուղեցույցների տպագրություն, համալսարանի ստորաբաժանումների կարիքների գնահատման արդյունավետության բարելավում»:

---

[8] Տեքստը վերաշարադրվել է հաստատության դիտողությունների և առաջարկությունների քննարկման արդյունքնում:

2013թ.-ին հրատարակվել է ԵՊԲՀ-ի կրթության որակի ապահովման համակարգի ուղեցույց-ձեռնարկը, որը, չնայած ՌԾ գործողությունների պլանով նախատեսված լինելուն, չի լրամշակվել՝ նախորդ հավատարմագրման արդյունքները հաշվի առնելով և չի վերահրատարակվել:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ ԵՊԲՀ-ի տարբեր ոլորտներում որակի ներքին ապահովման գործընթացները գտնվում են ՊԻԳԲ շրջափուլի տարբեր մակարդակներում:

Մասնավորապես, բարելավվել է միայն ուսանողների գնահատման համակարգը. ներդրվել են բազմաբաղադրիչ գնահատման համակարգ և դասախոսների որակավորման գնահատման համակարգը:

Պլանավորվել և իրականացվել են որոշ իրավանորմատիվային փաստաթղթերի մշակումը՝ 2015-2020թթ. ՌԾ, Կրթության որակի գնահատման և ապահովման կենտրոնի, կարիերայի կենտրոնի կանոնակարգեր, մշակվել են նաև որոշ պաշտոնների անձնագրեր, փաստաթղթաշրջանառության բարելավմանը, միջազգայնացմանը, համալսարանի վարկանշավորմանն ուղղված աշխատանքները կանոնակարգող փաստաթղթեր, կատարվել են կառուցվածքային փոփոխություններ:

Փաստաթղթերը մշակված են հիմնականում 2018 թվականին:

Պլանավորումը մասամբ է իրականացվել ՈԱ գործընթացների թափանցիկության և արդյունքների տարածման, վերլուծությունների, հետադարձ կապի ապահովման, ֆինանսական պլանավորման, ՈԱ մեխանիզմների արդյունավետության գնահատման գործընթացների համար:

10.5 Որակի ապահովման ներքին համակարգն ապահովում է բավարար հիմքեր որակի ապահովման արտաքին գնահատման գործընթացների համար:

ԵՊԲՀ-ն ինքնավերլուծության միջոցով փորձել է ապահովել հիմքեր որակի ապահովման արտաքին գնահատման գործընթացների համար: Այդ առումով հավաքագրվել են տվյալներ, իրականացվել են հարցումներ, ըստ հավատարմագրման ձևաչափի իրականացվել է ինքնավերլուծություն, նախորդ ինստիտուցիոնալ հավատարմագրման փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների կատարման վերաբերյալ ՈԱԱԿ-ին ներկայացվել է հաշվետվություն: Միաժամանակ, փորձագիտական վերլուծությունների արդյունքում պարզ դրաձավ, որ հավաքագրված տեղեկատվությունը ամբողջական չէ, չի ներառում համալսարանի բոլոր ոլորտները: [9]Չեն կազմակերպվում հանդիպումներ և ֆոկուս խմբային քննարկումներ համալսարանի տարբեր շահակիցների մասնակցությամբ:

10.6 Որակի ապահովման ներքին համակարգն ապահովում է ՄՈՒՀ-ի գործունեության թափանցիկությունը՝ տրամադրելով ՄՈՒՀ-ի գործընթացների որակի մասին տեղեկատվություն՝ ներքին և արտաքին շահակիցների համար:

Համալսարանի գործընթացների որակի մասին տեղեկատվության տրամադրման հարթակ դիտարկվում են ԵՊԲՀ-ի պաշտոնական կայքէջը, ֆեյսբուքյան էջը:

ԵՊԲՀ-ն ձեռնարկել է միջոցներ համալսարանի գործընթացների որակի վերաբերյալ տեղեկատվության թափանցիկությունը և հաշվետվողականությունն ապահովելու համար, այնուամենայնիվ ինչպես արտաքին, այնպես էլ ներքին շահակիցների իրազեկվածությունը համալսարանի տարբեր ոլորտների որակի մասին տեղեկացվածությունը ցածր է, վերլուծությունները, հարցումների արդյունքները չեն քննարկվում մասնակիցների հետ:

---

[9] Տեքստը վերաշարադրվել է հաստատության դիտողությունների և առաջարկությունների քննարկման արդյունքնում:

Թույլ հիմքերի վրա է հաշվետվողականության թափանցիկությունը (հասանելի են միայն 2018թ.-ին իրականացված գնումների վերաբերյալ հաշվետվությունները), հատկապես բացակայում է թափանցիկության համակարգի հիմնական բաղադրիչներից մեկը՝ ռեկտորի տարեկան հաշվետվությունը: ԵՊԲՀ-ի պաշտոնական կայքում Կրթության որակի գնահատման և ապահովման կենտրոնի վերաբերյալ տեղեկատվությունը ևս չի թարմացվել:

ՈԱ գործընթացների որոշ ընթացակարգեր ԵՊԲՀ-ի պաշտոնական կայքի միջոցով հասանելի են շահակիցներին (կանոնադրություն, կանոնակարգեր), այնուամենայնիվ, կառույցի գործունեության մասին ամբողջական տեղեկատվությունը բացակայում է. չկան աշխատանքային պլանները, ռեկտորի, պրոռեկտորների հաշվետվությունները, ընթացիկ գործունեության վերաբերյալ տեղեկատվությունը:

Դատողություններ: ԵՊԲՀ-ն նախորդ հավատարմագրման գործընթացի խորհրդատվություններից ելնելով՝ որպես նպատակ իր 2015-2020թթ. ՌԾ-ում սահմանել է որակի ապահովման մշակույթի ձևավորման գործընթացի արդյունավետության բարձրացման ապահովումը և 2018 թվականին մշակել է ՈԱ և գնահատման կենտրոնի կանոնակարգը, որտեղ նկարագրված են կենտրոնի գործառույթները, խնդիրները, կենտրոնի ղեկավարի և աշխատակիցների գործառույթները: Այնուամենայնիվ, կենտրոնի գործառույթների հավակնոտ ձևակերպումները և փաստացի իրականացվող որակի ապահովման գործընթացների անհամապատասխանությունը, խոչընդոտում են որակի ապահովման ոլորտում ռազմավարական նպատակների իրականացումը: Կարևոր է շեշտադրել, որ մինչև այժմ մշակված որակի ապահովման ոլորտի փաստաթղթային հենքի կիրառման (ինքնագնահատում, տարբեր գործընթացների արդյունավետության գնահատում, ԳԱՑ-երի հիման վրա վերլուծություններ, ԵՊԲՀ բոլոր ՄԿԾ-ների որակի գնահատում և վերլուծություն) հիմքերը բացակայում են, ինչպես նաև առկա չէ համալսարանի գործունեության բոլոր ոլորտները ընդգրկող և ՌԾ առաջնահերթություններից բխող որակի ապահովման գործուն քաղաքականություն, որն էլ խոչընդոտում է առկա խնդիրների բացահայտմանը և շարունակական բարելավմանը, ինչպես նաև բուհում լավագույն փորձի կուտակմանը և տարածմանը:

Կրթության որակի գնահատման և ապահովման կենտրոնի ղեկավարի և աշխատակիցների պաշտոնների անձնագրերի մշակումը և հաստատումը կնպաստի նրանց գործառույթների շրջանակի, իրավասությունների և պատասխանատվությունների հստակությանը: Կրթության որակի գնահատման և ապահովման կենտրոնի գործունեությունը, համալսարանի բոլոր ստորաբաժանումների հետ ոչ ակտիվ համագործակցության պարագայում, չի կարող լիարժեքորեն նպաստել ԵՊԲՀ-ի առաքելության և ՌԾ-ի իրագործմանը, կրթության որակի բարելավմանը, համալսարանի մրցունակության բարձրացմանը: Որակի առաջընթացի ցուցիչների, ինքնագնահատման ցուցանիշների, մեխանիզմների ազդեցության գնահատման բացակայությունն էլ կարող է խոչընդոտել ՈԱ գործընթացների արդյունավետության գնահատմանը:

Դրական է, որ համալսարանը որակի ներքին ապահովման գործընթացների կառավարման նպատակով տրամադրում է մարդկային, նյութական ռեսուրսներ և, որ ԵՊԲՀ Որակի ապահովման և գնահատման կենտրոնը համալրված է մոտիվացված աշխատակիցներով, այդուհանդերձ, համալսարանի գործունեության և գործընթացների ծավալները, շահակիցների ոչ միատարր լինելու հանգամանքը հաշվի առնելով, գնահատված չէ կենտրոնին տրամադրված մարդկային ռեսուրսների քանակի բավարար լինելը, որը կարող է վտանգել որակի ապահովման գործընթացների լիարժեք իրագործումը (իրականացվող աշխատանքների ընդգրկունության մեծացման մասով նաև): Բացի այդ, որակի գործընթացների իրականացման ֆինանսական

ապահովվածության մասով անհրաժեշտ պլանավորում չիրականացնելը ևս կարող է խոչընդոտ հանդիսանալ ՈԱ գործընթացների շարունակականության ապահովման համար՝ դրանց հետագա երկարաժամկետ զարգացման տեսանկյունից:

ԵՊԲՀ ներքին շահակիցները ներգրավված են ՈԱ գործընթացներում, սակայն մտահոգիչ է արտաքին շահակիցների ոչ բավարար ներգրավվածությունը: Համալսարանը դեռևս չի գնահատել և վերլուծել նրանց իրազեկվածության մակարդակը ՈԱ գործընթացների վերաբերյալ և դրա վրա ազդող գործոնները, ինչը կարող է խոչընդոտել որակի շարունակական զարգացմանը:

Որակի ապահվման ներքին համակարգը շարուրնակական բարելավման կարիք ունի, ԵՊԲՀ-ում իրականացվող մի շարք գործընթացներ դեռևս գտնվում են պլանավորման և իրականացման փուլում, իսկ համալսարանի տարբեր գործընթացների արդյունավետության գնահատում և դրանց հիման վրա բարելավումներ շատ քիչ են կատարվում, ինչը խոչընդտում է որակի մշակույթի բարելավմանը և լավագույն փորձի կուտակմանը և տարածմանը, ինչպես նաև դանդաղեցնում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավումը: ԵՊԲՀ-ի ՈԱ համակարգն ինքնավերլուծության միջոցով փորձում է հիմքեր ապահովել ՈԱ արտաքին գնահատման գործընթացների համար, սակայն հաստատությունը դեռևս չի հստակեցրել տեղեկատվության այն քանակը, որի հավաքագրումը և վերլուծումը բավարար կլինի ներքին և արտաքին հիմնավոր գնահատումներ իրականացնելու համար: Տեղեկատվության հավաքագրման նպատակով հարցվածների թվակազմի ավելացումը և այդ գործընթացներում արտաքին շահակիցների ներգրավումը և հարցաթերթերում առավել թիրախային հարցադրումների ընդգրկումը, շահակիցների հետ տարբեր հանդիպումների իրականացումը, որակի գնահատման ցուցիչների մշակումն ու կիրառումը կնպաստեն առավել արժանահավատ և օբյեկտիվ տվյալների հավաքագրմանը և հիմնավոր կառավարչական որոշումների կայացմանը:

ԵՊԲՀ-ն քայլեր է ձեռնարկում իր գործունեության հրապարակայնությունը ապահովելու նպատակով, սակայն համալսարանի պաշտոնական կայքէջում որակի ներքին ապահովման համակարգի կողմից տրամադրված տեղեկատվությունը ամբողջական թափանցիկություն և հաշվետվողականություն չի ապահովում շահակիցների համար, ինչը կարող է խոչընդոտ հանդիսանալ նրանց իրազեկվածության և վստահության ամրապնդման տեսանկյունից:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ԵՊԲՀ-ում որակի ապահովման գործընթացների կանոնակարգման նպատակով առկա չէ փաստաթղթային համակարգված հենք՝ համալիր և ՌԾ առաջնահերթություններից բխող քաղաքականություն, վերանայված ՈԱ ձեռնարկ, ՈԱ գործընթացներին արտաքին շահակիցների ներգրավվածությունը ունի զարգացման կարիք , ԵՊԲՀ-ում որակի ներքին ապահովման գործընթացները գտնվում են հիմնականում պլանավորման և իրականացման փուլում, ոչ բոլոր գործընթացների արդյունավետության գնահատումներ են իրականացվում, հետագա բարելավումների նպատակով հարցումների արդյունքները չեն քննարկվում մասնակիցների հետ, հավաքագրված տեղեկատվությունը չի ծառայում կառավարչական որոշումների կայացման համար, որակի մշակույթի բարելավմանը ու լավագույն փորձի կուտակման և տարածման առումով համալսաանը դեռևս ունի շատ անելիքներ, փորձագիտական խումբը գտնում է, որ համալսարանը չի բավարարում Չափանիշ 10-ի պահանջներին:

Եզրակացություն՝ Փորձագիտական խումբը ԵՊԲՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 10-ի պահանջներին գնահատում է **անբավարար:**

Խորհրդատվություններ.

1. Մշակել որակի ապահովման համալիր քաղաքականություն և կանոնակարգել գործընթացները, բազմազանեցնել որակի ապահովման մեխանիզմներն ու գործիքները՝ ծածկելով համալսարանի գործունեության բոլոր ոլորտները:
2. Մշակել և կիրառել ԵՊԲՀ-ի բոլոր գործընթացների որակի գնահատման ցուցիչներ և պարբերաբար վերլուծել գործընթացների արդյունավետությունը՝ նպաստելով լավագույն փորձի դուսրբերմանը և տարածմանը:
3. Մշակել որակի ապահովման գործընթացներին շահակիցների մասնակցության մոտիվացիայի բարձրացման մեխանիզմներ՝ մեծացնելով նրանց պրոակտիվ ներգրավվածությունը որակի ապահովման գործընթացներում:
4. Վերանայել որակի ապահովման գործընթացների ռեսուրսներով ապահովման և պլանավորման համակարգը:
5. Ներդնել տարբեր վերլուծությունների արդյունքների և խնդիրների՝ շահակիցների խմբերի հետ քննարկելու պրակտիկա որպես որակի մշակույթի տարածմանը նպաստող մեխանիզմ:
6. Բարելավել ԵՊԲՀ-ի կայքը՝ համալսարանի գործունեության թափանցիկության ապահովման և գործընթացների որակի վերաբերյալ համապարփակ տեղեկատվության տրամադրման առումով:
7. Ապահովել ԵՊԲՀ բոլոր գործընթացներում ՊԻԳԲ շրջափուլի իրականացումը:

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

ՉԱՓԱՆԻՇ	ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
1. Առաքելություն և նպատակներ	**Բավարարում է**
2. Կառավարում և վարչարարություն	**Բավարարում է**
3.Մասնագիտության կրթական ծրագրեր	**Բավարարում է**
4. Ուսանողներ	**Բավարարում է**
5.Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ	**Բավարարում է**
6. Հետազոտություն և զարգացում	**Բավարարում է**
7. Ենթակառուցվածք և ռեսուրսներ	**Բավարարում է**
8.Հասարակական պատասխանատվություն	**Բավարարում է**
9. Արտաքին կապեր և միջազգայնացում	**Բավարարում է**
10. Որակի ներքին ապահովման համակարգ	**Չի բավարարում**

04 հոկտեմբեր 2019թ.

Մարիամ Մոմջյան

Փորձագիտական խմբի ղեկավար

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Մարիամ Մոմջյան- 2004 թվականին ավարտել է Երևանի պետական տնտեսագիտական ինստիտուտի Ընդհանուր տնտեսագիտական ֆակուլտետը Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում մասնագիտությամբ: Մինչև 2008 թվականը եղել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Միկրոէկոնոմիկայի և ձեռնարկատիրական գործունեության կազմակերպում ամբիոնի հայցորդ, նույն տարում ստացել է Տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան: 2012-ին ստացել է դոցենտի գիտական կոչում: 2009-2013թթ. դասավանդել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում, 2013-ի սեպտեմբերից մինչ այժմ՝ Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանում և 2014-ի սեպտեմբերից մինչ այժմ՝ Երևանի պետական համալսարանում: Հեղինակ է մի շարք հոդվածների, համահեղինակ է 1 ուսումնական ձեռնարկի: 2018թ.-ից մինչ այժմ ՀՀ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի սակագնային քաղաքականության վարչության պետի տեղակալն է:

Կարեն Թոչունյան-2011թ.-ին ավարտել է Երևանի պետական համալսարանաի Կենսաբանության ֆակուլտետը: 2011-2014թթ. սովորել է ԵՊՀ ասպիրանտուրայում: 2013-ին ստացել է կենսաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան, 2017-ին կենսաբանական գիտությունների դոկտորի գիտական աստիճան: 2015թ.-ից եղել է ԵՊՀ Կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի ասիստենտ է, 2019-ից՝ դոցենտ: 2015թ.-ից ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի կենսաբանության գիտահետազոտական ինստիտուտի փոխտնօրենն է, կենսաբանության ԳՀ ինստիտուտի մանրէաբանության, կենսաէներգետիկայի և կենսատեխնոլոգիայի լաբորատորիայի գիտաշխատող: Հեղինակ է ավելի քան 70 գիտական աշխատությունների:

Ֆարիդա Նուրմանբետովա-1986 թվականին ավարտել է Ղազախստանի Ալմաթայի պետական բժշկական ինստիտուտը: 1998 թվականին դարձել է բժշկական գիտությունների թեկնածու, 2006-ին՝ բժշկական գիտությունների դոկտոր: Բժշկական կրթության համաշխարհային ֆեդերացիայի (WFME) խորհրդական է և Ղազախ-ռուսական բժշկական համալսարանի խորհրդատու:

Արչիտ Պանդիտ- Հնդկաստանի Քաղցկեղի բուժման Մաքս ինստիտուտի կլինիկական ղեկավար է և գլխավոր խորհրդական: Մասնագիտացված է լաբարոսկոպիկ և ռոբոտային վիրաբուժական օնկոլոգիայի գծով: 2013-2014թթ. եղել է Դելիի Մեմորիալ հիվանդանոցի խորհրդատու վիրաբուժական օնկոլոգիայի գծով: Այժմ Հնդկաստանի Քաղցկեղի բուժման Մաքս ինստիտուտի կլինիկական ղեկավար է և գլխավ որ խորհրդական:

Իվետա Արզումանյան- Հայաստանի ազգային ագրարային համալսարանի Պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետի Կաթի, կաթնամթերքի, մանկական և ֆունկցիոնալ սննդի տեխնոլոգիայի բաժնի, բակալավրիատի 3-րդ կուրսի ուսանողուհի է: 2018 թվականին մասնակցել է ՌԱԱԿ Ուսանողության ձայն նախագծի ուսանող փորձագետների վերապատրաստման դասընթացին:

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

20.05 - 23.05. 2019թ.

	20.05.2019 թ.	*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*
1.	Հանդիպում ԵՊԲՀ ռեկտորի հետ	09:30	10:10	40 րոպե
2.	Հանդիպում ԵՊԲՀ պրոռեկտորների հետ	10:20	11:20	60 րոպե
3.	Հանդիպում ինքնավերլուծությունն իրականացրած աշխատանքային խմբի ներկայացուցիչների հետ	11:30	12:10	40 րոպե
4.	Հանդիպում ֆակուլտետների դեկանների հետ այդ թվում ռազմաբժշկական և օտարալեզու ուսուցման	12:20	13:10	40 րոպե
5.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:20	14:20	60 րոպե
6.	Հանդիպում կլին. օրդինատորների հետ	14:30	15:10	40 րոպե
7.	Հանդիպում ԵՊԲՀ գործատուների ներկայացուցիչների հետ	15:20	16:20	60 րոպե
8.	Հանդիպում ԵՊԲՀ-ի շրջանավարտների ներկայացուցիչների հետ	16:30	17:30	60 րոպե
9.	Փորձագիտական խմբի փակ հանդիպում և փաստաթղթերի ուսումնասիրություն	17:40	18:40	60 րոպե

	21.05.2019 թ.	*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*
1.	Հանդիպում Հոգաբարձուների խորհրդի ներկայացուցիչների հետ	09:30	10:10	40 րոպե
2.	Հանդիպում պրակտիկայի պատասխանատուների հետ	10:20	11:00	40 րոպե
3.	Հանդիպում ամբիոնների վարիչների ներկայացուցիչների հետ (10-12 հոգի)	11:10	12:10	60 րոպե

4.	Հանդիպում դասախոսական կազմի ներկայացուցիչների հետ (10-12 հոգի)	12:20	13:20	60 րոպե
5.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:20	14:20	60 րոպե
6.	Այց դեկանատներ և ամբիոններ /փաստաթղթերի ուսումնասիրություն/	14:30	16:00	90 րոպե
7.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	16:10	18:10	120 րոպե

	22.05.2019թ.	*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*
1.	Հանդիպում Ուսանողական խորհրդարանի, ՈՒԳԸ և Իրավաբանական կլինիկայի ներկայացուցիչների, Մանդատային հանձնաժողովի ուսանող ներկայացուցիցչի հետ	9:30	10:10	40 րոպե
2.	Հանդիպում ուսանողների ներկայացուցիչների հետ (10-15 հոգի)	10:20	11:20	60 րոպե
3.	Հանդիպում միջազգային ուսանողների ներկայացուցիչների հետ (10-12 հոգի)	11:30	12:10	40 րոպե
4.	Հանդպում Կրթության Որակի գնահատման և ապահովման կենտրոնի աշխատակիցների հետ	12:20	13:20	60 րոպե
5.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:30	14:30	60 րոպե
6.	Հանդիպումներ ԵՊԲՀ ստորաբաժանումներում (Կարիերայի կենտրոն, Գիտահետազոտական կենտրոն, Գիտության վարչություն, Կլինիկական աշխատանքների կազմակերպման վարչություն, Միջազգային համագործակցության բաժին, Օտարերկրացի ուսանողների հետ տարվող աշխատանքների բաժին, Հասարակության հետ կապերի բաժին,	14:40	15:50	100 րոպե

	Ռազմաբժշկական կրթագիտական կենտրոն)			
7.	Հանդիպում ուսումնամեթոդական խորհուրդների նախագահների հետ	16:00	16:40	40 րոպե
8.	Փորձագիտական խմբի փակ հանդիպում և փաստաթղթերի ուսումնասիրություն	16:50	19:00	130 րոպե

	23.05.2019թ.	*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*
1.	Ռեսուրսների դիտարկում (լսարաններ, լաբորատորիաներ, կաբինետներ, գրադարան, մարզասրահ, բուժկետ, բուֆետ), այց կլինիկաներ, պրակտիկայի դիտարկում	9:00	11:20	140 րոպե
2.	Հանդիպում փորձագիտական խմբի կողմից ընտրված կազմի հետ	11:30	12:10	40 րոպե
3.	Բաց հանդիպում փորձագիտական խմբի հետ	12:20	12:50	30 րոպե
4.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:00	14:00	60 րոպե
5.	Փորձագիտական խմբի փակ հանդիպում և փաստաթղթերի ուսումնասիրություն	14:10	16:50	160 րոպե
6.	Ամփոփիչ հանդիպում ԵՊԲՀ ղեկավար կազմի հետ	17:00	17:30	30 րոպե

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

N	Փաստաթղթի անվանում	Չափանիշ
1.	Համալսարանի ռեկտորի «Ծրագրային ելույթ» 2016թ. դեկտեմբերի 24-ի ԵՊԲՀ Հոգաբարձուների խորհրդի նիստին (Արձանագրություն №9)	1
2.	Ռեկտորի հաշվետվություններ վերջին 3 տարվա համար	1
3.	Աշխատաշուկայի պահանջների ուսումնասիրություն	1
4.	Ամբիոնների հաշվետվություններ վերջին 3 տարիների համար	1
5.	Ֆակուլտետային խորհուրդներում դեկանների հաշվետվություններ վերջին 3 տարիների համար	1
6.	Ներքին և արտաքին շահակիցների շրջանում իրականացրած ուսումնասիրությունների հաշվետվություններ, վերլուծություններ և հետագա գործողությունների պլաններ	1
7.	ՌԾ գործողությունների պլան	1
8.	Համալսարանի պրոռեկտորների հաշվետվություններ վերջին 3 տարիների համար	1
9.	Առարկայական և համալսարանական մեթոդական խորհուրդների հաշվետվություններ	1
10.	Ստորաբաժանումների և հանձնաժողովների աշխատանքային պլանները վեջին 3 տարիների համար	1
11.	Պաշտոնի անձնագրեր	2
12.	Համալսարանի գործունեության ներքին և արտաքին գործոնների համալիր վերլուծության	2
13.	Համալսարանի կրթական, գիտական գործունեության, ինչպես նաև տրամադրվող բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների համալիր և SWOT վերլուծություն	2
14.	«Ապագա բժիշկը» պաշտոնաթերթի օրինակներ	2
15	Համալսարանի գործունեության գնահատման առանցքային ցուցանիշներում (ԳԱՑ)	2
15.	ՈՒՄԽ արձանագրություններ կապված կրթական ծրագրերի, առարկայական նկարագրերի ձևաչափերի, դասավանդման և գնահատման մեթոդների փոփոխությունների հետ	3
16.	Կրթության որակի գնահատման և ապահովման կենտրոնի կողմից իրականացված հարցումներ և հարցման արդյունքներ ուսանողների, շրջանավարտների և գործատուների շրջանում, որոնք նվիրված են դասավանդման արդյունավետ մեթոդների ընտրությանը ֆոկուս-խմբային հանդիպումների արձանագրություններ	3
17.	Ուսումնամեթոդական կոնֆերանսի նյութերը,	3
18.	Կենտրոնների սարքավորումների ընտրությունը պայմանավորված է եղել շրջանավարտների և գործատուների շրջանում անցկացված հարցաթերթային հարցումների արդյունքներով բացահայտված և մասնագիտական հանրության հետ հանդիպումների ընթացքում	3

	ճշգրտված առավել խնդրահարույց և անհրաժեշտ գործնական հմտությունների ցանկով (տես հարցախույզերի արդյունքները):	
19.	Համալսարանի Ուսումնաեթոդական խորհրդի որոշումներով հաստատված բազմաբաղադրյալ գնահատման համակարգերի նկարագրեր (ՌԻՄԽ-ի որոշումներ):	3
20.	Թեստերի կազմման ուղղությամբ ամբիոնների թեստերի պատասխանատուների մասնագիտական վերապատրաստումներ (տե՛ս համապատասխան ժամանակացույցը):	3
21.	Գնահատման համակարգի վերաբերյալ բուհի Որակի գնահատման և ապահովման կենտրոնի կողմից իրականացվում են պլանային (յուրաքանչյուր կիսամյակում) և ըստ անհրաժեշտության հարցումների արդյունքներ և ֆոկուս-խմբային հանդիպումների արձանագրություններ:	3
22.	Պիլոտային բազմաբաղադրյալ գնահատման համակարգերի գնահատման արդյունքներով ՌԻՄԽ-ի կողմից ընդունվում է լրամշակման, հաջողման կամ չեղարկման վերաբերյալ որոշում՝ ՊԻՄԲ սկզբունքների կիրառմամբ (տես ՌԻՄԽ-ի որոշումներ):	3
23.	Բուհի գնահատման բարեփոխումների վերաբերյալ ուսանողների գնահատումներ և դրանց արդյունքներ:	3
24.	Կրթական ծրագրերի մշտադիտարկման, արդյունավետության գնահատման, բարելավման ճանապարհային քարտեզը:	3
25.	«Իրավաբանական կլինիկայի» և «Կարգապահական կոմիտեի» հետ հանդիպումների արձանագրություններ վերջին 3 տարիների համար:	4
26.	Ֆակուլտետում գործնական հմտությունների դասավանդման ծավալի, ձևի և ստացած գիտելիքների վերաբերյալ հարցման արդյունքների վերլուծությունը:	4
27.	«Մանդատային հանձնաժողովի» արձանագրությունները վերջին երեք տարիների համար	4
28.	Իրավաբանական կլինիկայի արձանագրությունները վերջին երեք տարիների համար	4
29.	Կարգապահական կոմիտեի արձանագրությունները վերջին երեք տարիների համար	4
30.	Բողոքարկման հանձնաժողովի արձանագրությունները վերջին երեք տարիների համար	4
31.	Դասախոսների վերապատրաստման աշխատաժողովների արձանագրությունները	5
32.	Բենչմարքինգ-վերլուծության արդյունքներ 3 մակարդակով՝ 1 ինստիտուցիոնալ և 2 մասնագիտական (Human Biological Sciences, Clinical Medicine):	6
33.	Ամբիոնորի վարիչների ցանկ, ովքեր ունեն 3 բարձր ազդեցության գործոն ունեցող ժողովածուներում տպագրած հոդվածներ	6

34.	Հաշվետվողականության կարգ	8
35.	Որակի ապահովման ներքին համակարգի ձեռնարկ	10
36.	Քննական թեստերի որակի գնահատման բանաձևերի համակարգ	10
37	Հետազոտությունների գործիքակազմերը և վերլուծության արդյունքներ և պլանավորված աշխատանքները	10

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

1. «Արմենիա» հանրապետական բժշկական կենտրոնի գինեկոլոգիական բաժանմունք (Քննության դիտարկում)
2. Միքայելյան վիրաբուժության ինստիտուտ (Սիմուլյացիոն կենտրոն, ցիկլի քննության դիտարկում, վիրահատությանը ուսանողների մասնակցության դիտարկում)
3. Լսարաններ
4. Դեկանատներ (Ընդհանուր բժշկության ֆակուլտետ, Հանրային առողջության ֆակուլտետ, Ստոմատոլոգիական ֆալուլտետ, Դեղագիտական ֆակուլտետ, Ռազմաբժշկական ֆակուլտետ, Օտարերկրացիների ուսուցման դեկանատ)
5. Ամբիոններ
6. Ստորաբաժանումներ (Հասարակության հետ կապերի բաժին, Միջազգային համագործակցության բաժին, Օտարերկրյա ուսանողների հետ տարվող աշխատանքների բաժին)
7. Ստոմատոլոգիական կրթության գերազանցության կենտրոն
8. Լաբորատորիաներ
9. Համակարգչային լսարաններ
10. Թանգարան
11. Ճաշարան
12. Գրադարան
13. Էլեկտրոնային գրադարան
14. Ընթերցասրահ

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Հաստատվել է
ՀՊՀ Հոգաբարձուների
խորհրդի 21.01.2017 թվականի
թիվ 10 որոշմամբ
նախագահ Ա.Գ.Աշոտյան

ԵՊԲՀ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՌԵԿՏՈՐ

ՌԵԿՏՈՐԱՏ

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

ՊՐՈՌԵԿՏՈՐ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՇԽ ԳԾՈՎ

-Ուսումնամեթոդական վարչություն

-Ընդհանուր բժշկության ֆակուլտետ

-Ստոմատոլոգիական ֆակուլտետ

-Դեղագիտական ֆակուլտետ

-Հանրային առողջության ֆակուլտետ

-Օտարալեզու ուսուցման դեկանատ

-Ռազմաբժշկական

ՀԵՏԲՈՒՀԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

ՊՐՈՌԵԿՏՈՐ

ՀԵՏԲՈՒՀԱԿԱՆ ԵՎ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԾՈՎ

-Հետբուհական ուսումնական բաժին

-Հետբուհական և շարունակական կրթության ֆակուլտետ

ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՊՐՈՌԵԿՏՈՐ

ԳԻՏՈՒԹՅԱՆ ԳԾՈՎ

-Գիտության վարչություն

-Գիտահետազոտական կենտրոն

-Խմբագրություններ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

ՊՐՈՌԵԿՏՈՐ

ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳԾՈՎ

-Կլինիկական աշխատանքների կազմակերպման վարչություն

-Հերացիթիվ հիվանդանոցային համալիր

-Մուրացան հիվանդանոցային

ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ՊՐՈՌԵԿՏՈՐ

ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳԾՈՎ

-Էկոնոմիկայի բաժին

-Ինֆորմացիոն և հաղորդակցության տեխնոլոգիաների բաժին

-Աշխատակազմ

-Հաշվապահական բաժին

-Կրթության որակի գնահատման և ապահովման կենտրոն

-Իրավաբանական բաժին

-Ռազմաբժշկական կրթագիտական կենտրոն

-Հերացի ավագ դպրոց

-Քոլեջ

-Ընդհանուր բաժին

ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ

ՊՐՈՌԵԿՏՈՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԻ ԳԾՈՎ

-Միջազգային համագործակցության բաժին

-Օտարերկրացի ուսանողների հետ տարվող աշխատանքների բաժին

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԴՈԳ- դասախոսի որակավորման գնահատման

ԴՈՒԱ հետազոտություն- «Դասախոսը ուսանողի աչքերով» հետազոտություն

ԵՊԲՀ- «Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամ

ՄԿԾ- մասնագիտական կրթական ծրագիր

ՄՈՒՀ- մասնագիտական ուսումնական հաստատություն

ՈԱ- որակի ապահովում

ՈԱԱԿ - «Մանագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամ

ՈԱՇ- որակավորումների ազգային շրջանակ

ՌԾ- ռազմավարական ծրագիր

ՈՒԳԸ- ուսանողական գիտական ընկերություն